




*Puapua*





# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Գ. ԱՃՆՄԵԱՆ . . . . .	Ե՞րբ...
Մ. ՀԱՃՆԱՆ . . . . .	Երգը, որ կը դողար իր մէջ
» . . . . .	Ապաստան
» . . . . .	Քաղաքացի
ԼՆՈՒ ԿԱՄՍԱՐ . . . . .	Հոգու գուակ
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ . . . . .	Աստանդակամ կարտով
» . . . . .	Վերայանում
» . . . . .	Հոգիներու վաղամեռ
ՇԱՀԱՆԳՈՒԽՑ . . . . .	Պատերազմը... Աղբիկները... Հայրերը
Ժ. Խ. ԺՊՐԱՆ . . . . .	Մարգարէն
* * * . . . . .	Վասիլի Աֆսիոնովի պարագան
Վ. ԱՔՍԻՈՆՈՎ . . . . .	Թէ ինչպէս մարդիկ «Արտածման ապրանք» կը գտնան հորհրդային Միութեան մէջ
Է. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ . . . . .	Վասիլի Ակսիոնովը
Ա. ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ . . . . .	Հայ յեղափոխական շարժումը 1890էն 1903
* * * . . . . .	Կողոպուտի փորձի մը պատմութիւնը
ԿԱՐԼԷՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ . . . . .	Նամակ Ռիչըրտ Մարէֆ հրատարակչութեան
ԲԱՊԸՐԹ ՀԻԻՃՍ . . . . .	Դառն Աֆիլէսի յաղթանակը
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ . . . . .	Մ. Իշխանի «Քատրախաղեր» հատորը
Ն. ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ . . . . .	«Երկու սերունդ» հատորը
* * * . . . . .	Նշմարներ
* * * . . . . .	Մշակութային լուրեր



# Բազմ

## ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Կ. ՏԱՐԻ. ԲԻՒՅ. ԵՌԱՆԻՍ. 1981. ԳԵՐԱԿ

### Գ. Ա Ճ Ե Մ Ե Ա Ն

### Ե՞ Ր Բ...

Այո՛, խնդալը կը վայլէ ինձի, որովհետեւ ես ալ մարդ եմ: Ես ալ խնդալու իրաւունք ունիմ եւ կ'ուզեմ խնդալ երբեմն: Զարմանալի չէ: Թէեւ դուն զարմացար ու մեծ գտնումանկութեամբ բտիր.

— Խնդալը որքա՞ն կը վայլէ ինձի:

Պէտք է խոստովանիմ, որ երկար ժամեր մտածեցի յետոյ այդ մասին, փորձելով բնութիւնը ակնարկութիւնդ: Թափանցել անոր իսկական իմաստին եւ հասկնալ, թէ ի՞նչը բնի տուաւ քեզի ատկա: Պատահականօրէն արտայայտուած պարզ խօսք մըն էր. թէ անակնկալ ներհայեցողութեամբ կրցած էիր ինձմէ ներս կարգալ գաղտնիք մը, գոր ես չեմ կրցած լուծել ցարդ: Ուրախութեամբ կարօ՞տը տեսած էիր արդեօք խնդացող աչքերուս մէջ, թէ տըլտըլութիւնը անոնց:

Ատկէ ետք կեցայ հայելիին դիմաց եւ փորձեցի տեսնել քու տեսածդ, բայց չճանչցայ զիս դիտող մարդը: Անծանօթ չէր, գիտեմ, որովհետեւ զինք գտնելու Օպտատկով կանգնած էի հայելիին դիմաց ու կը խաղայի այդ խաղը: Գիտէի, թէ ինձ պէտք է ըլլար հոն սպասողը, եւ ուրեմն՝ կասկածներ չունէի: Բայց չճանչցայ զինք: Ցամնայնդէպս, ես ալ կը փորձեմ տակաւին հասկնալ այդ երեւոյթը եւ մեկնել գայն: Եթէ յաջողիմ, լուծած կ'ըլլամ ճանաչման գաղտնիքը, որուն յայտնութիւնը բոլոր դուն:

Պատահա՞ծ է երբեք, որ չճանչնա դուն քեզ: Ո՛չ միայն հայելիին մէջ դուն քեզ դիտած ատեն, այլեւ՝ իրականութեան մէջ: Ես՝ ի՞նչ գգացած ես այդ պահուս: Ի՞նչ խորհած ես: Ու չե՞ս վախցած: Անկեղծօրէն՝ ես վախցայ, ու կը վախեամ տակաւին: Սովորական վախի մասին չէ խօսեմ. ատկեւ վախոց քաղած եմ մտնկութեանս հետ՝ երկար տարիներ առաջ: Տրամաբանու-

digitized by A.R.A.R. @ 2011

թիւն կոչուածը սպանեա՞ծ է վախը իմ մէջ — բարեբախտաբար : Բայց միւսը , այն՝ որուն մասին կը խօսիմ , գիշերները կ'արթնցնէ զիս յանայն ու կը ցնցէ հոգմաւոր ծառի մը տէս : Ունայնութեան սարսուփն է ստիկա , որ կը վերադառնայ ինծի միշտ ու կը սպառնայ : Ինչպէս եիմա , երբ նստած՝ բռն կատարած յայտնութեան գաղտնիքը կը փարձեմ լուծել :

Արգարիւ , ինչո՞ւ կը խնդամ ես , երբ կը խնդամ : Եւ՛ ինչո՞ւ չեմ խնդար սովորաբար :

Այս հարցումը ուղղեցի հայելիէն ինծի ճայող մարդուն , երբ անդրադարձայ , որ ես պիտի չկարենամ պատասխանել ւնոր : Գիտումնաւոր կերպով ու բարձրաձայն խնդացի , որպէսզի բռնեմ միտքը ակնարկութեանը , այսինքն՝ ըմբռնեմ գայն :

— Տես , տե՛ս , — ըսիր նոյն օրը , — Եթէ միայն կարենայի մկարել այդ խնդուքը : Բռնել գայն ու յանձնել պատաստին , որպէսզի չմեռնի , չանհետանայ :

- Նկարել գիտե՞ս , — հետաքրքրուեցայ՝ նիւթը փոխելու յոյսով :
- Երանի : Եթէ գիտե՞ս , անմիջապէս գործի կ'անցնէի , փոխանակ խօսելու : — Ու նկատելով , որ ապշահար ճեզ կը դիտէի , հարցուցիր մտահոգաւած . — Ինչո՞ւ չբացար :

- Ըսել կ'ուզես , թէ լուրջ չէի՞ մինչեւ հիմա :
- Բայց ո՞չ : Ճի՛շդ ատոր համար է , որ խնդալը կը վայլէ ճեզի :
- Հակասական չէ՞ :

— Երբե՛ք : Որովհետեւ ընդհանրապէս լուրջ ես ու վերապահ , դէմքիդ վրայ ժպիտի մը ճշոյլմ իսկ կը փոխէ ճեզ , կը կենդանացնէ : Բոլորովին նոր , տարբեր մարդ մը ի յայտ կու գայ մէջդ : Իրաւ անձը թերեւս , այսինքն՝ դուն :

— Եւ դուն ա՞յս սեճը կը նախընտրես . — հարցուցի ես ամենայն լըրջութեամբ :

- Նախընտրութեան հարց չկայ : Դուն ա՛յդ անձն ես , եւ բնականաբար իսկական անձդ է , որ զիս կը հետաքրքրէ : Միւսը դուն չես :
- Ի՞նչ պէտք է բնել :
- Կրնաս ասկէ ետէ խնդալ , — ժպտեցար բարութեամբ , — գոնէ երբեմն :

- Ինչո՞ւ :
- Որպէսզի չկորսնցնեմ ճեզ : Ներադուրսին : Որպէսզի չշփոթիմ եւ . . . բայց ճիշդ է , չկորսուելու միակ կերպն է : Միւսը դուն չես՝ ինչպէ՞ս կ'ակնկալես , որ ճանչնամ գայն :
- Ըստ երեւոյթի , կը ճանչնաս արդէն : Այլապէս այսքան ինքնավըտտախօսէն պիտի չխօսէիր :
- Ոչ թէ կը ճանչնամ : Ատիկա տեսնուածն է . կը տեսնեմ գայն , այո՛ , սակայն ուրիշ անձ մըն է , անծանօթ մը , գոր չեմ ճանչնար : Անծանօթը ստեմանումով իսկ ծանօթ չըլլալ կ'ենթադրէ , այսինքն՝ չճանչցուած :
- Իսկ երկրա՞րդը , այսինքն՝ խնդացողը , կը ճանչնա՞ս :
- Բարեբախտաբար :
- Ես չեմ ճանչնար սակայն :

— Որ նիշդ է : Այդ խնդացող մարդը չեմ ճանչնար ես , չե՛մ կրցած ճանչնալ : Այս չի նշանակեր , թէ խնդալ չեմ գիտեր կամ չեմ խնդար : Ընդհակառակն , երբեմն այնպէ՛ս կը խնդամ , որ ես իսկ կը գարմանամ : Ինչպէս այն օրը , երբ նկատեցիր այն , որ խոյս տուած է ինձմէ՛ մինչեւ այսօր : Մտերմութեան մէջ բոլորովին տարբեր մարդ մըն եմ , գիտե՛մ — ազատ , անկաշկանդ , սրբախ եւ բնական : Մտերմութիւնը կ'ազատագրէ բնականաբար ,

կը վերացնէ, կը բիրեղացնէ մարդը, որ այլապէս իր պատեանին մէջ պահ-  
ւրտած անեղծուածային կենդանի մըն է: Ու հագուադէպօրէն դուրս կու գայ  
ան այդ պատեանէն եւ կը թաշի աշխարհին իր հարազատ աչքերով: Եւ միայն  
այն ատե՛ն կը մանչցուի ան, որովհետեւ չի խաբուիր ու չի խաբեր՝ նման-  
րինակ պայմաններու մէջ:

Հիմա կ'ըմբռնեմ կամ գէթ կ'ենթադրեմ, թէ ի՞նչ տեսար այդ գիշեր,  
երբ կը հաղորդուէինք մտերմութեան մէջ: Որովհետեւ ազատ եւ անկաշկանդ  
մարդը, որ անպայմանօրէն ուրախ է նաեւ, զազանիքներ չունի, չի՛ կրնար  
ունենալ: Իսկապէս ազատ կամ ազատագրուած մարդը կը մտնի մերկ պտը-  
տող արարածի մը, որ ծածկելիք չունի. իր մերկութիւնը ծածկելու կամ ա-  
մբշնալու պատճառ չունի: Այդ մեկութիւնը տեսար իմ մէջ հաւանաբար —  
ազատագրուած մարդը — որ միայն մտերմութեան մէջ կը յայտնուի ու կը  
պտըտցնէ իր իսկական անձը: Որ ուրախ կ'ըլլայ անպայմանօրէն, այսինքն՝  
պարզ, անմեղ ու միաբնիկ: Անկեղծ: Կունենայ անկեղծութիւն մը, որ կը  
գեղեցկացնէ իր անձը. ո՛չ թէ արտաքին, ֆիզիքական մտք անոր, այլ՝ բուն  
անձը, որ ճիշդ չէ եւ մաս չի կազմեր միութեան աշխարհին:

Արդեօք այդ գեղեցկութիւնը տեսար: Կրցա՞ր տեսնել: Ո՛չ թէ իմ կամ  
անձիս գեղեցկութիւնը: Այլ բո՛ւն իսկ գեղեցիկը, գաղափարը անոր, նշմար-  
տութիւնը, որ բացարձակ է: Եւ այդ իսկ պատճառով ստորագիլի կամ յատ-  
կանիչ չ'ընդունիր, չ'ունենար: Չունի՛ր: Որովհետեւ մարմին կամ ֆիզիքա-  
կան բովանդակութիւն չունի, եւ ուրեմն՝ չի կրնար իմ, բաւ կամ ռեւէ մար-  
դու մէջ ըլլալ: Այլ միայն ինքն իր մէջ: Ինքն իրմով եւ ինքն իր մէջ կատար-  
եալ եւ յաներժական:

Եթէ այս էր տեսածդ, երանելի, բախտաւոր մարդ մը կրնաս համա-  
բել դուն էեզ: Իսկ եւ կրնամ նախանձիլ միայն էեզի եւ անչի եւս փնտռել  
մտերմութիւնդ: Այսինքն՝ սիրելի էեզ: Սէրը այս չէ՞ միթէ: Սիրելը մտեր-  
մութիւն չէ՞: Կամ՝ մտերմութեան մէջ ազատագրուելու, ուրախանալու ճա-  
նաչալու կարողութիւն: Անանձնականութիւն:

Եւ ուրեմն՝ արտօնէ՛, որ նախանձիլ էեզի եւ փնտռել մտերմութիւնդ,  
այսինքն՝ սիրելի էեզ, որպէսզի եւ եւս մասշիմ գեղեցկութեան եւ ազատա-  
գրուելու: Մասշիմ ուրախանալով ճայնաչալու կարողութեան: Անանձնակա-  
նութեան:

Ի՞նչ փոյթ, որ կին եւ եւ օժտուած իգական որոշ յատկանիշերով կամ  
առանձնաշատութիւններով: Եւ այդ իմաստով՝ տարբեր եւ ինձմէ — ֆիզի-  
քայէ եւ բնաստական կազմուածքով: Ի՞նչ փոյթ: Ի վերջոյ ռեւէ կին չեւ  
ինձի համար, ոչ իսկ ռեւէ մայր: Եւ՝ այս կինը կամ մարդը չէ, որ կ'ուզեմ  
սիրել, այլ՝ էեզ: Իսկ դուն մարմինդ չես: Այլապէս պիտի չկարենայիր մաս-  
շիմ գեղեցկութեան: Պիտի չկարենայիր վերծանել խնդացող մարդուն ինք-  
նութիւնը ու նանչնալ գայն:

Եւ ի՞նչ փոյթ, որ շտեմեմ էեզ երբեք: Տեսնելով չէ, որ պիտի տես-  
նեմ էեզ, այսինքն՝ ոչ թէ աչքերովս: Անոնք արտաքինը կը տեսնեն միայն,  
որովհետեւ ստեղծուած են ֆիզիքական յատկանիշ ունեցող պատկերներ ճը-  
կարելու համար միայն: Իսկ եւ էեզ նկարելու պէտք չունիմ: Անձը չի նկար-  
ւիր: Չի տեսնուիր: Ինչպէս չի նկարուիր միտքը, մտածումը: Չշմարտու-  
թիւնը: Հետեւաբար էեզ տեսնելու այ պէտք չունիմ: Այսինքն՝ անուն եւ հա-  
ցէ ունեցող աղջիկը, որ կը ներկայացնէ էեզ:

Բայց ե՞րբ պիտի տեսնեմ էեզ:

ԳԷՈՐԳ ԱՃԵՄԵԱՆ

ՊԵՐՈՒՄ, Փետրուար 1981

Մ. Հ Ա Ճ Ե Ա Ն

**ԵՐԳԸ, ՈՐ ԿԸ ԴՈՂԱՐ ԻՐ ՄԷՋ**

Կանայազուրկ դաշտանկարի մը մարդ ստուերին մէջ,  
 Սովակար աւ կարմրած ազմուկներ իրարմէ կը փայտչին:  
 Մաղիկներ կը կախարդուին անծանօթ խռովներէ  
 Ու թերթերուն մէջ ծաւարած նար մտածումներ կը բաժան օդին:  
 Նայածած մը կը շեղի աւ կ'իյնայ ցօղաթուրմ տերեւի մը վրայ,  
 Երբ աղջիկ մը կը ծաղկանայ բուրումնաւէտ երազի պէս:  
 Մեղմ հով մը զիրկ մը կը կարգէ իր թռչկոտուն սաւանին մէջ  
 Ու կը ծրարէ ամէն ինչ հոն եւ կը հեռանայ անտարբեր:  
 Տղայ մը պշուցեալ՝ կը փնտռէ պատճառը այն դողին,  
 Որ հիւսա կ'երգէ իր մկաններուն մէջ յարանուն թափով:  
 Նար հայտածներ կը ծաղկին աղջկան ժպիտներուն շուրջ:  
 Նար կոկաններ կը բացուին եւ ցօղը կը սպիանայ տերեւի մը վրայ:  
 Պատկեր մը կը կարմուխ կանաչով, կարմիրով աւ սարսուռով:  
 Արեւովառ հրանիւթը կը հրդեհէ գայներն աւ բայերը:  
 Անուն մը կը փնտռուի եեշտօրօր այն հրաշունչ մղումին,  
 Որ տղուն բագուկները կը նետէ միսերու գաղջութեան:  
 Օդն է, կը լեցուի խնկաբայր սարսուռներով աւ տաք լոյսով,  
 Ու ծաղկաներու փակ բաժակները կը բացուին եեշտանքին:  
 Կարմիրներ, կապալտներ, ներմակներ աւ դեղիններ կը կուտին  
 Ի խնդիր կարիլ մը լուսեղէն միջոցի, որ կը խուսափի:  
 Փայլակներ կը յայտնուին անհեթեթ մտածումներու միացած:  
 Մառնու աւիշները կ'ալեկոծին կոճղելուն մոթթին տակ:  
 Եւսարուն շուրթներ տարրու կը փնտռեն իրարու մէջ,  
 Եւ երեկան կ'իջնէ աննշմարելի շամանդադով մը զարդարուած,  
 Կաւ գայ մեղմեյ հրատապ յորձեօրն աւ դողերը եեշտովառ:  
 Կը հատնի ցաւատանջ աւ անլուելի երգն ալ ծաղկեայ բոժոժներուն,  
 Մինչ կը եայի վերջին ակամայ զիմադրութիւնը, որ կը սուսանէր՝  
 Անհամբեր տղան եւ շփաթած աղջկան միսերուն վերեւ:  
 Սէրը երգուեցաւ դարձեալ բարի նիւղերու ամպեղանիին տակ,  
 Բայց դաշտանկարին կանայազուրկ աւ մարդ ստուերին մէջ  
 Սովակարի աւ կարմրախանձ ազմուկներէ պաշտպանուած՝  
 Մաղիկները կախարդուեցան անծանօթ, բայց չեմ խռովներէ,  
 Իրենց թերթերէն դէպի երկինջ նետելով նար մտածումներ:  
 Հովուն թռչկոտուն սաւանին մէջ կը ծրարուի երեկան,  
 Երբ վերջապէս տղան գտաւ երգը, որ կը դադար իր մէջ:  
 ...Ու երգեց, երգեց...

**Ա Պ Ա Ս Ս Ա Ն**

Բարի՛, բարի՛ ցերեկներու անտարբեր ազնուկին մէջ տեղդոտ՝  
 Ի գուր կը շնչեմ ժամանակը, որ կը փախչի խունապահար:  
 Պէտք է կանգ առնեմ՝ լաբիրինթոսին ելքին չհասած:  
 Պէտք է կեցնեմ ժամերը, չորցնեմ ամնայն իրտիկները տղմոտ,  
 Ապաստանիմ անգոր զազափարի մը անշօշափելիութեան մէջ  
 Ու ախանջ քնեմ այս մեծաշունդ ժխորին, որ մեր պատմութիւնը կը գրէ:  
 Օր մը, բերեւ լուս ալիւս, երբ բոլոր սէրերս ալ սպառին,  
 Եւ քերես լամ վերջապէս, երբ կրակները հանգին հորիզոնիս վրայ,  
 Վերստին փորձեմ անյրօպներ թափել մեզ մեշուղ ուժերուն վրայ,  
 Կեցնելու համար դառնութեան սա հասանքը՝ որմէ կը էշուիմ,  
 Վերստին ինձմ անգոր, փշրուած ու հարուածուած կամքս գրկած,  
 Ու պազատիմ, որ գոնէ չարգիլուին ինծի երազել օրն ի բուն:  
 Ի՞նչ փոյթ, որ չթայլաստուի ալիւս ինծի շնչել, տեսնել ու լսել,  
 Երբ արդէն ապաստանած ըլլամ անշօշափելի գազափարներու մէջ:

**Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի Ն**

Մեր մարմինները մոռցանք տղեզ բարդութեանց Բարեկաններու մէջ  
 Մեր մտածումները անհետ փշրուեցան պէթոնէ անզգայ պատերու դէմ  
 Մեր անհանգարտ բիրերուն արգիլուեցաւ պեզել հորիզոններ  
 Կարճատես սողուններու թափծոտ յուսահատութեամբ ճամբայ կը փնտռենք  
 Բայց անհոգի գերիներու բռնաբռնիմ մէջ կը մնանք յաւտ կորսուած

Ի սկզբանէ էր մարդը, եւ մարդը երջանկազայն աստուած մըն էր  
 Բայց հիմա մարդը ֆազաֆացի է եւ աղքատաբէն է իր ֆազաֆին  
 Կը հաւաքէ միւս միլիոնաւոր մարդոց արցունքն ու թափիծը  
 Կը կռուի միլիոններու հետ ի խնդիր ափ մը հողի եւ շունչ մը օդի  
 Կը վազէ կաթիլ մը ազատութիւն որսուելու համար ու կ'իյնայ  
 Կը կոխկռտուի միլիոններու ոտներուն տակ վերտոնի կը կանգնի  
 Կը խոյանայ դէպի կրկներեւոյթ մը լուսատու բայց կ'իյնայ ճորէն  
 Աւ կ'անիծէ այն օրը երբ իր ձեռներով կանգնեցուց իր բռնտիկ տատերը

ՄԿՐՏԻՉ ՀԱՃԵԱՆ

Մէքսիկո 1980

Լ Ե Ռ Կ Ա Մ Ս Ա Ր

**Հ Ո Գ Ո Ւ Զ Ա Ի Ա Կ**

(ԴՐԱՄԱ ՉՈՐՍ ԱՐԱՐՈՎ)

**ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ**

Տազաւար Յակոբի պարսէզում

ՏԵՍԻՆ Ա.

Յակոբ, Անդրէաս, Մանան

**ԱՆԴՐԻՒՄ** (Ման է գալիս զրգոտած) .— *Ձեմ հասկանում, մինչեւ ե՞րբ պիտի ղեկավարէք ինձ, մինչեւ ե՞րբ միջամտէք իմ ներքին գործերին:*  
**ՅԱԿՈԲ** (Նայնպէս զրգոտած) .— *Ներքին գործ: Մեր դերդաստանի անունը ջնջել մարդկութեան ցուցակից, մեր յիշատակը ջնջել աշխարհի երեսից, համարում ես թո՛ւ ներքին գործը: Կեցցես:*

**ԱՆԴՐԻՒՄ** .— *Ինչո՞ւ ջնջել:*

**ՅԱԿՈԲ** .— *Ձեջել, էն էլ ո՞նց: Այդպէս, որ մեր նամ ու նմոյշը չերեւայ:*

**ԱՆԴՐԻՒՄ** .— *Չարժանալի ծնողներ էք: Կարծես երկու տարեկան երեխայ լինեմ:*

**ՅԱԿՈԲ** .— *Այո, երեխայ ես: Քանի հայր շեռ դատել, դու երեխայ ես՝ եթէ անդամ իննսուներեք տարեկան դառնաս:*

**ԱՆԴՐԻՒՄ** .— *Ինձ ծնել էք դերի դարձնելու համար:*

**ՅԱԿՈԲ** .— *Դու պարտք ես մեզ, հատուցիր թո պարտքը, եւ աղատ ես թո բոլոր ձեռնարկութիւններում: Յաւերժութեան հետ կատակել չի կարելի, Անդրէաս: Դու մեղանից կեանք ես ստացել՝ պարտաւոր ես շարունակել այն: Ես իմ դարաւոր նախնիների կեանքը նրա համար շեմ հասցրել քեզ, որ դու թաղես անյիշատակ: Մեր տեղը նրա համար չի երկարել պատմութեան մէջ, որ դու թո մկրատով կարես, դէն պցես. որ մարդկութիւնը, որ մեր շրջապատը, կեանքը, բոլորը, բոլորը դէպի ապագան, դէպի յաւերժականը գնան, իսկ մենք կանգնենք մեր տեղը եւ ոչնչանանք, կարունք կեանքից:*

**ԱՆԴՐԻՒՄ** .— *Կտրուե՛լ...*

**ՅԱԿՈԲ** .— *Այո, կտրուել: Անդրէաս, մարդը բոլոր էակաների նման կանգնած է մտացութեան ծովի մէջ: Բարձրանում է ծովը, մարդը ձուլում է իր վիզը, որ շնչի, որ շիւղղուի: Ի՞նչ է բարձրանում ծովը՝ է՞լի՛ է՛ ձըղոււմ, կանգնում ոտի մասներին, ձըղում իր ողջ էութեամբ, որ ապ-*



րի, որ կուլ շինայ ծովին: Իսկ զո՞ւ, զու փոխանակ ձդուելու՝ կծկը-  
ւում ու նստո՞ւմ ես:

ԱՆԴՐԻՒԱՍ — Նստում... Հայրիկ, կոյ մի տեղ, ուր բոլոր մարդիկ հաւա-  
սարապէս նստում են: Աւելի՛ն. պառկում են:

ՅԱԿՈՒՆ — Որտե՞ղ է այդ:

ԱՆԴՐԻՒԱՍ — Գերեզմանոց, ուր ամէն կեանք մեռնում է:

ՅԱԿՈՒՆ — Ե՛կ՞ դճ ողորմելի... Գերեզմանոցում քնական մարդու կեանքը ո՛չ  
թէ մեռնում է, այլ կրկնապակոււմ է: Հենց երէկ (կնոջը) յիշո՞ւմ  
ես, Մանան, երբ գերեզմանոցումն էինք՝ Հինգ երեխաներ թաղում  
էին իրենց ծերունի հօրը: Մեռաւ, այո՛, ճշմարիտ է, մեռաւ միայն  
մէկը, միայն ծերունի հայրը, բայց նրա Հինգ երեխաները դէպի  
կեանք փերաւարձան: Մերունին մի ճանապարհով մեռաւ, Հինգ ճա-  
նապարհով դէպի կեանք փերաւարձաւ ապրելու: Ահա, մահն այստեղ  
յաղթե՞ց, թէ՞ պարտուեց: Պարտուեց, Անդրէաս, պարտուեց շարա-  
շար, Հինգ նեւ ստանայով իր կրծքին: Այս անգամ մահը պարտուեց  
Հինգ անդամ, հետագայում կը պարտուի քսանըհինգ անդամ, երբ  
նրա Հինգ երեխաները կ'ունենան Հինգական երեխայ, ապա Հինգ ան-  
գամ քսանըհինգ, ու այսպէս անվերջ: Աւ մահը, որն աշխատում է իր  
անզոր ճիւղերով ամայացնել աշխարհը, այն լցւում է մարդկանցով,  
և զբանով էլ մարդը դառնում է անմահ:

ԱՆԴՐԻՒԱՍ (Ընկնում) — Հայր, ի՞նչ ես պահանջում ինձանից:

ՅԱԿՈՒՆ — Երեխայ:

ԱՆԴՐԻՒԱՍ — Ա՛խ, Ռոզան ի փճակի չէ այդ պահանջը կատարելու:

ՅԱԿՈՒՆ — Թող նրան:

ԱՆԴՐԻՒԱՍ (Խայքում) — Թողնել նրան, բաժանուել իմ Ռոզայի՛ց... այդ  
անկարելի է, հայր:

ՅԱԿՈՒՆ — Անկարելի է...

ԱՆԴՐԻՒԱՍ — Այո, հայր, անկարելի է: Այդ նշանակում է ես բաժանուում եմ  
ինձանից. այնքան մենք անբաղկանելի ենք միացած իրար:

ՅԱԿՈՒՆ — Ի՞նչ է նշանակում այդ:

ԱՆԴՐԻՒԱՍ — Այդ նշանակում է ես սերում եմ նրան:

ՅԱԿՈՒՆ — Սէ՛ր...

ԱՆԴՐԻՒԱՍ — Մազբո՞ւմ ես դու սէրը, հայր: Իսկ յիշո՞ւմ ես քո մի ժամա-  
նակ ինձ ասած խօսքերը: Ինչ ինձ ասում էիր՝ աշխարհում մի ճշը-  
մարտութիւն միայն կայ, եւ այդ սէրն է:

ՅԱԿՈՒՆ (Հառաչելով մեղմ) — Ա՛խ, այո, դաւակն, բայց ո՛չ ինքնանպա-  
տակ սէրը: Սէրը կեանքի ծաղիկն է, այդ ժխտել անկարելի է, բայց  
բոլոր ծաղիկներն ունեն իրենց ներքին իմաստը: Մազկելով ծառը մի  
որոշ ժամանակ բոյր ու գեղեցկութիւն է սփռում իր շրջապատում:  
Այնուհետեւ այդ գեղեցիկ ու շոյնդոյն ծաղիկ թերթերը թափւում  
են մէկ-մէկ, նրա ասկը ուռչում, պարկուճ է դառնում եւ ծաղիկն  
անմահացնում է իրեն կտունք տուող ծառին, հազարաւոր նոր ծառեր  
ծնելով իր կորիզներին եւ քաղցրահամ պտուղ՝ մարդկանց սեղանը  
դարձարեւոյ Համար: Գորիզ, այո, կեանքի կորիզ: Ինչ կը պահէ՞ր  
մեր պարտէզի ծառերը, եթէ նրանք միայն ծաղիկէին ու իրենց ծա-  
ղիկները վար թափէին: Ո՛չ, չէիր պահի:

ԱՆԴՐԻՒԱՍ — Ձգիտէ՛ի, որ քո խօսքը լաւագիտական սիրոյ մասին էր: (Էլմ-  
ծիծաղ): Տակաւոր սէր...

**ՅԱԿՈՒՐ** — Քիչ խօսիր:

**ԱՆԴՐԻՒԱՍ** — Շատ պիտի խօսեմ:

**ՅԱԿՈՒՐ** — Միայն խօսուածքիդ մէջ իմաստ դնելու պայմանով (պատուով):  
Նայիր կենդանիներին: Արուես եւ հոգը այն ժամանակ են միայն իրար  
մօտ գալիս, երբ հարկաւոր է ծնել: Մարդն իրաւունք ունի՞ շեղելու  
քնական օրէնքը:

**ՄԱՆԱՆ** — Ախր, ա՛յ որդի...

**ԱՆԴՐԻՒԱՍ** — Լսիր, մամա, դու ոչինչ չես հասկանում:

**ՅԱԿՈՒՐ** — Ինչո՞ւ չի հասկանում: Ինչո՞ւ անշունչ ծառը, անբան անասունը  
հասկանան պիտի, իսկ մայրդ՝ ոչ: Ամէն արարած, որ աշխարհ է գա-  
լիս, դիտէ, որ պիտի շարունակուի: Այդ չես հասկանում միայն դու,  
որ մկրտան առած՝ իր՛նքի կտրում ես մեր կեանքի թելը: Դու հրա-  
զէն բռնած մեր ճակատին՝ սպառնում ես ոչնչացնել մեզ: (Խայքը-  
ւած): Ո՛ւշ, Անդրէաս, ես չեմ կամենում մեռնել եւ պահանջում եմ  
քեզանից երեխայ: Անպայման երեխայ, հասկանո՞ւմ ես:

**ԱՆԴՐԻՒԱՍ** (Նստում է սեղանի առաջ, ձեռքը մակատին) — Ա՛խ...

**ՅԱԿՈՒՐ** — Ինչո՞ւ գախ, ա՛յ տղայ, ո՞ւր է առողջ բանակոնութիւնդ: Ման-  
ձիք սիրտդ մի փոքր եւ թոյլ տուր բանակոնութեանը իր խօսքն ստել:

**ՏԵՍԻՒ Բ.**

**Նայնի եւ Ռոզա**

**ՌՈԶԱ** (Մտնանիմ) — Մամա ջան, այս ձեռագործը ոչ մի կերպ առաջ չի  
գնում: Սպիտակ թերթիկները ոչ մի կերպ չեն միանում ծղօտին: Մի  
թելով եմ հիւսում: շատ նեղ է գալիս, երկուսն անում եմ՝ անճոռնի  
է դուրս դալիս:

**ՄԱՆԱՆ** — Ո՞ր համարի կոճով ես հիւսում:

**ՌՈԶԱ** — Քառասուն:

**ՄԱՆԱՆ** — Հարկաւոր է վաթսուն: Յետոյ այս թելերը մէկ-մէկ գուրս պի-  
տի քաշես հիւսուածքի տակից, թէ չէ՝ ինչի՞ նման է սոս:

**ՌՈԶԱ** — Սէւից յետոյ ո՞ր գոյնը դնեմ:

**ՄԱՆԱՆ** — Անպայման կապոյտ, մէջը նարնջագոյն:

**ՌՈԶԱ** — Շատ լաւ, մամա ջան: (Անդրէասին, սրբա՛յ): Ասում ես չեմ կա-  
բող գործել, Հա՞, ա՛յ, կը տեսնես: (Գնում է):

**ՏԵՍԻՒ Գ.**

**Նայնի առանց Ռոզայի**

**ՄԱՆԱՆ** — Հրաշայի ազդիկ է, խօսք չունեմ, բայց ինչ անեմ, որ Աստուած  
նրան պտուղ չի տուել:

**ՅԱԿՈՒՐ** (Որդուն) — Կարծո՞ւմ ես նրան չեմ հաւանում: Հաւատացնում  
եմ քեզ, Անդրէաս, ես քեզանից շատ եմ սիրում: Նրա ներկայութիւ-  
նը քաղցր ջերմութիւն է առաջ բերում, կենդանացնում է մեր տունը:  
Այն մաքից, որ նա ընդմիջու կարող է հեռանալ մեր անից՝ սարսա-

փրում եմ ես : Լաց եմ լինում նրա համար : Բայց ի՞նչ արած : (Պառլա-  
 գա) : Եւ հաւատարմութեամբ եմ քեզ, Անդրէաս, նա տխրան աղերս կին է,  
 այնքան քեզ նուիրում, որ քո երջանկութեան համար պատրաստ կը  
 լինի ինքնակամ հեռանալ քեզանից : Հը, ի՞նչ ես կարծում, Մանան :  
 ՄԱՆԱՆ — Իրան ես համոզուած եմ, ես Անդրէաս եմ վստահում, եթէ ոչ՝  
 ես նրան վաղուց համոզած կը լինէի այդ անել եւ չէի թողնի, որ ամ-  
 բողջ ութ ասարի աշխարհ յառաջ պարզին կերպով փասանդի սպա-  
 սէինք :

ԱՆԴՐԵԱՍ — Այդպիսի փորձ արիւր, մամա, կ'անեն իմ կնոջը եւ ընդմիջո  
 կը հեռանամ ձեզանից, այդ լաւ իմացէք : (Հօրր) : Փասանդի կարտը  
 նոյնքան է տանջում ինձ, հայրիկ, ինչքան եւ ձեզ : Ես իմ երազնե-  
 րում խաղում եմ իմ շունչած երեխաների հետ, զգուստ, փայփայում,  
 ապրում նրանցով եւ ամէն առաւօտ մտնում անժառանգ, երբ աչքս  
 բաց եմ անում :

ՄԱՆԱՆ — Բայա քան, գիտենք այդ բոլորը : Պետրինան ասում է՝ ամէն ան-  
 դամ Լեւիկին պիտի անհելիս արտասուակալում են Անդրէասի աչքերը :  
 Գիտենք, որ երեխայի սէրը քեզ էլ է տանջում : Բա մեր ցաւն ի՞նչ է :

ԱՆԴՐԵԱՍ — Ես ա ճիշդ է, մամա, շատ ճիշդ : Հայրիկ, ես նոյնպէս կամե-  
 նում եմ շարունակուել, անմահանալ, ինչպէս դուք : Բայց եթէ այդ  
 ծնունդիք էակը իմ Եսի, իմ էութեան շարունակութիւնը պիտի լինի,  
 նա պէտք է ծնուած լինի միայն այն Ռոզայից, որի հետ ես մուշուած  
 եմ հոգովս ու մարմնովս : Երբ ես ինձ երեւակայում եմ առանց նրան,  
 ինչո՞ւ ինձանից վախենում եմ ու գարշում, որպէս մէջտեղից կէս արած  
 մի այլանդակութիւն : Չեմ կարող, հայրիկ, չեմ կարող, հասկացէք  
 ինձ, վերջուպէս : Ես ինձ գտել եմ նրա մէջ : Յիշում էք որքան տա-  
 րիներ ստիպում էիք ինձ ամուսնանալ : Ու եթէ պատահամք ես նրան  
 չհանդիպի, անկարելի է, որ ես ամուսնանայի : Ոչ մի կին այսքան  
 մասնակ չի տեսց արտիս հետ : Հիմա՝ ի՞նչ էք սուտը դուք ինձանից :

ՅԱԿՈԲ — Երեխայ ենք ուզում քեզանից :

ԱՆԴՐԵԱՍ — Եկ մի բոպէ հակառակը մտածենք : — Մարդ, մարդ, մարդ,  
 մարդկութիւն ու զարձեւել մարդ : Բայց ի՞նչ նպատակի է ծառայում  
 այդ մարդը : Եթէ կով ու ոչխար ենք բազմացնում՝ դա մեզ համար է,  
 իսկ մարդն ո՞ւմ համար է : Եթէ գոյութիւն չունենար մեր մոլորակի  
 վրայ՝ երկրագունդը չպիտի՞ դառնար իր շուրջը :

ՅԱԿՈԲ — Մեզ չէ տրուած բնութեան առեղծուածը լուծելու խնդիրը, Ան-  
 դրէաս, բնութեանը պէտք է եղել մարդ ստեղծել, եւ նա ստեղծել է :  
 Մենք չենք մեր սէրը : Մարդանքի շարուած դիմուարը միայն իր դո-  
 րափարի հրամանը պիտի կատարի : Բնութիւնը մեզ հրամայում է սի-  
 բել, պիտի սիրենք. ասում է ծնիր, պիտի ծնենք, մեռնել է հրամա-  
 յում, մեռնենք պիտի : Իսկ քեզ նման որոշ միամիտներ կարծում են,  
 որ սիրում ենք՝ այդ մեր կամքովն ենք սիրում, որ ծնում  
 ենք՝ այդ մենք ենք ցանկանում : Առա խնդրեմ, ես մի լուրջ,  
 խելօք, պատկառելի մարդ, ի՞նչ պարտք ունեմ գնալ շքել սրտ առաջ  
 (կնոջը ցոյց տալով) եւ սէր աղերսել, որ ուս էլ իրեն թանկացնի, չե-  
 մուշում անի, իր առջեւ շոքացնի եւ անգամ լացել տայ ինձ : Ե՞ս ով,  
 սա՞ ով : Բայց չէի կարող ես այդ շանել, պիտի անէի ու արի : Ըմ-  
 բոստանա՞նք բնութեան դէմ, ապստամբուե՞նք : Բայց ո՞ւմ վրայ յեն-  
 լենք այդ բանն արեւու համար նախ, երկրորդ՝ եթէ պիտի սիրենք ու  
 digitised by A.R.A.R.®

չծնենք, էլ ի՞նչ միտք ունի մեր աշխարհ գալը: Ժամանակը մեզ չա-  
լակած տանում է, իսկ մենք շունչներս պահած սպասում ենք, թէ  
ո՞ր պիտի ցած զնի իր բեռը, մի նոր բեռ վերցնելու համար: Եթէ  
երեխայ ունես, քո հարազատը բեռը կը վերցնի, չունես՝ օտարը կը  
չալակէ: Դու ժառանգ պիտի ունենաս պատրաստ, որ երբ օտարը գայ  
բազմելու քո տեղը՝ ասես. ներողութիւն, այստեղ զգանիտք է:

**ԱՆԴՐԻՒՄ.** — Լա՛ւ, լա՛ւ, հայրիկ, ընդունում եմ քո ասածները: Բոլորը  
ճիշտ են, շատ ճիշտ, համոզուած եմ զրանց, հաւատում ու զաւանում  
եմ, բայց... սիր... դուք անկարելի են էք պահանջում: Համեցէք,  
բաժանեցէք մեզ: Ձեր որի՞ն լեզուն կը բռնի ասելու Ռոզային, այդ  
նուիրուած կնոջը՝ հեռացիք մեր տնից:

**Պատուա:** Երեքն էլ հառաչում են առանձին-առանձին:

**ՄԱՆԱՆ.** — Դժուար է:

**ՅԱԿՈՒ.** — Դժուար է:

**ԱՆԴՐԻՒՄ.** — Դուք, որ դժուարանում էք այդ անել, ասեցէք, խնդրե՛մ, ես  
ինչպէ՞ս անեմ, հա, ինչպէ՞ս անեմ:

**Պատուա:**

**ՅԱԿՈՒ.** — Անդրէաս, ո՞ր բժշկին է ցոյց տուել իրեն Ռոզան:

**ԱՆԴՐԻՒՄ.** — Կարծեմ բժիշկ Անտոնին:

**ՅԱԿՈՒ.** — Իսկ կարելի՞ է հաւատալ մի բժշկի վկայութեան: Արդեօ՞ք ան-  
բուժելի ամուլ է Ռոզան: Նրանց ցեղի մէջ չեն եղել ամուլներ, ինքը  
առողջ, կայտառ կին է: Մանան, շինդրե՞նք Գոսպարին ինքը քննի,  
կամ եթէ հարկ կայ կանաւիլում հրաւիրի պարզելու: Դուցէ հիւան-  
դութիւնը բուժելի է եւ մենք զուր տեղն այստեղ կոտորում ու կոտոր-  
ւում ենք: Հը՞: Իսկ եթէ անյուսալի է, ես սիրում եմ հաւատալ, որ  
Ռոզան ինքը կը հեռանայ, մտնելով մեր դրութեան մէջ: Ինչքա՞ն ե-  
սական ու շարասիրտ լինի, որ բնութիւնից իրեն տրուած զօրախոտ-  
թեամբ մեր տունն էլ կամենայ զօրախոտացնել: Ձէ՞ դու սուս ես  
սիրում է ինձ: Էլ ինչո՞վ կարող է արտայայտել իր բուն սէրը, եթէ  
ներկայ պարագայում չի տայ քեզ ամուսնանալու իրաւունք:

**ԱՆԴՐԻՒՄ** (վեր կենալով). — Ձգիտե՛մ, հայր, ես ցնդում եմ մտածելուց:  
Սիրան ու դուրսը իմ մէջ գօտեմարտի են դուրս եկել ու ես հաւատա-  
բակչութիւնս կորցնում եմ արդէն: Ես պիտի խելագարուեմ, դի-  
տեմ այդ:

**Գնում է:**

**ՏԵՍԻՒ Դ.**

**Յակոբ, Մանան**

**ՅԱԿՈՒ.** — Աղջիկ, արի մի փորձ կատարենք:

**ՄԱՆԱՆ.** — Ի՞նչ փորձ:

**ՅԱԿՈՒ.** — Խօսենք Ռոզայի հետ:

**ՄԱՆԱՆ.** — Ձե՞ս վախենում: Արի մի փոքր էլ սպասենք, զուցէ ժամանակը կը վճռի:

**ՅԱԿՈՒՐ.** — Ժամանակը: Ժամանակը, Մանան, մեղ դուրս կը շարափ զնացքի պատուհանից եւ ինքը յառաջ կը սուրայ:

**ՄԱՆԱՆ.** — Անվերջ սահլոյ էլ պիտի խելագարացնես տղային: Ձե՞ս տեսնում ինչպէս է փոխուել: Ո՞ր է նրա նախկին ուրախ-զուարթ քնուորութիւնը: Չկա՛յ: Նայի՛ր նրա վերջին շրջանի նկարներէ վրայ: Գեղին, մահահոտ: Միշտ մեռնող բնութիւն, կեանքի տերեւաթափ, մահամերձներ իրենց խամրող աչքերով: Ո՞ր են նրա վառ գոյները, ո՞ւր է նրա զբախումը առաջին մարդով: Չկա՛ն: Այժմ նրա քուրք նկարները մերժուած դրսիտի բնակիչներ են, որոնք դուրս են գալիս եզեմից պիտիլոր, ախրամած, չիմանալով ո՛ր կողմն ուղղել իրենց մուրրուած քայլերը:

**ՅԱԿՈՒՐ.** — Ա՛խ, Մանան, երանի՛ր այն առաւօտ յաւիտեանս չզարթնէի քնից: **ՄԱՆԱՆ.** — Ինչո՞ւ, Յակոբ:

**ՅԱԿՈՒՐ.** — Երազիս մէջ թոռնիկներ ունէի, Մանան, մէկ, երկու, երեք: Մէկն իմ գլխարկն էր իջեցրել մինչեւ ականջները, միւսը ջուրհալիս ազեղը անվերջ քում էր մի շան լակոտի վզին եւ կաղկանձեցնում նրան: Մտնում էին ոտներին արանքից՝ զուրս էին գալիս, քաշում փէշերէցս, վերցնում Անդրէասի վրձինն ու սպիտակ կապտիւմիս վրայ սաղեր նըկարում, որոնց թեւի բախիւնից էլ արթնացայ, աւա՛ղ: Սա մի երազ էր, Մանան, որ ցոյց էր տալիս, թէ ինչ կարող էի լինել ես, բայց ինչ եմ հիմա:

**ՄԱՆԱՆ.** — Թոքախտաւորը, որը սիրում է իր ընտանիքը, խնում է առանձին բաժակով: Իսկ Ռոզան իր վարակուած բաժակը մտեցնում է բոլորին շրթունքին: Ձգիտե՛մ, եթէ դա սէր է, սպա երկու աչքով կոյր է, կապի՛ի սէր, որ բոլորին կրծքին սեղմած սպանում է:

**ՅԱԿՈՒՐ.** — Ճիշդ է: Այլապէս Ռոզան կարող էր անդամ վերջ տալ իր կեանքին՝ յանուն իր ամուսնու քարորութեան: Ուժեղ սէրը ես այդպէս եմ հասկանում: Օ՞Փ, Մանան, գլուխս տրաքում է մասնելուց: Տուր ջուրհալիս իմ կարապի երզը երզե՛մ: (Վերցնում է ջուրհալը):

**ՄԱՆԱՆ.** — Գու մեռնում ես կարապի երզը երզելով, որդիդ մեռնում է իր աշնանային նկարներում: Իսկ ե՞ս, հասարակ ու սովորական կինս, ինչպէ՞ս մեռնեմ, առա՛ւ:

**ՅԱԿՈՒՐ.** — Գու էլ, Մանան, իմ զժրատիս կին, կառչի՛ր իմ ջուրհալի մեղեդիներին, մխտին, դերեզման իջնենք: Մեր նաւը ծակուեց, Մանան:

Նուագում է մի շատ տխուր եղանակ: Մտնում է Գասպարը:

ՏԵՍԻՒ Ե.

Յակոբ, Գասպար, Մանան

**ՄԱՆԱՆ** (Գոզմոցը աչքերին հեռանում է):

**ԳԱՍՊԱՐ.** — Էս ի՞նչ գործի ես, Յակոբ: Երաժշտութիւն, արտասուք, ի՞նչ է պատահել:

**ՅԱԿՈՒՐ.** — Ես սպրում եմ կեանքիս անդրները, բժիշկ: Մեր նաւը խուժի

առաւ, եւ նուազելով ծովի յտակն եմ իջնում : Ու տապանաբար կը լինի ո՛չ թէ մարմար կամ դրամիրտ, այլ՝ ծովի մի կատաղած ալիք, անունս վրան փրփուրով զրուած :

ԳԱՊԱՐ.— Կոհակ ու փրփուր : Աշխարհի ամենամառու տապանաբարը, որին ոչ մի ժամանակ չի եղծանի, չի փշրի, չի փոշխացնի :

ՅԱԿՈՒ.— Այսօր առաջին անգամ միտքս ընկար որպէս բռնիկ : Միշտ երեւակայել եմ քեզ շախմատի ընկեր, տախտակի հանդիպակաց կողմում նստած... բռնիկ, մի քննիր մեր Ռոզային ինչպէս հարկն է : Ու եթէ իրօք ոչ մի յոյս այլեւս, եթէ յաւիտեանս կորած է մեզ համար այդ պատուական ազնիւը, խորհուրդ տուր, համոզիր, դրդիր նրան հերոսական քայլի : Նա քեզ իր երկրորդ հայրն է համարում, կը լսի քեզ ու կը կատարի քո ասածները : Քո պերճախօս լեզուով նկարագրիր մեր տանը ախրոզ այս դժբախտ վիճակը եւ նրանից ճար, մի ճար խնդրիր :

ԳԱՊԱՐ.— Ես ձեր տան բարեկամը չէի լինի, Յակոբ ջան, եթէ այլքան բան չանէի ձեզ համար :

ՅԱԿՈՒ.— Մէկ բռնիկով կարելի՞ է բաւարարուել այսպիսի ծանրակշիռ հարցում : Գուցէ բռնիկ Անտոնը սխալուել է անբուժելի յայտարարելով :

ԳԱՊԱՐ.— Իրաւացի ես դու :

ՅԱԿՈՒ.— Խնայրում եմ, բռնիկ :

ԳԱՊԱՐ.— Ես այդ կ'անեմ առաջին առթիւ :

ՅԱԿՈՒ.— Ասա իրեն, որ մենք սիրում, պաշտում ենք իրեն որպէս հարս, բայց ասա թող դո՛ւ իրեն : Մենք նրանից զոհ ենք ազդեցում :

ԳԱՊԱՐ.— Անպատճառ կ'ասեմ :

ՅԱԿՈՒ.— Բաժանուելիս ինչպէս ուզում է ես կը տնօրինեմ նրա կիանքը : Ճշմարիտ է, հետազային ոչ մի ուրախութիւն չի սպասի նրան, բայց բնութիւնից թող գոհանատուի : Մի դժբախտութիւն է դա, որ ոչ մի մարդկային էակ չի կարող օգնութեան հասնել :

ԳԱՊԱՐ.— Եստ բարի :

ՅԱԿՈՒ.— Գասպար ջան, հոգուդ մատաղ, ասա թող վերադարձնի մեզ մեր գաւակին, ինչքան էլ որ նրա համար ծանր լինի այդ :

ԳԱՊԱՐ.— Ահա դժուարը :

ՅԱԿՈՒ.— Դժուար : Ես կը պարտադրէի նրան, եթէ անչօփ սիրելիս չլինէի : Պետրինան կատաղել է եւ պահանջում է օրէնքի դիմել : Բայց ասա խնդրեմ, դիտողմունքի հարցերում՝ ի՞նչ օրէնք : Այնպէս որ, սիրելի Գասպար, ազդեցում եմ, ծունկի եկած իր առաջ պաշտում եմ, ասաներն եմ համբուրում : Դու այդ հասկանո՞ւմ ես :

ԳԱՊԱՐ.— Հասկանում եմ :

ՅԱԿՈՒ.— Օ՛, խեղդում եմ, կարծես օդ չլինի պարտէզում : Գնանք, բռնիկ, գնանք մի տեղ օդ առնելու :

ԳԱՊԱՐ.— Ար խանդարի, եթէ շախմատի տախտակը հետներս վերցնենք, դա վշտերը մոռացութեան կը տայ մի պահ :

Եախմատը վերցնում գնում են :

ՏԵՍԻՒ Ա.

Անդրեաս, յետոյ Լեւիկ

ԱՆԴՐԻՔԱՍ.— Աշխարհի սկզբից, դարեր շարունակ դիտնականներն ու փրկութիւնները ճշմարիտ ու ճշմարտ են գտնել տիեզերքի իմաստը: Իսկ եթէ տիեզերքի իմաստի գտնաւորը զուտ մարդկային է ու տիեզերքն ինքն իր անմտութիւնն, դոյութիւն չունեցող Աստուծոյ գրչաւոր՝ իսկ մըզած իր ճանձրոյթի բոլորներէն մէկուն: Եթէ տիեզերքը սխալ կազմըած մի թուարանական խնդիր է, որի ճիշդ պատասխանը... դոյութիւնն չունի, ու մարդկութիւնը դարերով զլուխ է պայթեցնում լուծելու այս անպատասխան խնդիրը... Այս միջոցն է այսպէս հոնապարհի մէջտեղ կանդնած դատում եմ կեանքի մասին, զորում եմ, թէ ինչպէս ապրող մարդկութիւնը հարեա խոնուած ճանապարհ է պահանջում: Դատում ես, ասում է, զուրս ել ճանապարհից, մի կողմ քաշուիր, մենք անցնենք: Իսկ ես այնպէս չեմ ուզում զուրս գալ կեանքի ճանապարհից: Ինչո՞ւ չապրես այնպէս կլանուած, որ ժամանակ չունենաս դատել կեանքի մասին: Ա՛խ, ես մի անբեղուն ձու եմ, ժամանակը որքան էլ նստի վրաս, ինձանից ճուտ չի դուրս գայ: Ես ինչքան երկար կեանքի իմաստը փնտռեցի, այնքան չգտայ: Բայց միշտ լսեցի մի հրամայական ձայն, որ ասում էր՝ շարունակուիր:

ԼԵՒԻԿ (Մտնում է փայտէ մին հետեւ) — Խաբարդա՛ զեռի, միս կատարած է: (Մկտում է մտորակելու ու պոստոյ գալ այցում):

ԱՆԴՐԻՔԱՍ — Վա՛յ, ջանիկս, դու եկե՞լ ես: Դէ լա՛ւ, լա՛ւ, այսքան շատ չեն ջշի, կապիր մի մի անկիւնում եւ գիրկս արի՛ սիրեմ զեզ:

ԼԵՒԻԿ (Յած իջնելով) — Քրտնած է միս սաստիկ, զեռի, մի փոքր ման ածիր, թող սասի:

ԱՆԴՐԻՔԱՍ — Իս թոպիս, բալիկս, թող ու ջո միւն ես մտտայ: (Ման է անում): Ինչպէս կարող եմ ջո հրամանը չկատարել, փոքրիկ բռնակալս: (Ձիւն քոյնելով): Հապա, մի գիրկս թուր տեսնեմ: (Գրկում է ու անվերջ համբարում): Մա՛ր ես չես դալիս, անպիտան տղայ, զիտն՝ որ զեզ սաստիկ կարտում եմ:

ԼԵՒԻԿ — Քեռի ջան, զուրս քորելու ժամանակ չունեմ. մեր թաղի աղերքը կուրի են պատրաստում վերի թաղի չեա: Մէկս քազաւկա է շինում, մէկս՝ նեա ու ազեղ: Քեռի ջան, ինձ մի զիչ ռեզին առ, ինչ կը լինի: Աղերկս համար տրուսիկիս ռեզինն եմ գործածում, այն էլ փտած է, կարող է կուրի տաք տեղը յանկարծ կտրուի:

ԱՆԴՐԻՔԱՍ — Գլխիս վրայ, ջանիկս: Ուրիչ ի՞նչ ես ուզում:

ԼԵՒԻԿ — Ուրիչ ոչինչ:

ԱՆԴՐԻՔԱՍ — Բայց դու այսօր շատ տեղին եկար, սիրելիս: Մի բան եմ ուզում իմանալ՝ ոչ ոք այդ ինձ չի ստի, բացի զեզանից:

ԼԵՒԻԿ — Ի՞նչ բան է դա, որ ոչ ոք չի ստի:

ԱՆԴՐԻՔԱՍ — Մի շատ հասարակ բան, անուշիկս: Ես ուզում եմ իմանալ՝ ի՞նչ է տիեզերքի իմաստը:

ԼԵՒԻԿ — Ի՞նչ բան է տիեզերքը, զեռի, ասա՛ ես ասեմ նրա իմաստը:

ԱՆԴՐԻՔԱՍ — Կամ ասա, որտեղից են գալիս մարդիկ եւ ո՞ւր են գնում:

ԼԵՒԻԿ — Այդ ասեմ անմիջապէս: — Բոլոր մարդիկ փոքրիկ երեխաներ են լինում սկզբում, այդ երեխաներին իրենց մտմաները հանում են ջրից,

մեծացնում, մարդ են դարձնում: Իսկ թէ ո՞ւր են դնում՝ դա արդէն պարզ է. մէկն իր խանութը, միւսն՝ իր գործարանը, երրորդը՝ սըրճարան:

ԱՆԴՐԻՒՄ — Իսկ յետոյ շե՞ն մեռնում:

ԼԵՒԻԿ — Մեռնում են նրանք միայն, ովքեր իրենց մամաներին չեն լսում:

ԱՆԴՐԻՒՄ — Իսկ դու լսո՞ւմ ես զո մամային:

ԼԵՒԻԿ — Միշտ:

ԱՆԴՐԻՒՄ — Ուրեմն դու չե՞ս մեռնելու:

ԼԵՒԻԿ — Էլ ինչո՞ւ մեռնեմ: Ի հարկէ՞ ոչ:

ԱՆԴՐԻՒՄ — Այդ գէպքում ինձ էլ, ինձ էլ ազատիւր մահուանից, հողուդ մասազ, ու՞մ ուղեւ՝ լսեմ:

ԼԵՒԻԿ — Բայց ախր դու զո մամային ու պապային չես լսում:

ԱՆԴՐԻՒՄ — Ո՞վ ասաց չեմ լսում:

ԼԵՒԻԿ — Մաման է ասում: Ասում է՝ նրանք ասում են — Թողա տոտային թող, իսկ նա չի թողնում:

ԱՆԴՐԻՒՄ — Իսկ դու Թողա տոտային սիրո՞ւմ ես:

ԼԵՒԻԿ — Շատ:

ԱՆԴՐԻՒՄ — Հապա ինչպէ՞ս թողնեմ, չէ՞ ես էլ եմ սիրում:

ԼԵՒԻԿ (Չարս կողմը ծայելով) — Արի հապէս անենք: Գաղտնի սիրենք, թող նրանք չիմանան: (Ակամզ պնդելով): Սա Գուրգէնի ձայնն է, քեռի: (Ձիւն արձակում է, հեծնում ու դուրս քոչում):

ԱՆԴՐԻՒՄ (Երգում է) — «Մ'անկուրիսն օրիւր, կրպղի նման անցա՛ք, զճացիք, ալ չէ՛ք գառնալու, ո՛ր դուք կրպղիկ, ո՛ր ուրախ օրիւր, ընդունակ միայն ուրախացնելու»: Իսկ ի՞նչ բան է մանկութիւն: — Վարտիկի ռեզին, փայտէ՛ ձի ու ռազատկա: Այսինքն՝ կատարեալ յիմարութիւն: Մի՞թէ գերջանիկ լինելու համար անպայման յիմար պիտի լինել: Երեւում է՝ այո: Կարող եմ վերադառնալ իմ մանկական յիմարութեանը: Ո՛չ: Ինչո՞ւ յիմարութիւնից գէպի իմաստութիւն ճանապարհ կայ, իսկ յետադարձ՝ ոչ: Ա՛խ, ես չտես բան չեմ ուզում, միայն կարողանայի այնքան յիմարանալ, որ մի Աստուած պաշտէի: Մարդկային կեանքը սխալ է պատարուած: Օրէնքով մարդս նախ պիտի ծնուէր ծերունի, խորհող ու մասժող, փնտռող ու շղատող: Յետոյ կամաց-կամաց երեխայանար, յիմարանար եւ երջանիկ մեռնէր, ունենալով իր տրուսիկի ռեզինը, աղեղն ու ռազատկան:

Մտնում է Թոգան:

ՏԵՍԻԼ Է.

Աճաքեաւ, Թոգա

ԱՆԴՐԻՒՄ — Մնաս բարով, Թոգա, ես գնում եմ:

ԹՈՂԱ (Վախեցած) — Ո՞ւր:

ԱՆԴՐԻՒՄ — Գնում եմ գէպի իմ մանկութիւնը:

ԹՈՂԱ — Այդ ո՞ր դնացքով:

ԱՆԴՐԻՒՄ — Այն նոյն գնացքով, որով այս տարիքին եմ հասել:

ԹՈՂԱ — Աւա՛ղ, սիրելիս, այդ գնացքը վերադարձ չունի, այնպէս, ինչպէ՛ս



Նրվէժի ջուրը: Իսկ ի՞նչ ունենա այնտեղ, բա՞ն հս ժողացել, ինչ է: ԱՆԴՐԻՒԱՅ.— Ի՞նչ հաւատքս եմ ժողացել, սիրելիս: Ձդիտէի, որ այդ գիտութիւնից աւելի թանկ արժէ եւ հեազային սաստիկ պէտք պիտի դայ ինձ: Մանուկ մարդկութիւնն էր բազմաթիւ աստուածներին շնորհիւ մեռաւ անմահ: Եղբայրսին Ապիս ցուլն անմահացրեց, Իսրայէլին՝ Եհովան, յոյներին՝ Ջեւը, հայերին՝ Աբամազը: Մարդիկ անմահացել են կաւէ կուռքերով, ոսկէ հորթերով:

ԲՈՉԱ.— Հետաքրքիր է իմանալ. դու ո՞ր Աստուածը կը նախընտրէիր պաշտելու համար:

ԱՆԴՐԻՒԱՅ.— Ապիս ցուլը կամ օսկէ հորթը: Մարդու կերպարանք կրող աստուածները մարդկանց նման խաբէրաներ են. Իսրայէլի աստուածը խոստացաւ հրեաներին մեծ աղօղակներով, բայց միշտ օրս էլ ամենափոքր ազն են մնացել եւ կարող էին երկրի երեսից կորչել անգամ, եթէ Անդրիան մի թիղ Պաղեստին շար վրան թառելու: Արամազդն ու Ջեւը իրենց երկուսն պարտնէտներով Մասիսն ու Ոյիմպուր դարձրել էին կերտութիւն ու շուայութեան վայր: Նրանք անգամ սխալմամբ ծնում էին, ստանց ի նկատի ունենալու, որ ի՞նչ ծնում է՝ այն նաեւ մեռնում է:

ԲՈՉԱ.— Անդրէ, հիմա էլ աստուածները չեն պակասում:

ԱՆԴՐԻՒԱՅ.— Աստուածներ կան, ի հարկէ: Ես ունեմ մի Աստուած աւելի քեզ, աւելի բնական, որին սիրում եմ իմ ողջ հոգեմբ եւ որին պիտի պաշտէի, եթէ միայն ինձ անձաւորութիւն խոստանար: Եւ այդ Աստուածը դու ես, իմ անձան Ռոզա: (Գրկալ)՝ Ես եմ եմ):

ԲՈՉԱ.— Դու անկարելին ես պահանջում, Անդրէ:

ԱՆԴՐԻՒԱՅ.— Իսկ աստուածները, զամենակարող են լինում սովորաբար: (Պաուլոս): Ա՛խ: Նու, դա: Իսկ հիմա գիտե՞ս ինչ պիտի անել, Ռոզա:

ԲՈՉԱ.— Ի՞նչ:

ԱՆԴՐԻՒԱՅ.— Վերցնել ներկն ու վրձինը, քեզ մի պինդ համբուրել եւ աշխատանքի պնայ:

ԲՈՉԱ.— Թափառել սար ու ձոր մեն-մենակ:

ԱՆԴՐԻՒԱՅ.— Գեղ մի անգամ տեսնելուց ի վեր երբեք մենակ չեմ եղել, Ռոզա: Թող մի անգամ էլ նայեմ քեզ անթաքթ, համբուրեմ քեզ, որ քո բոլոր հաղորդեմ մարդագետնի ծաղիկներին, քո շուրթերը դնեմ նրանց թերթիկներին եւ քո աննման երեսի փայլով փայլեցնեմ երկնեանք դոյները, որոյէսզի իմ գիշերուայ ու ցերեկուայ երազ քո քաղցր հայեացքը լճանայ նրանց անապակ բաժակներում այնպէս, որ նայեմ իմ նկարած ծաղիկեփնջին եւ Ռոզա կանչեմ, որ համեմեմ բնութեան անհամութիւնը եւ իմաստաւորեմ այն: Դու իմ երեսակայութեան թագուհին:

ԲՈՉԱ.— Իսկ ինչո՞ւ երեսակայութեան:

ԱՆԴՐԻՒԱՅ.— Երեսակայութեան մէջ դու կատարեալ ես դառնում: Այն, ինչ բնութիւնը զլտցել է տալ իրական Ռոզային, երեսակայութիւնս լըրացնում է այն ու դու դառնում ես կատարեալ: Իրականում այնպէս ապրելով, մենք մի տեղ վերջակէտ պիտի դնենք մեր կեանքին, իսկ երեսակայութեան մէջ մենք անմահ ենք:

ԲՈՉԱ.— Նա քեզ երեխանե՞ր է ծնում:

ԱՆԴՐԻՒԱՅ.— Այո, այո, երեխաներ: Նրանք ամբողջովին քեզ են նման, դանդաղահար գիտիկները թափ աւրով թուկոտում են չորս բոլորս: Պար-

տէղ եմ թանու՛մ եւ ասու՛մ. բալիկներ, ահա այս պաղատու ծառերը տարիներ ձեզ համար եմ տնկել, ցած, գետնամած անկցրել, որ ցած գլտրուելիս շփասուէ՞ք: Մայրիկս բաց է անում նրանց համար պատ-  
րաստած թանկագին շորերի լիքը պահարանը ու հագցնում... Ա՛խ, Ռոզա, աղաչում եմ քեզ, մի գիճիր ինձ հետ, մի արթնացնի ինձ այս երջանիկ քնից:

ՌՈԶԱ.— Անդրէ:

ԱՆԴՐԻԱՍ.— Ջան:

ՌՈԶԱ.— Գիտե՞ս ինչ:

ԱՆԴՐԻԱՍ.— Ի՞նչ:

ՌՈԶԱ.— Դու այլեւս ինձ չես սիրում:

ԱՆԴՐԻԱՍ.— Ձե՛մ սիրում: Երբուանի՞ց է այդ:

ՌՈԶԱ.— Այն օրուանից, երբ միասին բռնիկ մօտ դնացինք, Լւ յայտնաբեր-  
ւեց, որ ես ամուլ եմ:

ԱՆԴՐԻԱՍ.— Այդ օրուանից դադարե՞լ եմ քեզ սիրելուց:

ՌՈԶԱ.— Այդ օրուանից քո սէրը փոխուեց խղճահարութեան: Այդ օրու-  
անից դու ինձ ոչ թէ սիրում, այլ խղճում ես. իսկ դա ոչ թէ սէր, այլ ողորմութիւն է: (Թաշկիմակը տանում է աչքերին: Երկար պատգա):  
Բո լուրթիւնն էլ թող լինի ասածիս ապացոյցը:

ԱՆԴՐԻԱՍ.— Բայց դու վերջացրիր, կարծում եմ դեռ էլի ասելիք ունես:

ՌՈԶԱ.— Գլխաւորն ասուած է. մնում է աւելացնել այն, որ այդ օրուանից  
բոլոր տնեցոց վերաբերմունքը փոխուեց իմ հանդէպ: Բոլորի շրթուն-  
քին մի բան կայ ինձ ասելիք, բայց խղճում են ինձ: Ես հիմա նման եմ  
այն մտրակազանին, որ ողորմութիւն ստանալուց յետոյ էլ դեռ չա-  
րունակում է կանչնած մնալ դրանը: Ու ես հաւատացած եմ՝ դու  
այնքան աղնիւ ես, որ կը հաստատես ասածներս:

ԱՆԴՐԻԱՍ.— Դժբախտաբար, Ռոզա, քո ասածները բոլորը ճիշտ են, բացի  
նրանից, որ ես դադարել եմ քեզ սիրելուց:

ՌՈԶԱ.— Դու ցանկանո՞ւմ ես ինձանից երեխայ ունենալ:

ԱՆԴՐԻԱՍ.— Ես միայն այդ եմ ցանկանում:

ՌՈԶԱ.— Գիտե՞ս, որ հնարաւորութիւն չունեմ:

ԱՆԴՐԻԱՍ.— Այդ է, որ չեմ ցանկանում գիտենալ, դրան է, որ չե՛մ ուզում  
հաւատալ: Հաւատալ դրան, նշանակում է մեռնել, իսկ ես անմահու-  
թիւն եմ ձգտում:

ՌՈԶԱ.— Անմահանալ կ'ուզես՝ լսիր բոլոր տնեցոցը, բաժանուիլ ինձանից  
եւ միացիր այնպիսի կնոջ հետ, որ քո էութիւնը շարունակի:

ԱՆԴՐԻԱՍ.— Ես շարունակուել եմ ուզում քեզանով միայն, հասկացիր ինձ,  
իմ անզին Ռոզա: Իմ երեխան պիտի լինի նաեւ. քո երեխան: Աւելի՛ն-  
այդ երեխան պիտի լինի քոնը, որ կարողանայ լինել նաեւ իմը: Այդ  
պիտի լինի մեր յաւերժական սիրոյ պտուղը, հողիս: Իմ հողին ձուլ-  
ւած է քոնին անկերպարձ: Երբ մտքերիս մէջ ընկղմած մտոսնում եմ  
ինձ, քեզ եմ նայում ինձ դանկու համար: Ինձ մօտ գալու ճանապարհը  
քո միջով է անցնում, Ռոզա: Ես չկամ առանց քեզ: Ու եթէ ճիշտ է, որ  
միասին չենք շարունակուելու՝ քեզ հետ միասին մեռնելը մնում է իմ  
միակ անմահութիւնը:

ՌՈԶԱ.— Անդրէ, երբե՞ք չես մտածել ինձանից բաժանուել:

ԱՆԴՐԻԱՍ.— Երբեք:

ՌՈԶԱ.— Ճի՛շտ է, որ Պետրինան մինչեւ անգամ հարնայու է ճարել քեզ:

**ԱՆԴՐԷԱՍ** — Ճիշդ է: Բայց դիտե՞՛ք ինչ պատասխանեցի նրան, Ռոզա. — մէկ էլ առաջարկէ կրկնեցիք, ես քո եղբայրը չեմ այլեւս, ու գու իմ տունը բնաւ սոք չկոխես:

**ՌՈԶԱ** (Վերցնում է մարդու ձեռքը, հսկում, սպա համբուրում) — Անդրէ, ամէն բան արա աշխարհում, բայց ինձանից չբաժանուես, աղաչում եմ քեզ: Երբեք, երբեք, երբեք: (Գրկում են իրար): Այսպէս, այսպէս, այսպէս: Ու ես երջանիկ եմ: Հիմա ես կարող եմ տանել տանեցոյ ամէն տեսակ վերաբերմունք իմ հանդէպ: Քեզ համար կը տանեմ ամենադառն տանջանքն անդամ, միայն, էլի եմ ասում, չբաժանուես ինձանից:

**ԱՆԴՐԷԱՍ** — Իսկ ես պիտի ինդրեմ քեզ, որ զբաժանուելո՞ք բառը այլեւս բերանդ չտանես: Մեր թուարանութեան մէջ, Ռոզա, այլեւս բաժանում չկայ. կայ միայն բազմապատկութիւն:

**ՌՈԶԱ** (Մըրկում՝ աչքերը) — Ու ես երկրորդ անդամ երջանիկ եմ:

**ԱՆԴՐԷԱՍ** — Իսկ ես հիմա կարող եմ աշխատանքի գնալ թեթեւացած որտով:

Գնում է:

ՏԵՍԻ Ա.

Ռոզա, Գառգար

**ԳԱՍԳԱՐ** (Ներս է մտնում շախմատը քեւի տակ) — Ձէ, Ռոզա, Յակոբն այլեւս չախմատի չի, ուշք չկայ վրան: Մտածում է մի բան, խաղում է մի ուրիշ բան: Յակոբին տանին այլեւս յաղթանակ չէ այնպէս, ինչպէս քնած թշնամուն մորթելը: (Պառւզա): Ձեմ հասկանում՝ սա ի՞նչ ժառանգամոլութիւն է վարակել հայր ու որդուն:

**ՌՈԶԱ** — Ինչո՞ւ միայն հայր ու որդուն, ամբողջ տանը:

**ԳԱՍԳԱՐ** — Ճիշդ այդպէս: Մկրտաբոն հանդէս է ծառի տակ, ասում եմ՝ Յակոբ, էտիք ծառը, ինչո՞ւ ես կանգնել: Ասում է՝ ո՞ւմ համար էսեմ. ծառերը ծաղկեցին, պաղաւտութեցին ու իրենց տիրոջն սպասեցին, այդ տէրը չեկաւ ու աւելի ցաւալին՝ չի էլ գալու: Ահա, ո՞ւմ համար էսեմ: Ձեռս չի զրոտւմ, ասում է: Ձի անիւտում, չի սանրում, յաճախ չի կոճկուում: Սա հայրը: Իսկ որդին տարուայ երեք եղանակները մոռացած, միայր մեռնող աշուն է պատկերում իր կտաններում:

**ՌՈԶԱ** — Նկատում եմ:

**ԳԱՍԳԱՐ** — Մարուող օջախ:

**ՌՈԶԱ** — Որի միակ պատճառը ես եմ, չէ՞, բժիշկ:

**ԳԱՍԳԱՐ** — Դժբախտաբար, այո, Ռոզա ջան:

**ՌՈԶԱ** — Ի՞նչ ճանապարհ էք ցոյց տալիս այս անելից դուրս դալու համար:

**ԳԱՍԳԱՐ** — Դրա ճանապարհը մէկ է, Ռոզա, այն, որ ազատութիւն տաս Անդրէասին, բաժանուելով նրանից: Դու ամուսնուդ շա՞տ ես սիրում:

**ՌՈԶԱ** — Անսահման:

**ԳԱՍԳԱՐ** — Ուրեմն աւելի հեշտ կը լինի քեզ համար անել այդ զոհողութիւնը:

Բ-ՈՂԱ.— Սձենայն տեսակ զոհողութիւն եւ պատրաստ եմ, միայն թէ նա բախտաւորուէր:

Գ-ԱՍԳԱՐ.— Նու, բացարձակ երջանիկ չի կարող լինել, ի հարկէ, որովհետեւ գիտեմ ինչ ինչուոյս սէր է տածում դէպի քեզ: Բայց ունենալով երեխայ, մտածք կը մխիթարուի, եւ վերջ կը տրուի տան վայնասունին:

Բ-ՈՂԱ.— Եթէ իմանամ իմ հետանալով Անդրէասը երեխայ կ'ունենայ, այս բողբոջիս կը հետանամ այս տանից:

Գ-ԱՍԳԱՐ.— Իսկ ինչո՞ւ չի ունենայ. չէ՞ որ ամուսինը քո կողմից է: (Պառլաւ):

Բ-ՈՂԱ (վեր է կենում ստազում իրենց մննակութիւնը).— Բժիշկ, ես քեզ համարել եմ իմ հարազատ հայրը եւ սիրել որպէս այդպիսին: Նեղ բողբոջներս միշտ քեզ եմ նկատի ունեցել: Այսօր, սիրելի բժիշկ, իմ ամենանեղ օրն: Երբեք, երբեք ես կեանքում այսպիսի ծանր բողբոջ չեմ ունեցել: Խորհուրդ տուք, տաս, բժիշկ, ի՞նչ անեմ: Դու ասում ես՝ հեռացիր, թող տուր նրան երեխայ ունենալու. բայց ոչ մի կէն Անդրէասին երեխայ չի ծնի: Նա յաւիտենապէս դժբախտ է:

Գ-ԱՍԳԱՐ.— Ինչո՞ւ, Ռոզա, աղջիկս:

Բ-ՈՂԱ.— Որովհետեւ ամուլը ոչ թէ ես, այլ Անդրէասն ինքն է:

Գ-ԱՍԳԱՐ (Յնդաւած).— Ինչ եւ ասում, Ռոզա:

Բ-ՈՂԱ.— Այո:

Գ-ԱՍԳԱՐ.— Իսկ ինչո՞ւ քեզ վրայ ես վերցրել արատը:

Բ-ՈՂԱ.— Որ փրկեմ Անդրէասի կեանքը:

Գ-ԱՍԳԱՐ.— Ձեմ հասկանում...

Բ-ՈՂԱ.— Ի՞նչը չեմ հասկանում:

Գ-ԱՍԳԱՐ.— Այսպիսի անձնագոհութիւն... չեմ հասկանում

Բ-ՈՂԱ.— Այո, ես բժշկական քննութեան ենթարկուեցի, քննութիւնը պարզեց, որ ես ամուլ չեմ, բայց տուն եկայ ու խորհցի: Խորհցի, որ փրկեմ ամուսնուս կեանքը:

Գ-ԱՍԳԱՐ.— Ջարմանք... Բայց դիտե՞ս այդ սուտը որքան սուղ է նստել վրայ: Գիտե՞ս, որ ողջ տունը քեզ է համարում իրենց գծախառնութեան պատճառը: Նայում են քեզ խորթ, օտար աչքերով, եւ Պետրիանան անդամ առաջարկել է քեզ հեռացնել դատարանի միջոցով: Իրաւարանի մօտ է գնացել այդ նպատակով: Եւ վերջապէս ի՞նչ է քո կեանքն այս տան մէջ: Մի անցանկալի հիւր, որի մեկնմանն ամէն ժամ են սպասում: Դու այսպիսի ծանր, դժուարին, ամօթալի վիճակի ես ենթարկել քեզ, որ... որ... որ...

Բ-ՈՂԱ.— Որ փրկեմ մի կերպ Անդրէասին կեանքը, այո:

Գ-ԱՍԳԱՐ.— Իսկ այս չլսուած զոհողութեան համար սպասո՞ւմ ես որեւէ փոխարինութիւն:

Բ-ՈՂԱ.— Դրա փոխարինութիւնը Անդրէաս կ'ընդունուի: Եւ ուրիշ երջանակութիւն չեմ ճանաչում:

Գ-ԱՍԳԱՐ.— Ես սուշած եմ, Ռոզա: Այսպիսի անհուն սէր ի՞նչ ճամբով է ծովացել քո փոքրիկ սրտի մէջ: Այսպիսի բան եւ լուծ չունէի:

Բ-ՈՂԱ.— Իմ այս խոր դաղանիքը եւ շրայանցի քեզ, որ ինձ դաւարանես, բժիշկ, ես յայտնեցի, որ ինձ մի ելք ցոյց տաս: Որովհետեւ իմ այս զոհողութիւնը ոչնչի չհասցնելուց յետոյ, այժմ աւելի դժուարին կացութեան է մասնել Անդրէասին: Նա սիրում է ինձ, բայց սեզում է

երեխայ ունենալ. չի վճարում իր անելիքը ու ստանձնում, զաւարտում է իր հոգու խորքում : Ասա, բժիշկ, ի՞նչ անեմ :

ԳԱՍԳԱՐ.— Թոյլ տուր մի փոքր մտածել : Հանդոյցն այնպէս է խճճուած, որ մտածելիս դուրս գարտուում է : Ո՛հ, խեղճ Անդրէաս, ինձն Յակոբ, Քչուստ Մանան : (Պատգաւ : Բժիշկը երջ-տեկում է, իսկ Ռոզմն արտասուում է) : Դոս, Ռոզա, դէպի Անդրէասն ունեցած սիրուդ մէջ այնքան ես առաջ դնացել, որ այլեւս ինքդ դէպի քեզ վերադարձի ճանապարհ չունես : Շարունակի՛ր այդ ճանապարհը մինչեւ վերջ :

ՌՈԶԱ.— Ուրիշ ոչինչ չունեմ դուհւում, բժիշկ :

ԳԱՍԳԱՐ.— Ունես :

ՌՈԶԱ.— Ի՞նչ ունեմ :

ԳԱՍԳԱՐ.— Կ'անեմ քեզ ինչ ունես, էթէ իմանամ, որ իրօք ամէն ինչ կ'անես Անդրէասի կեանքը փրկելու համար :

ՌՈԶԱ.— Եթէ իմ կեանքն էք ակնարկում, ամէն բոլոր պատրաստ եմ դուհւում այն :

ԳԱՍԳԱՐ.— Քո կեանքը չէ հարկուոր : Խոստացիր, որ ամէն ինչդ կը դուհեա, եւ ես քեզ կ'ստեմ, թէ քո ինչը պիտի դո՛ւնես :

ՌՈԶԱ.— Խոստանում եմ, բժիշկ, ամէն, ամէն ինչ :

ԳԱՍԳԱՐ.— Ծի՛ղդ ես ասում, Ռոզա :

ՌՈԶԱ.— Երբուում եմ բոլոր սրբութիւններով :

ԳԱՍԳԱՐ.— Զո՛հիր քո պատիւը...

ՌՈԶԱ (Հարցական նայումով)։— Ես քեզ չեմ հասկանում...

ԳԱՍԳԱՐ.— Երեխայ տուր Անդրէին... ուրիշից :

ՌՈԶԱ (Ճշում է, երեսը ծածկելով)։— Այդ մասին ես էլ մտածել եմ :

ԳԱՍԳԱՐ.— Իրերի ներկայ դրութեան մէջ՝ միակ փրկութիւնը : Ուրիշ էլք չկայ : Դէպքերն այնպիսի ընթացք են ստացել, որ այդ զոհարեորութիւնն անհրաժեշտ է դառնում : Եւ Անդրէասը երջանիկ կը լինի :

ՌՈԶԱ.— Երջանկութիւն, հիմնուած մի խայտասակ կեղծիքի վրայ : Մի՞թէ կարող է սիրող կինը խարել իր ամուսնուն :

ԳԱՍԳԱՐ.— Մենք՝ բժիշկներս այնպիսի հիւանդին երբեք չենք ասում դու կը մեռնես. այլ յոյս ենք տալիս, որ շահարկուի : Մա էլ սուս է, բայց դրա համար մեզ խարիբայ չեն անուանում : Քո սուտը աւելի ազնիւ կը լինի, ի հարկէ, որովհետեւ դրանում դու զո՛հ ես քերում քեզ :

ՌՈԶԱ.— Սէրը գերագոյն ճշմարտութիւն է. ես կեղծիք չի վերցնի : Իսկ կեղծ երջանկութիւն մատուցել մէկին, դա դարհուրելի ոճիր է, բըժիշկ :

ԳԱՍԳԱՐ.— Ռոզա ջան, աշխարհում իրական երջանկութիւն գոյութիւն չունի : Երջանիկ է նա, ով կարծում է, թէ երջանիկ է :

ՌՈԶԱ.— Խորունկը շատ հեշտ է, խարեյն է դժուար :

ԳԱՍԳԱՐ.— Բայց մի մտանայ, Ռոզա, որ դու մի անգամ խարել ես արդէն : Խարել ես՝ նրա կեանքը փրկելու համար, չե՞ս ուզում խարել այդ կեանքը նաեւ երջանկացնելու համար :

ՌՈԶԱ.— Կարծես ճշմարտութիւն լինի քո ասածում :

ԳԱՍԳԱՐ.— Հապա, դու ես դատնալու ճանապարհ չունես : Եւ, վերջապէս, ասա ինդրեմ, մի՞թէ երեխան անպայման սեփականը պիտի լինի : Այդ

հաշուով հաւերը բոլորովին սեփական զուակներ շղիտի ունենային, քանի որ բացառապէս ուրիշի ձուերի վրայ են նստում: Անգամ բազի, սազի, հնգհետհաւի ձուի վրայ: Ես պատահել եմ ամուշներէ, որոնք ընկեցիկ երեխաներ են վերցրել պահելու եւ սիրում են աւելի ոտստիկ, քան հարազատները: Մի հաւի տակ բազի ձու էին դրել. դուրս դալիս բազիկները ընի մէջ լողանում էին, իսկ նրանց ցամաքային մայրը ակից հակում էր իր ձագերին: Մի հանդամանք, որ ցոյց է տալիս, թէ ծնողական զգացմունքի մէջ մարմնականից աւելի հոգեկունն է խօսում:

**ԲՈՉԱ** — Երբ մտածում եմ այդ մասին՝ հանոյժն ու սարսափը միաժամանակ դողացնում են սիրտս: Բժիշկ, այդ մասին թոյլ տուր մի փոքր աւելի մտածել: Զէ՞ որ այդ իմ բարոյականութիւնն էլ է շօշափում:

**ԳԱՍԳԱՐ** — Դու կարդացել ես Մոպսանի «Ճարպագանդը»:

**ԲՈՉԱ** — Կարդացել եմ:

**ԳԱՍԳԱՐ** — Տեսնո՞ւմ ես. այնտեղ մի պրոֆեսիոնալ պոռնիկ մեծ բարոյական գործ է կատարում, Փրանսիացի կնոջ պատիւը պաշտպանելու համար ինքն է գնում գերմանացի սոլայի մօտ՝ նրա վախճում ցանկութիւնը թաւարարելու: Եթէ նպատակը բարի է, ինչ տարբէ էլ լինի, դադարում է յանցանք լինելուց: Իսկ ներկայ պարագային քո հետապնդած նպատակը այնքան վսեմ է, որ կ'արդարացնի նրան հասնող բոլոր միջոցները: Դու մի ընտանիք ես վերկու՞մ ճամբարտ կրքըստից:

**ԲՈՉԱ** — Իսկ եթէ կբեմ նրա ծանրութեան ներքոյ, եթէ շներեն իմ թոյլ ուժերը:

**ԳԱՍԳԱՐ** — Ես կ'օգնեմ քեզ, Ռոպա: Բո հաւատարիմ դաշնակիցը կը լինեմ այս մեծ գործը դուիս բերելու համար: Ինձ ուղարկել են քեզ մօտ քննութեան: Գնա՞մ յայտնեմ իրենց, որ քո հիւանդութիւնը բուժելի է: Իսկ յետոյ ես որպէս թէ կը բուժեմ քեզ, մի ամսով սանատորիա կը գնաս, նանսպարհին երկաթուղու մի կուպէում կը ծանօթանաս մի պատահական անցորդի հետ, որին կհանքումդ այլեւս բնաւ չէո հանդիպելու, եթէ կ'ուզես մի հարբած մարդու հետ, որ նա էլ քեզ չի՛նի, այնպէս վայրկենական, ինչպէս մայր մեղուն է բեղմնաւորում օդում բույժական մահ պատճառելով յոռին:

**ԲՈՉԱ** — Բժի՛շկ:

**ԳԱՍԳԱՐ** — Ոչ մի բժիշկ: Վճռիր միանշամից եւ թոյլ տուր ինձ յայտարարել զեզ բուժելի: Իսկ եթէ արարքդ իրօք յանցանք է՝ չէ՞ ես էլ եմ յանցանքիդ մեղսակից եւ արարքիդ պատասխանատուութիւնն ինձ վերայ էլ է ծանրանում:

**ԲՈՉԱ** — Համաձայն եմ, բժիշկ, եթէ խօսք տաս նեղ բողբիս էնձ օգնութեան հասնել:

**ԳԱՍԳԱՐ** — Յառաջ, Ռոպա, ես քեզ հետ եմ:

**ԲՈՉԱ** — Յայտարարիր, ուրեմն: (Գլուխն առնում է ձեռքերի մէջ):

**ԳԱՍԳԱՐ** — Եւ վերջ:

Գնում է:

ՏԵՍՒԼ Թ.

Ռոզա, յետոյ Անդրէաս

ՌՈԶԱ.— Այս օրուանից, ուրեմն, ես մի անարգ գերասան եմ: Մի գերասան, որ բնի է բարձրանում խաղալու մինչև իր կեանքի վախճանը, առանց անուղակիտ, առանց հանգստի: Ես, աշխարհի ամենագոթաբա կինը, պիտի ամենաներջանիկ կնոջ գործը սանեմ: Սրտումս գոթաբայի կակիծ, երեսին եղեմական ժպիտ: Մեր գերասանը կը շիմանայ: Քրքրջամ պիտի ու պարեմ այն ժամանակ, երբ լաց լինել է միայն ինձ պէտք: Երկնային զօրութիւններ, ուժ ու կարողութիւն տուէք սկսածս մինչև վերջ հասցնելու համար:

ԱՆԴՐԷԱՍ (Ներս է մտնում վախճանով).— Ռոզա... Հաւատամ լսածիս:

ՌՈԶԱ.— Այո, Անդրէ, ի՞նչ ես ապշել կանգնել, գրկիբ ինձ քո բոլոր սուտովը, մենք երջանիկ ենք: (Գրկախառնութիւն):

ԱՆԴՐԷԱՍ.— Աւելի քան ստաջ էր, չէ՞, Ռոզա:

ՌՈԶԱ.— Այո, այո, սիրելիս:

ԱՆԴՐԷԱՍ.— Մ', շունչս է արգելում... մինչև հիմա մենք մարդկային շարքից դուրս ընկած գիտում էինք մարդկութեան երթը զէպի յաւերժութիւն, իսկ հիմա մենք էլ շարք մասնք, Ռոզա, մենք էլ: Պատկերացնո՞ւմ ես:

ՌՈԶԱ.— Պատկերացնում եմ:

ԱՆԴՐԷԱՍ.— Հին հրէաստանում ամուլ կինը պղծութիւն էր համարում եւ նրա մուտքը տանար արգելուած էր:

ՌՈԶԱ.— Մաքրուեցի ես վերջուպէս այդ պղծութիւնից, երզն պիտի ու պարեմ, փշել տուք զաւարտփողեր, Անդրէ եւ, որ գլխաւորն է, զրկիր ինձ ամուր, շատ ամուր:

ԱՆԴՐԷԱՍ (Գրկած).— Անուշիկս:

ՌՈԶԱ.— Որքան ուրախ եմ:

ԱՆԴՐԷԱՍ.— Ուրախութիւնը գնա դրամով ան: Հայրիկս գծուել է, եւ տունն ու մտքը պատրաստում է հուկրներով վրոպ յարձակուել: Կատարինէն Պետրինայի հասեից վազեց ու հետագրեց ամուսնուն անմիջապէս դալ: Պատրաստում է մեծ խնջոյք, բժշկիկն իրենց զրկեց լաց չեն թողնում, համարելով այս տան փրկիչը: Սրհնուի այն օրը, ատում է մայրս, որ դու այս տունն օտք գրիր: Մեր պարտկոյտ դրացին ծախում է իր այգին, կ'առնեմ, ասում է հայրս ու պարտկոյտ կը խառնեմ: Մայրիկս իր շորերի բողջան սենեակի յատակով մէկ շաղ տուած ընտրութիւն է կատարում, հայրիկս էլ ծոցտանարը հանած՝ եթէ ազլիկ լինի՝ Աստղիկ, եթէ սղայ՝ Գազիկ: Ռոզա, փախիր, քանի չեն կկել... Ի՞նչ պատահեց ինձ, Ռոզա, գլուխս շուտ է դալիս: Մ'իս, Աստուած իմ, որքան երջանիկ եմ ես:

ԼԵՌ ԿԱՄՍՍԵՐ

Վ Ա Ր Ա Գ Ռ Յ Ր

(Շար. 2)

### Յ. Մ Ա Ն Ո Ի Կ Ե Ա Ն

#### ԱՍՏԱՆԴԱԿԱՆ ԿԱՐՕՏՈՎ

Կը քափառիս մայրերն ի վար լուսասփիւս  
 ոստանի մը հեռակայ,  
 ուր սնչրպետ մը տես  
 բնգ կ'անջատէ այն հողէն,  
 որուն ծոցին մէջ բողբոջիք  
 իղձ մը լագուրք  
 եւ կարօտ մը վաղնջայուշ... :

Մտածումիդ քեւերուն մէջ օդառկախ՝  
 դուն կը փախչիս  
 խղճմտամբիդ գուցէ խայթէն հալածական.  
 ճակատագրիդ հեզմաբարբառ շուրթերուն՝  
 դարձած յանկերգ մը ցաւի :

Ո՛չ ոստանը աւանդներով իր սգեշումչ,  
 ո՛չ հեշտասփիւս երբը գինով մայրերու  
 եւ կենսախայտ պարտէզներու  
 ո՛չ իսկ բերկրամէր յանկուցիչ  
 կրնան կազմել շնչի  
 հոգւոյդ անանց խռովիւն,  
 որ կը կրէ սաւայտանձով մը անգոր՝  
 սէրը անկէզ հեռալուսած օճախիզ... :

Կը քափառին խոհերուդ հետ գուգանեա՝  
 մոխիրներու մէջ անքեղուած  
 տենդեր առկայծ  
 եւ մորմոխներ հրախանձ,  
 որ հեռայուշ կախարդանձով մը օծում՝  
 կը սեւեռին խոհերուդ՝  
 միշտ անբաժան, միշտ հեռու... :

Մշտանորոգ ցար միակ,  
 այն հեզալուր կանչն է տարփոտ,  
 որուն շունչով բեղմնաւորուած հաւատնդ դեռ  
 կը քափառի բեզի հետ՝  
 ամէն հրճուանի արեամարիոզ տմուքեամբ :



Աստուղական ճայներու մէջ խժայուր,  
ամէն մէկ հունչ պիտի շրթներդ ողորդ  
լռիկ ազերասվը այդ կանչին-  
ամէն մէկ խտի գրկէ նայաւածքդ պիտոտը՝  
սնոր շունչովը ազուամուշ...

Ո՛չ հրաշիք տրօփները հեշտանքի,  
ա՛յ հեղանիւք կախարդանքը իրիկուան  
եւ վերամբարձ խոյակներու  
                                ա՛յ իսկ հմայքն արքեանի՝  
յիշողութեանդ եթերներուն միզամած  
երանատենչ երգանքի մը կապոյտ  
կրման պատրանքը սփռել...  
Մահատեսիլ յահախանքէն աւելի՝  
բաժանման երգն է այրող,  
այն ազնկէզ կայլակները զգջումի,  
որ կ'ազարին քեզի հետ  
եւ այն կարօտը ծագկատի,  
որ կը հակի դեռ խտերուդ համբոյրին՝  
զերք հեռալուր անդրադարձ...:

Կը քափառին մայքերն ի վար լուսափիւս  
                                ստանի մը հեռակայ,  
համայնակուլ ճայներու մէջ խեղդելու  
                                գուցէ սէրդ,  
անգուայ սենդդ մայրակամ:

Հոն շեմերուն երդիքներու այլամբեժ,  
ուր ծխաններ կ'երկնեն վիշտ մը անհագորդ  
եւ անօրեաներ կ'երգեն խորհարդ մը օտար,  
ուր էակից զգայնութեամբ մը տրտում  
                                իզձ մը լագուրք  
                                եւ կարօտ մը վազնջայալ  
                                էեզ քեւաքախ կը սպասեն...:

**Վ Ե Ր Ա Յ Ա Ռ Ն Ո Ւ Մ**

Ամայատանց նկուղիդ մէջ գետնափաքշ,  
գիւտե՛մ, յոգնած ես հիմա,  
պատերազմի արհաւիրքէն անհերքէք,  
որ մահացան գեներալայր ծէսբով,  
հայրենական շէներուդ տակ քախծայրոյս՝  
հազար կշռոյթ, հազար երանգ կը փոխէ...:

Յոգնած ես դուն  
 եւ կը դողաս մենարդձիկ ու խռուն՝  
 դժնահայեաց կերպարներէ այցուած :

Նկուղիդ մէջ հեծի կայ ցաւի,  
 մահուամ կռիցի եւ օրհաս,  
 ուր վերահաս ամէն մէկ պահ  
 կ'երկնէ երկունք մը անյայտ... :

Փողոցին մէջ կը ծաւալի  
 անբուն վիշտը ազգամուղջի,  
 ուր փշոտած կրողիտի բեկորներ  
 կը կրին ցաւն անցիտութեամբ մը անմեղ՝  
 ողբակիզուած գոհերու սուրբ արիւնին :

Նայն փողոցն է,  
 եղբրայուշ իր նոյն կեանքով կարելէր,  
 սր խտեբուդ յանդիման՝  
 կ'ազեղնէ թոր կարօտ մը անամբ,  
 ուր հրասոյլ մուսցիմն դէմ ասմբերու,  
 էսմէրալտա,  
 ինկաւ եղբայրդ երէկ... :

Յոյսը միակ,  
 որ դեռ կրնայ բեզ պահել  
 դամբանային եղկ խտերէ՛ց ալ անդին՝  
 գորշ նկուղէդ յառնող ողջունն է գուարթ,  
 որ սուերակ ուղիներուդ, ուշ կամ վաղ,  
 հրաշուշան համբոյրի պէս պիտի պայքի... :

Մոխիրներու եւ վերայայտ կեանքի միջեւ  
 այն հաւատքն է բացարձարծ,  
 այն խորհուրդը խնկալոյս,  
 որուն շունչով գերմացած՝  
 պիտի կրկին բնկալես իմաստութիւնը կեանքին  
 եւ անորաշ մտերմութիւնն իսկ վազուան՝  
 վերափոխուած արիւնիդ յազթ ցնծութեամբ :

Պիտի յառնես գորշ նկուղէդ գետնամած՝  
 ողջունի պէս խանդակաթ  
 եւ խօլականչ գրոհները օրհասի՝  
 պիտի դատման  
 լոյսի օրհնամբ մը աղու,  
 հողի շունչով բեզմացած՝  
 դառնան կալերդ օրօրուն  
 եւ երազանք կենսախայտ :

Ո՛չ մէկ կսկիծ չմթազնէ ա՛յ հոգիդ,  
 ո՛չ մէկ հրքիւ չմայրէ հարն օճախիդ,  
 դարանակալ ո՛չ մէկ ստուեր,  
 ո՛չ մէկ նգովք ու ատեսն  
 պիտի նայուածքդ գրկեմ  
 քինախնդիր նեղութեամբ...:

Պիտի յառնես  
 կրքիւ շափրակ մը բուրմունք՝  
 սխրանքներդ կորուսեալ,  
 շագ մը երկունք՝  
 ճգնումներդ քեւարեկ  
 եւ առէջ մը շնչառութիւն՝  
 փեռնկտուած տրոփներէն սէրերուդ  
 եւ պարագրես  
 Համայնական ամէն մէկ իդ՛,  
 խիճդ ու քախիծ՝  
 տառապանքդ վերայառնող էութեամբ...:

### ՀՈԳԻՆԵՐՈՒ ՎԱՂԱՄԵՌ

Արգեստաններն այս գարնան  
 կը ծոցուորին ողկոյզներով դառնաղի:

Լաչակդ քա՛ց, Տիրամայր,  
 զի մանուկներ կը փերթատին  
 երկզուկի քերթերու պէս քաշալոյս՝  
 խորշակներէ մահասփիւռ  
 եւ կաթնաբոյր շուրթերն անոնց  
 կաւէ աղօթք են դարձած,  
 կաւէ աղէքս:

Անգայտացան իղձերն անոնց նորածաղկ՝  
 անդռնական գիշերին մէջ տեմդահար,  
 ինչպէս երանգ մը երգի,  
 որ քայքայման վերջին իր յանգը կը գտնէ՝  
 ոլորտներում հեռամայն...:

Փերթատուեցան խածամուծին մէջ ռազմի,  
 առանց կրքի՛ նանչնալու  
 աղապատանքդ ազու,  
 որուն շունչով բեղմնաւորուէր, լիանար՝  
 անոնց երազը բողբոջ:

Եղբրաւոք իրենց բախտին անգիտակ՝  
կը ձայներգեն անոնք հիմա  
բեւաճումով ոգեհունչ.  
ու կը շնչեն

Իրբու եովուերգ իրիկնային,  
քնարայայգ գերք վերյուշ,  
ամէն ձայնի մէջ կենսաբարբ,  
ամէն կանչի մէջ ներատոյգ...:

Հանգի՛ստ անոնց տենչամբներուն պարմանի,  
որ մայիսի կաթնածաղիկ համբայրով  
պիտի երբեք չբուցուին  
խանդազացող արտառութիւն աչքերուդ:

Երբեակ հանգիստ եւ օրհնութիւն  
ազկոյցներու պէս հնձուած  
Բարբառներուն անոնց հեզ,  
որ ա՛յ պիտի չօրհներգեն  
Շնորհներուդ լոյսն անանց՝  
այգաբացիդ տոնդներով դաշնալուր:

Փողօցներէն պիտի չանցնին ա՛յ երբեք  
ծաղկազուարն վարդատօնիդ այս գարնան,  
խնկերգելու Մայրութիւնդ, Տիրամայր,  
Բռնբիւններովն իրենց մատաղ հաւատքին:

Պիտի տեսնես լոկ երդի՛քներ վիրաւար,  
մրկուած հին խոյակներ մատուռի  
եւ դաշտերուն՝ լճուած կալերգ եւ արօր:

Լաչակդ բա՛ց, Տիրամայր,  
զի արիւնի ճապաղիքը աչքերուն  
մանուկներն այդ փերթատուած՝  
գեհեմաբարբ իրենց ցաւին ընդմէջէն,  
տե՛ս, կը կատչին դեռ երգերով հողաբայր՝  
գոհաբերման սեղանիդ:

Եղբրայուշ այգեկութէն հո՛ւ գարնան  
Հողը արիւն կը բուրէ,  
կեանքը՝ մօխիբ աւ անբ.  
ա՛յ այս տարի  
Հնձաններէն արի՛ւն է, որ կը հօսի...:

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Շ Ա Հ Ա Ն Դ Ո Ւ Խ Տ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՄԱՅՅԵՐՈՒ ԵԶՐԻՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ը ...

Ա Ղ Ջ Ի Կ Ն Ե Ր Ը ...

Հ Ա Յ Ր Ե Ր Ը ...

Առաջին առաւօտը չէ, որ կայնած եմ ճամբու սա եզրին, Սիրականին եւ Մովսէսին պատկանող նպարագանձառի խանութին առջեւ: Չեմ հաշուած քանի՞ քորով առաւօտ բլլալը, բայց ճօտաւորապէս դիտեմ, որ հինգ ամիսներէ ի վեր, ամէն առաւօտ ժամը ճին կը կայնիմ այդտեղ, որովհետեւ կը սպասեմ շարժովար Աւետիսին եւ իր ինքնաշարժին: Ասոր պատճառը այն է, որ պարզապէս ոչ մէկ ինքնաշարժ սպասած է զիս՝ տանա ուղրու առջեւ, եւ կամ՝ որեւէ փարֆիլիցի մէջ: Ընդհակառակն, մի՛շտ ես եղած եմ ինքնաշարժներու սպասողը: Այդ ինքնաշարժները յաճախ սերվիսներ կ'ըլլան, մեր քաղաքին փոխադրական ամենաարագ միջոցները, որոնց շնորհիւ ինքնաշարժէ զրկուածները նեղի շին մատնուելիք ընա՛ւ: Այսուհանդերձ, անձնական ինքնաշարժով զործի կամ պտոյտի երթալը տարբեր հաճոյք եւ հրապոյր ունի, տարբեր դժուարահալութիւն կու տայ: Այս սպարուաները հաստատած եմ անձնական ինքնաշարժ ունեցող իմ ծանօթներուն կամ նոյնիսկ անձնօթներու աչքերուն եւ հոգիներուն մէջ: Ուրիշ է սեփականութեան ստեղծած դժուարահալութիւնը: Իրրոնք առջեւ, օրինակ, քեզի կը սպասէ ինքնաշարժ մը, հլու-հնազանդ ծառայի պէս, սարուկի պէս, ու կը տանի քեզ, կը

շալկէ քեզ, ո՛ւր որ կ'ուզես: Մանաւանդ՝ երբ քաղաքացին եւ Լիբանանի նման երկրի մը, ուր վեց տարիներէ ի վեր պատերազմը աւեր կը դործէ, հոգիներ կը հեծէ, տրեւն կը հոսեցնէ: Ճամբաները քեզի առաջնորդ-ուղղութիւն չեն բլլար: Նման օրերուն փրկութիւնն իսկ է ինքնաշարժին սեփականը. քեզ կը փոխադրէ ուղած վայրը՝ պահուրտելու. լեռ, ձոր, դրացի պիղեր կամ քաղաքներ, քեզ ազատելով կրակի կեղրոններէն:

Բայց ես շատ «հետունք» դացի, անձնական ինքնաշարժ մը իսկ չունենալով: Չէ՞ որ կայնած էի Սիրականին եւ Մովսէսին խանութին գիմաց, կը սպասէի Աւետիսին եւ իր ինքնաշարժին, որ զիս պիտի տանէր քաղաքի արեւմտեան շրջանը՝ դործիս:

Ըսենք՝ առաջին առաւօտը չէ, որ կը կայնիմ այս բարեկամ մարդոց խանութին առջեւ, այլ՝ հինգ ամիսներէ ի վեր, հինգ ամիսը օրերու վերածելով, շարաթը վից օր նկատելով (յարգելու համար Կիրակին): Մտային սուր հաշիւ կատարողը արագօրէն կրնայ դուժարել ու բազմապատկել, շարաթը՝ վեց օրուան, ամիսը՝ չորս շաբթուան վրայ տարածելով կ'ունենանք վեց անգամ չորս քանըչորս, ասպ քանըչորս անգամ հինգ. այսինքն՝

120 օր:

Ուրեմն, 120րդ առաւօտն է, որ կը սպասեմ Պուրճ Համուտի նոր Մարաշ թաղի այս խանութին առջեւ, ուր կանոնաւոր կ'երկարէ կը հասնի Աւետիս, Հինգ, ատուք, երբեմն քսան վայրկեան յայտնուածով: Այդ յայտնուածին պատճառը Աւետիս ինքը չէ, այլ՝ իրեն հետ քաղաք դործի պայտը երկու հայուհիներ, Սոնան ու Միւլիան, մա'նաւանդ՝ Սոնան, որ Աւետիսի գիտողութեան ի պատասխան կ'ըսէ.

— Ի՛նչ ընեմ, գոնար կ'արթննամ, ժամը 7,30էն առաջ չեմ կրնար արթննալ, մինչեւ որ մամա մշաէ. «Աղջիկ, ելի՛ր, գործիդ ժամը հասաւ, է՛լ, պատրաստուէ՛ն»: Մինչեւ որ պատրաստուիմ, գիտէ՞ք, ժամանակ կ'առնէ. մտերս պրաշնակ կ'ընեմ, Փեր կ'ընեմ... մտերու ծայրերը գոնար կ'ոյրորուին... ալաշաք ձեւը շատ կը վայելէ ինծի... կ'ուզեմ, որ ուտերուս վրայ փոռած մնան, կ'ուր-կ'ուր:

— Մազերու՛դ ալ, քեզի՛ ալ, ջու մազիդ երեսէն մենք գործէ՞ն պիտի ուշանանք. խաւանակ ի՛նչ կ'ըսէ այս ուշանալուն...

— Խաւանակ բան մըն ալ չ'ըսեր, դուն իմ վրաս նեղէ, ըսէ, որ Սոնան է ուշացողը: Ես խաւանակ համոզելու ձեւը գիտեմ...

— Այո, երես տուեր է քեզի, անուշ անուշ կը խօսիս հետը, եթէ այս անուշ լեզուդ ալ չ'ըլլայ... Բայց ես չեմ խորհիլ. ես խաւանակ-մաւանակ չեմ գիտեր... ասկէ ետք եթէ ուշանաս, կը քեմ՝ կ'երթամ:

— Իր ալ հո՛գն է, — կ'ընդմիջէր Միւլիան, — այն տունն իր օթոյնով կ'երթայ:

— Թո՛ղ երթայ, ի՛ր օթոյնով թող երթայ եւ թող ա խոնդումին մէջ քշելու համին նայի: Մասնեմն ալ գոցեցին. մէկ ճամբայ մնաց. Մաթհաֆ-Պարպիւր... իր քշելով հագին Հինգ ժամէն գործի կը հասնի... վախկոտին մէկն է... եթէ վախկոտ չ'ըլլար, ամէն օր իր օթոյնովը կ'երթար եւ ոչ թէ հետս կու գար...:

Աւետիսին յայտնած բերտ ճշմարտութիւններուն դիմաց Սոնա կը լռէր պահ մը, կը լռէինք բոլորս, որովհետեւ արդէն հասած կ'ըլլայինք Խնճիկի մը: Լիբանանի պատերազմի տարիներուն, Լիբանան չապրած մարդոց համար հարկ է բացատրել արտաբերէն այս հեծիկ բառը, որ կը նշանակէ անցարդէլ, աւաղի կոչուերով շրջապատուած: Բայց անցարդէլ ըսելն ալ ճիշդ չէ, կարծես՝ անցիլը արդիւրածի իմաստը կու տայ: Մինչդեռ, իրականութեան մէջ այդպէս է եւ չէ. թէ՛ կ'անցնիս եւ թէ՛ չես կրնար անցնիլ: Կ'անցնիս, երբ կասկածելի մէկը չես, անցք կ'արդիւրուի, երբ անցարդիւր աւաղէ պատնէշին դիմաց, ինքնաշարժները աչքէ անցնող-խուշարիող վիճակով կամ գինուորը ինքնութեան թուզթուզ կամ անցադիւրը քննել-տուգելէ ետք, կասկած մը կը գոյացնէ անձիկ վերայ, մա'նաւանդ՝ երբ ենթական սեւ ժազ-ժօրուքով երիտասարդ մըն է: Բայց Աւետիսը, որ յիտուեր անցած, ամուսնացած, զուկի ու թոռան տէր մարդ է, կասկած արթնցնելիք երեւոյթ չունի. ընդհակառակն, ամէն հեծիկէ անցքին, ղինուորականի նման աշխոյժ ու ժպտուն կը բարեւէ, արժուկը զուրս ցցած ինքնաշարժի պատուհանէն: Ու ստիկա ս'չ թէ մէկ, այլ տասնըմէկ հեծիկէ ալ անցնելու ըլլայ: Աւետիսին այս գեղուն յարպանքին երբեմն կ'ակնարկէինք. Միւլիան կ'ըսէր.

— Աղուոր բարեւ տալ դիտես, ժպտիտդ կը բաւէ... օր մըն ալ ծուռ մէկուն կը հանդիպիս...:

— Ձինուորին ծուռը չ'ըլլար, ես ղինուոր եղած եմ, գիտեմ, որ մարդ-մարդու պէտք կու գայ...:

Աւետիս երբեմն բարեւի ու ժպտի սահմանը կ'անցնէր, վարկեանի մը չափ կը կեցնէր ինքնաշարժը, եւ ղինուորին հալ ու թլոյթը կը հարցնէր. — «Ինչպէ՞ս էք, ղիշերը լաւ անցուցի՞ք, Աստուած ձեր հետը ըլլայ...»:

Մեր ինքնաշարժին հետեւող ինքնաշարժներու երկար պոչը աւելի կ'երկար-

քէր եւ ոչ մէկ շարժավար կը համարձա-  
կէր զամուր հնչեցնել, ենթադրելով, որ  
զինուորը ստուգումի գործողութեան մը  
ենթարկած է մեղ: Մինչ Սոնան քոյէն կը  
փսփոսայ:

— Աւետիս, կը բուէ, քչէ. ետեւնիս  
լեցուցաւ, այս գէշ օրերուն մարդիկը  
թող չսպասեն...:

— Թո՛ղ քիչ մըն ալ սպասեն. զին-  
ւոր բարեկամ ունենալը լաւ է, օր մը  
պէտք կ'ըլլայ: Գու խելքդ չի հասնիր:  
Գու խելքդ միայն մազերուդ արդուկին  
կը հասնի, այսօր... Կորէն տասը վայր-  
կեան սպասցուցիր դիս... պիտի ջէշի-  
քաճի, բայց Կորէն մեղքս եկաւ, սպա-  
սեցի:

— Եթէ իր տեղը ես ըլլայի ուշացո-  
ւոր, մէկ վայրկեան իսկ չէիր սպասեր, —  
կ'ըսէր Միւլիա, — երէկ ինչպէ՛ս վաղեցի  
ետեւէդ. խանութպանները տեսան, որ-  
քա՛ն վաղեցի օթոյիդ ետեւէն... արդէն  
հասեր էի քեռիիս խանութին առջեւ...  
դուն շորս կողմ ալ շնայեցար. եթէ հա-  
յնիկէն նայէիր, կը տեսնէիր վաղելւ...  
Հոգ չէ, եթէ բախտաւոր ըլլայի, հայրս  
չէր մեռներ եօթը տարեկանիս: Լեզուս  
ալ անուշ չէ... ես մարդոց երեսին կը խօ-  
սիմ իրենց յանցանքը. զատուցութիւն կ'ը-  
նես... Եթէ Սոնան կէս ժամ ալ ուշա-  
նայ, կը սպասես, իսկ զիս՝ ո՛չ իսկ մէկ  
վայրկեան...: Հոգ չէ, ախ գէշ օրերն ալ  
կ'անցնին. մէյ մը քս Պուրճի ճամբան  
քացուեր, ազատ համարձակ սերմիտով  
կ'երթայինք, ոչ ոքի ոտքը չէինք համ-  
բուրեր...

— Հոս նայէ, լեզուդ շատ երկար է...  
ինծի համար բոլորդ ալ նոյնն էք, ես զտ-  
տողութիւն չեմ բներ: Ի՛նչ ընեմ, այն օ-  
րը Սոնան քիչ մը շատ ուշացած էր, մեղ-  
քըցայ...

— Օր մըն ալ ինծի մեղքեր, ես Չալ-  
քայէն Պուրճ Համուտ սերմիտով կու գամ:  
Երբ ինձողում կ'ըլլայ, օթոն դժուար  
կ'անցնի: Նահր էլ-Մոթի վրայ նոր կա-  
մուրջ կը շինուի ու ճամբուն երկու կող-  
մերը դոցեր են, միայն մէկ ճամբայ կայ  
անցնելիք, լուր չունին որ քաղաքէն...  
ինչ կայ, ինչ կայ...

— Ամէն ինչէն ալ լուր ունիմ. դուն  
ալ հաշիւդ լաւ ըրէ. այդ խնդրումէն ա-  
զատելու համար կէս ժամ առաջ ճամբայ  
ելիր:

— Օհօ՛, չե՛ն հասկնար կոր... Ժա-  
մը նին կ'ելլեմ ճամբայ. երբեմն երկու  
ժամ կը տեւէ մինչեւ Պուրճ Համուտ հաս-  
նիլս: Գուք այս թաղերէն էք ու չէք ըր-  
ցար: Ատուած վրկկ... Եթէ բարտ ու-  
նենայի, եօթը տարեկանիս հայրս չէր  
մեռներ...

— Ես ալ որք եմ, Միւլիա, ինչո՞ւ  
այդպէս կը խօսիս. ի՞մ հայրս ալ մեռաւ,  
երբ ՆԱ տարեկան էի:

— Դուն դոնէ քիչ մը վայելեր ես  
հայրդ. ես հիմա հաղիւ ոգէ՛մքը կը լի-  
չեմ...

— Շատ երկարեցիք, պէ՛, — գոռաց  
Աւետիս. — վերջին որոշումս է. ո՛չ քե-  
զի սպասել կայ, ոչ ալ քեզի: Հոս նայէ,  
Սոնա, եթէ ժամը Ցը հինգ վայրկեան  
անցած Մեարտիան վարժարանին առջեւ  
չդտնեմ քեզ, կը քեւ-կ'երթամ: Իսկ  
դուն՝ Միւլիա, երեք վայրկեանէն քնուիդ  
խանութին առջեւ կ'ըլլամ, «Սոֆիա Յա-  
կոբեան Գուլճճին քով: Ուրեմն այս-  
պէս, ամէնէն ուշը, ժամը Ցը 15 վայր-  
կեան անցած կը մեկնիք այդ վերջին կա-  
յանէն. մէկ վայրկեան իսկ չեմ սպա-  
սեր... Ես ձեր նպր քաշելու սիրտ չու-  
նիմ: Կնիկիս նազը չեմ կրնար կոր քա-  
շել...



Աւետիս, Սոնան եւ Միւլիան կ'աշխա-  
տէին Համուտի Լափոնքին վաճառատու-  
նր. ամէն առաւօտ պէտք է անցնէին Պէյ-  
րութի արեւելեան շրջանէն արեւմտեան  
շրջանը: Իրենց անցքին զէս ալ կը տա-  
նէին: Աւետիս ճարպիկ եւ զգործը զիտ-  
ցող մարդ էր, եւ իրաւունք ալ ունէր  
այդպէս ըլլալու: Վերջապէս, պնդիմին  
ծախար կ'ելլէր գոնէ: Ի՛նչ էր որ շահա-  
ծը, հսկասակ անոր, որ մեծ ու բնդար-  
ձակ վաճառատան ծանր ապրանքները կը

չալկէր, կը տեղաւարէր վերի ու վարի յարկերը, շտեմարանը, կը պարպէր նաւահանգիստէն բեռնակառքերով նոր բերուած ուղարանքները, մկաններուն եւ մէջքին ուժը կը սպառէր բեռներու ծանրութեան նետ մարտնչելով, ու անոնց փոխարէն բեռնակիրի խղճալի վարձատրութիւն մը կը ստանար, ինչ որ կ'ընդօղակէր ինչը պիտի ըլլար:

— Այսօր խաւածային պիտի ըսեմ. թէ այլեւս դործի պիտի չբերեմ. վերջին ամիսս է. դուք ալ ձեր գլխուն ճարին նայեցէք: Աւրիչ դործեր շատ կան, ասկէ աւելի կը շահեմ, — ըսաւ Մարտ ամսու վերջերուն:

Մննան, վաճառատան քարտուղարուհին, այնքան ալ չէր մտահոգուեր Աւետիկին սպառնալիքէն. իր սեղիական ինքնաշարժը ունէր, որուն (եւ իրեն) աւելորդ ծախս եւ յոգնութիւն խնայելու համար էր, որ Աւետիկին հետ դործի կ'երթար-կու գար, փոքր դուժարով մը վարձատրելով գոյն: Սիւլման նոյն վաճառատան դանձիւն էր, դրամարկիին պոտտախանաւուն, հինգ-վեց տարուայ տղա-տանկալ մը, որ սակայն նախանձիկի գուժար մը չէր գանձեր, եւ որուն համար դժպտէ էր, ոչ թէ Մոնտային նուազ ամսաթոշակ ստանալուն, այլ, մանաւանդ՝ հօրը մահուան պատճառով դպրոցը կէս ձգելուն, ուսումը չկարենալ շարունակելուն համար: Եթէ պրովէ մը ունենայի, գոնէ՝ անբրիֆիքս մը, իմ բախտս եւ դործս տարբեր կ'ըլլային, կ'ըսէր յաճախ, խօսքը առաւելարար ուղղելով Սոնային, որ յոխորտանքով կը յիշէր «Սրբուհի Ազնէս» վարժարանէն պրովէ ստացած ըլլալը, որուն իբր փաստ իր խօսած հայերէնը կը դարձարէր Փրահսկերէն բառերով: Հայերէն նախապատճեան մը բառերուն երկու երրորդը Փրահսկերէն կ'ըլլար, ու անոր համար կարծես պատիւ կը զգար, թերապէս հասելով հայերէնը: Օր մը ինքնաշարժին մէջ ետին դառնալով հարցուց ինձի.

— Փարսալիին հայերէնը ի՞նչ է:  
— Գրախոս, — պատասխանեցի, —

բայց միտքիս... գտողն էր, ուր ուղեցի նետել այս շփոցած ազլիկը, որուն միակ մտահոգութիւնը իր անձն էր, եսն էր:

— Մազերս լաւ Փեր եղա՞ծ են. ճիշդ մէկ ժամ գրի: Երէկ ձեռնի դասցինք. արեւն մտնաւ: Աղուոր էր Փիլմը. Ոհիւններս հետոյս տարի. այնքան ամառէ եղանք... Գիւլերը շատ լաւ քնացայ. ա՛... ա՛... ա՛... (կը յորանջէ) այդքան լաւ քունէ ետք դեռ կը յորանջեմ: Սիրաստ բնու դործի երթալ շ'ուզեր. անկողին մը ըլլալը՝ պատկէ ինք...:

— Եթէ կ'ուզես, ես տուն տանիմ քեզ, — կ'ըսէր Աւետիկ միամիտ կատա-կով:

— Չէ՛, գործն ալ լաւ է... արդէն ինչ կ'աշխատիմ որ. մինչեւ վերջ կը կարգում, քանի մը քելեմ կու գայ, քանի մը հասա ալ կը դրկենք. քանի մը նամակ, Ամբողջ օրը հաղի մէկ ժամ աշխատանք:

— Ես ալ, Բնսին առջեւ, դուրս կը դառնայ հաշիւ ընելէն: Յաճախորդներն ալ՝ մաշալլա... զիրար կը հրճուակեն... բայց խաւածան դարձեալ դժգոհ է:

— Անշուշտ դժգոհ կ'ըլլայ. դիտե՛ս սուլարը որքան բարձրացեր է, ոսկին՝ սրբուն: Մարդը վաճառական է. դրամին ելլել-թիւնը մեծ մնա կու տայ: Ելեֆլա-սիտն, անվալիտասիտն, — կ'ըսէր Սոնա, մինչ Աւետիկ՝

— Հայերէն խօսէ ալ բան մը հասկը-նանք բառէդ...

\*  
\*

124րդ օրն է, որ կը սպասեմ պարոն Սիրականին խանութին առջեւ: Աւետի-սին ճիշդ ժամանակին դալը կախում ու-նի Սոնային արթննայէն եւ մայրուն յարգարանքէն: Մինչ մենք, մայրին վը-րայ, ժամանակ զանցընելու համար գը-րոյց մը կը սկսինք պարոն Սիրականին եւ պարոն Մոյսէսին հետ, որոնք խանութը քացած են: Յաճախորդները՝ զիչ են ա-ռաւօտեան ժամերուն, բայց քանի որ եր-կու ընկերներ են՝ կարելի կ'ըլլայ դրու-



ցել մերթ Միրակունին եւ մերթ Մովսէսին հետ: Եթէ պարոն Միրակունին շնորհակալ օրաթերթի հկած է, կը սկսի կարգալ: Երբեմն թերթը ձեռին կը ժօտենայ ինծի եւ օրուան հարցերը կ'ուզէ վերլուծել:

— Պատերազմ է կ'ըսենք, սղութիւն է կ'ըսենք, բայց եթէ դուռներուն առջեւ նստուած աղբերուն աչք մը նետես, լինուն են Հացոյժ. հո՛ց կը թափեն... Աստուած վկայ, մեր ժողովուրդին փողոց նստած հացոյժ ամբողջ Հնդկաստանի կամ Վիեթնամի անօթի մարդիկը կը կշտանան: Քաղաքի մը բնակչութիւնը կը կըշտանայ մեր նետած Հացերով: Ասիկա մեղք է եւ մայրազուծիւն:

— Մեղքը ո՞րն է, պէ՛... — կը պատասխանէ Մովսէս, — Աստուած չկայ, որ մեզք ըլլայ... վայրենացած ենք, զանազան ենք բոլորս ալ, հայ կը թափենք, մեր ծերերը մեր տուներէն կը քշենք, նայէ, նայէ՛, սա եկող աղջկան տարաւորն նայէ, փո՛ւ... աչիսնք՝ դիտե՛ս ինչ ըսել կ'ուզէ... ես ասիկա՛ ունիմ, դուն ի՞նչ ունիս... ունիմ, պապս, ե՛ս ալ ունիմ, դո՛ւն ալ ունիս, ո՛ն ալ ունի... ասիկա յայտարարելու ինչ կայ, շատ բնական բան մըն է, բայց այս աղջկան ըրածը ուղղակի մեղա՛յ, մեղա՛յ... Ամօթի վերջուած է ախարհէն. եթէ Աստուած ըլլար, կը զարնէր բոլոր անասօթներու գլխուն:

— Երէկ գիշեր բնաւ յենացանք: Մեր դրացիին աղջկան տարեգարձն է եզեր: Երգ, պար, կերուիտեմ. խոշոր ոչխար մը լնցուցեր են. ճաշարանէն քերք են ամէնէն քիչը տասը հարկար օսկի ծախս եղաւ... պարտոյ տեղ թափուցաւ այդ զրամը: Եթէ «Թուրքոս Բոյն», «Մերանոց» կամ «Վուրմուր» տային...

— Ծերանոց ըսիր նէ... Կոր ծերանոց մը պիտի շինուի եղեր. հիմա Վեդալի մէջ կարդացի. այնքան հանգստուէտ ու լաւ բան մը պիտի ըլլայ որ. ասոնէ ետք կ'արժէ շուտ ծերանալ:

Կը շարունակենք զրոյցը մայթին վրայ՝ Աւետիսին սպասելով: Կը մտածեմ

Սոնային մասին, իր մեղքահամ լեզուին, զոր նմանցուցած էի շաքարով պատած դառն զեղահամի վրան՝ քաղցր, տակը մէջը լեզի: Մտածումս կը հետանայ ու կը խորանար ո՛չ միայն այդ պահուն, մայթին վրայ, այլեւ՝ ինքնաշարժին մէջ ալ, մինչեւ զործի հասնելս, երբ դէմս նստած կ'ըլլայ Սոնան, թիկունքը՝ դէմքին, աչքերս՝ մազերուն աւազաթ ուրբուածքին: Ինչեք լին անցնիր մտքս. այս ալ մէկը պիտի խաբէ եւսական անուշ լեզուով: Իսկ տղաքն ալ որքան շուտ կը խաբուին անուշ լեզուներէն... Սոնան կը բաղդատեմ Միլիային հետ, երկուքն ալ զրեթէ նոյն տարիքի երիտասարդուհիներ: Միլիան կեղծիք չունի, կը խօսի պարզ, ասանց յետին օկնարկներու: Դանուծիւն մը ունի, որ կու գայ ո՛չ միայն իր որբութենէն, այլեւ՝ հիւանդ ծօրմէն, որ անկողին վաղած է տարիներէ ի վեր ու ինք ստիպուած է սոսն գործերով ալ գրադելու, օրուան յոյնութենէն ետք: Մինչ Սոնան հագու մէկ ժամանոց կործ մը պիտի կատարէ, յետոյ՝ սիրային կամ զաղտնի սաստիկանական վէպ մը պիտի կարդայ — անուշ շուտ Փրանսերէն — երեկոյեան տուն պիտի վերադառնայ Աւետիսի կողքին բարձր, պիտի նստի պատկերասրահին վրայ, մայրը ընթրիքը պիտի պատրաստէ, պիտի ուտէ, պիտի շորունակէ շիտեկ օրուան յայտարարը, յարորդ տասուտ հաղորդելու մեզի:

— Երէկ Թիւրքիոյ Քիլի մըն էր... մինչեւ ժամը 12 պիտեցի, յետոյ պատկերացայ — կը յօրանջէ — զունս կու գայ, անկողին մը ըլլար՝ պատկէիք:

Այսքան մտածում մայթին վրայ, երբ Աւետիսը ուշանայ, երբ Մովսէսին յանտարողները բազմանան, երբ նոյնիսկ ինծի բարեւոյցները մօտենան ու ըսեն.

- Ի՞նչ կը սպասես:
- Ինքնաշարժ:
- Օ՛, օրբորդ, օքօ մը տու այլեւս, քեզի օթօ մը կը վայելէ, այսպէս սպասել կ'ըլլայ...

— Չ'ըլլա՞ր... Ինչո՞ւ... բայց ինչո՞ւ չ'ըլլայ, նաեւ՝ կ'ըլլայ. ես չեմ ուզեր շոփէօր ըլլալ... այնքան շատ են, որ չոփէօները...

«Այրած սրտի մխիթարանք» չէր ստիկա՝ բուրբուրէն. դարձանալի, բնա՛ւ կարեւորութիւն չեմ տուած այնքան կարեւոր սա բարիքին, դարուս անհրաժեշտ նկատուող այս մեծ պիտոյքին ու պերճանքին, բայց զարն ալ իր պահանջները ունի (երեւի)... Ոչ թէ դարը, այլ մարդիկ իրենց պահանջները ունին, որպէսզի փողոցը հաց թափեն, աղբիկները իրենց ծննդեան տարեգարձները ածեն ուշադրութիւն դրուելու համար, ամէնէն սուզնոց կօշիկներն ու հագուստները հազնին: Մովսէսին ատած նեղ տարատներով ման գան եւ ան ինքզինքէն ելած ջղուշնանայ, ըսէ. — Եւ, Եւ, Եւ, ճի՛շդ այդտեղը կ'երեւի. մեղա՛յ, մեղա՛յ... Աստուծոյ չեմ հաւատար, բայց նորէն զմեզա՛յ» կ'ըսեմ. կ'երեւի բան մը կայ ասոր մէջ...



Բեռնատար կառք մը կանգ առաւ խոնոթին առջեւ եւ ազդանքներ բերաւ: Փնփնի ֆոլայի, գարնջուրի սնտուկներ, հակիթիներ՝ հատիկ-հատիկ շարուած սնտուկներու մէջ: Խօսքը ուղղելով ինծի՝ Մովսէս կ'ըսէ.

— Այս հակիթները ընտիր են. կը բերեն Ռայաքէն, Չահլէն, Այնճարէն, Եթրոյսէն: — Կը սկսի ծանր սնտուկները կրելու աշխատանքին.

— Յիւսիստի ֆիւրիւստիւ... Մանրութեան հեւքին հետ կը շարունակէ խօսիլ ինքնիրեն հետ. — Աստուծոյ չեմ հաւատար կ'ըսեմ, բայց Յիսուս Քրիստոսն ալ անզաղար օգնութեան կը կանչենք. Ի՞նչ է ասոր գաղտնիքը՝ չեմ գիտեր: Մեր եկեղեցին, մեր եկեղեցին չէր կայ, բոլորն ալ սատանաներու հետ կ'աշխատին: Հաւատք-մաւաթ չկայ. ժողովուրդը կը խաբեն... Քիչ ետք պահ մը կանգ կ'առնէ, նոր շունչ մը կը քաշէ, նոր ուժով շարունակելու ու բեռնակառքի

ապրանքին պարպումը: Բայց կառքին շօտեցած՝

— Դուքն Հայաստան գացե՛ր ես, — կը հարցնէ, — ու առանց պատասխանիս սպասելու.

— Գիւղ մը կայ, չեմ յիշեր անունը, Անդրանիկին տրձանը շինելը են: Ի՞նչ էր... հը՛մ... չեմ յիշեր... չի՛շեց: Բաւական մտմտաց, ուղեցի օքնութեան հասնիլ իրեն...

— Ուշան... — Հա՛, այո՛... Ուշան... գացե՛ր ես:

— Ձե՛մ դացած, բայց լսած եմ: Բայց Ի՞նչ կապ Ուշանին եւ սա շարկած ապրանքիդ միջեւ, — կը հարցնեմ դարձացած:

— Հայաստանը յիշեցի... անցեալ տմառ գացած էինք... Հայաստանի դիւղերը... Հոն ալ տապալու խոշոր հակիթներ տեսնեք... տղուքը դիւղ էր... մեր վերջին կոտորել Հայաստանն է... Գնա՛, այս ամառ եթէ Հայաստան այցելես՝ անպայման Ուշան գնա եւ տես Անդրանիկի արձանը... Անպայման, — կ'ըսեմ ու կը նայիմ հեռուն՝ Աւետիսին սպասուժով:

Մօտս կայնած պարոն Սիրական «Ազդակ»-ն կը վերցնէ աչքերը եւ կը կեդրոնանայ մայթին այս կողմէն միւս կողմ անցնող մարդու մը վրայ. երկար կը նայի, եւ կը հետեւիմ Սիրականի նայուածքին: Մարդը ճամբուն միւս կողմը կ'անցնի մտասայլ, կորաքամակ, կարծես մէջքիցս ունի ու չի կրնար շտկուիլ...

— Այս մարդուն ալ մեզք եղաւ, — կ'ըսէ Սիրական, — չորս օրէ ի վեր տղան կորուսած է, չեն գտներ. ամէն կողմ փնտռեցին, չգտան: Երիտասարդ, հալիւ 18 տարեկան անուշիկ տղայ մըն էր. մեր խոնոթին առջեւ միշտ պահակ կը կենար: Չորս օրուան մէջ մարդը ծերացաւ: Յետոյ, կը կանչէ մարդուն հետեւէն.

— Յակո՛բ, Ի՞նչ լուր Չարեհէն:

Մարդը պատասխանի վտխարէն զըլուխը վեր կը շարժէ մխտականի նշանով.

— Ինչ պէ՛տք բան է զաւակ կորսնցնեմ

լը, միայն թէ սպաննուած շըլլայ, — կ'ըսէ Սիրականն. — Ի՞նչ բարի եւ լուրջ երիտասարդ էր, հազիւ պատանութենէ ելած:

Ես կը մտածէի Սիրականին նկարագրած պատանի-երիտասարդին կորուստին, անոր հօրը խղճալի կացութեան ու հողիին ցաւին, երբ Աւետիսը եկաւ: Տըխուր արամազրութեամբ բարձրացայ կատօ: Ոչինչ ըսի չուրջիներուս. ինչ հարկ առտող կանուխ Աւետիսին եւ աղջկաներուն արամազրութիւնը պղտորեցու, մանաւանդ Սոնային, որ չես դիտեր ինչ անուշ երազէ մը արթնցած՝ կ'երթայ դործի, մանաւանդ՝ որ վերջին օրերուն կը պատրաստուէր պարահանդէսի մը՝ հաշուաւ-կօշիկի, դիշերային արդուագործի մասհողութեամբ: Հարկ է գտնել ամէնէն աշխուռ զարդեղէնները, երեւեալ ինքնատիպ, օրիժնալ:

— Այսօր շուկայ պիտի իջնեմ, Համբարայի վարժիկներուն մէջ թերեւս գտնեմ յարմար հագուստ մը, — ըսաւ Սիրվառին:

— Ապրիլին պարահանդէս պիտի շըլլայ, լուր չունի՞ս:

— Ինչո՞ւ...

— Եղիտնի յիշատակին բողոքի արտայայտութիւն, նաեւ՝ յարզանքի ցոյց մեր նահատակներուն համար:

— Ուրիշ հազ չունին պարահանդէսնե՞րը կ'արդիւնեն. շըլլալիք բան է. ես անանկ Փանարիժ բաներ չեմ սիրեր:

— Ի՞նչ չես սիրեր, — միջամտեց Աւետիս:

— Ես Ֆանսթիգմի հակառակ եմ. ամէն ինչ իր օրին. մենք հիմա երիտասարդ ենք, ամիւզէ պիտի ըլլանք...

— Ինչ պիտի ըլլա՞ք, — դարձեալ հարցուց Աւետիս. — հայերէն խօսիք, պէ՛. հօ՞ք... կարծես նաև կը չիմեմ. այդ ըսած բառերուդ հայերէնը կայ անկասկած. դուն ըսէ, չկա՞յ...

Ոչինչ պատասխանեցի, միտքս՝ կորսուած երիտասարդին վրայ էր. իսկ սա երջանիկը ոչինչ տեղեակ՝ իր աշխարհը կ'ապրէր, իրեն ինչ Հայկական Դասը,

Յեղասպանութիւնը, նահատակներու յիշատակը: Կարեւորը պարահանդէսի մը ներկայ ըլլայն էր, եւ զարդարուելու համար՝ Պարն Համուտի բազմազան և զարմանազան պութիքներու հազուադէպուն մէջէն հաստ մը շէր կրցած գտակ, դեռ պիտի շըլլէր Համբարայի վաճառատուները, օրուան ամէնէն դեղեցիկը երեւեալու յորտով:

— Երևամ այդ օր հաստ մը կը գտնեմ, սանկ, աղուոր փեսայ մը, — ըսաւ Աւետիս հեղեանքով:

— Համի՛ս, պարոն Աւետիս, ջու կատակներդ միայն կ'նշուց կրնաս հասկցնել: Պարահանդէս երթալ փեսայ փնտրել չի նշանակեր. մենք երիտասարդ ենք, պիտի ուրախանանք:

— Գալ ամիս շըլլա՞ր այդ ուրախութիւնը. Մայիսին...

— Գալ ամիս ալ կ'երթանք. քէ՞ք ընողին քէ՞ք չի պակտի՞ր՝ կ'ըսեն, չէ՞...

Իսկ ես յիշեցի լիբանանեան պատկերափիւտին մէկ յայտագիրը՝ «Տիւննա հէյն»ը, ու զարմացայ Սոնային անտարբերութեան՝ հանդէպ մեր ցաւերուն, սա պատերազմի օրերուն ստեղծուած չփութին մէջ, քաննաներու հարուածներուն տակ, որոնց միջեւ ինք՝ երջանիկ արարած, կ'ապրէր մտահողութիւնը իր մազերուն յարզարանքին, իր դեղեցիկութեան, անուշարոյր լողանքին, դէպի միւսի կիրակնօրեայ պտոյտներուն, շարժանկարային ճաշակներուն...



Երկու օր ետք, նոյն մայիսին վրայ, Սիրականը իր օրաթերթով: Մովսէսը կայնած է ու կը նայի անոր ուղղութեամբ, Վերաց Քառասնից Մանկանց՝ եկեղեցիէն կը ձայնափռուի Արեւազայի արարողութիւնը, որուն ակնարկելով՝ Մովսէս կ'ըսէ.

— Աղօթե՛լ... Մարաշի մէջ մեր Հայերը որքա՞ն աղօթեցին, դարձեալ չփրկուեցան. ո՞վ լսեց, Աստուած լըսե՞ց... Փրանսացի՞ն, դերմանացի՞ն լը-

սեպին... բոլորին ալ վիզը կտրուի: Ես  
քնաւ չեմ հաւատար մ'չ պատուելիքն,  
ո՛չ տէրտէրին, ո՛չ ասոր, ո՛չ անոր:  
Մարդուն ազան գնաց, չզանուեցաւ...  
վեց օք եղաւ... մեռա՞ւ, թէ ողջ է, ո՛չ  
ոք դիտէ:

Ճիշդ նոյն պահուն մօտէն անցաւ  
մարդ մը: Ձաւակը կորսնցուցած հօր նը-  
մանդուցի: Նկատեցի, որ փոխուած էր,  
ժպիտ ունէր եւ մէջքը շտկուած: Երեւոյ-  
թը Սիրականին ուշադրութեան յանձնե-  
ցի:

— Սա մարդը զաւակը կորսնցուցած  
երէկուան մարդը չէ՞, գտա՞ւ զաւակը,  
կարծես գտնուած է, որովհետեւ...

— Ո՛չ, ճանրմ, դեռ երէկ իրիկուն  
հեռն էի, երկար ժամեր մխիթարեցինք,  
մի յուսահատիք, Աստուած մեծ է ը-  
սինք...

— Աստուած...: Դո՞ւք ալ մարդը  
խորեցիք: Աստուած ըտելով, — ընդմի-  
ջեց Մովսէս աւ նայեցաւ մարդուն կող-  
մը, — չէք տեսնե՞ր, որքան անյոյս կը  
բալէ:

— Կը սխալիս. ես մարդը շատ փոխ-  
ուած կը տեսնեմ. երէկ մէջքը կրտուած կը  
բալէր, մայթին այս կողմէն միւս կողմը  
զանդաղելով կ'անցնէր, այսօր երկու  
բայլով անցաւ. վստահ եմ, որ զաւակը  
գտնուած է:

— Ձեմ կարծեք, բայց հարցնեմ, —  
ըսաւ պարոն Սիրական աւ կանչեց մար-  
դուն հասեցնի.

— Յակոբ, բ՞նչ լուր Ձարեհէն,  
գտնուեցա՞ւ...

— Յոյս մը կայ. գրեթէ... տեղ մը  
բանտարկէր են... քովը ինքնութեան  
թուզթ ջունի կղեր, իբրեւ անծանօթ,  
կասկածելի՛ քանի մը օր բանտարկէր են,  
բայց երբ մեր տկումբէն փնտռեցին եւ  
վկայեցին, որ մեր աղոյժէ է... իրիկու-  
նը պիտի գայ...

Երեքս մէկ ապշեցանք, մնացինք  
լուս, բայց ուրախ: Սիրական ինծի հար-  
ցուց.

— Ի՞նչ բան քեզ մզեց հաստատելու,  
թէ աղան գտնուած է...

— Անք շունի՞ք, եղբա՛յր, երէկ մար-  
դուն մէջքը Եսած էր, կարծես պիտի փը-  
լէր, այսօր ուղիղ կը քալէ, չորս կողմ կը  
նայի, կարծես ըսել կ'ուզէ բոլորին. ու-  
րախացէք հետս, զաւակս կորսուած էր  
եւ գտնուեցաւ:

— Հա՛յր է, ի վերջոյ, — ըսաւ Սի-  
րական, — հա՛յր...

— Մայրերը կը կարծեն, որ միայն  
իրենք կը ցաւին իրենց զաւակներուն կո-  
րուստին. հայրերը ներսէն կը մխան...  
հա՛յր է, կը լսե՞ս, հա՛յր, հա՛յր...

ՇԱՀԱՆԴՈՒԿՏ

Ժ. Խ. Ժ Պ Ր Ա Ն

**Մ Ա Ր Գ Ա Ր Է Ն**

**ԺԴ.— ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԻՐՔԻ ՄԱՍԻՆ**

Եւ դարձեալ խօսեցաւ քրմուհին ու ըսաւ.

— Խօսէ՛ մեզի Բանականութեան եւ Կիրքի մասին:

Եւ ինք պատասխանեց, ըսելով.

— Ձեր հոգին յանախ ազգադաշտ մըն է, ուր ձեր բանականութիւնն ու գաղափարները կը մարտնչին ձեր կիրքին եւ ցանկութեանց դէմ:

Պիտի ուզէի խաղաղարար մը ըլլալ ձեր հոգիներում, որ այդ տարրերուն անհաւանազանութիւնն ու մրցակցութիւնը կարենայի վերածել միութեան ու ներդաշնակութեան:

Ինչպէ՞ս պիտի կարենայի սակայն այդ ընել, եթէ երբեք դա՛ւք իսկ չըլլաք հաշտարարներն ու, մա՛նուանդ՝ բարեկամները ձեր բալոր տարրերուն:

↓

Ձեր բանականութիւնն ու կիրքը զեկն ու առաջատներն են ձեր ծնվագնաց հոգիին:

Եթէ պատուովն ձեր առաջատները կամ կոտորի զեկը, կը տատանիք, կը շշուիք հասանձներէն կամ կը մնաք խարսխուած ծովուն բացերը:

Որովհետեւ բանականութիւնը, միանձնամ իշխելով, սանձաւարազ ուժ մըն է. իսկ կիրքը չգոհացուած բաց մըն է, որ կ'այրի միմչեւ իր սեփական ոչնչացումը:

Ուրեմն, ձեր հոգին թող սլացք տայ բանականութեան, միմչեւ որ անկա հասնի կիրքի բարձրութեան ու կարենայ երգել:

Եւ թող բանականութեամբ առաջնորդուի կիրքը, որպէսզի ապրելով համապատգործեայ յարութեամբ, փիւնիկի մը պէս վերածնի իր սեփական մոխիրներէն:

Պիտի փափաքէի, որ ձեր գաղափարներն ու ցանկութիւնը նկատէիք ձեր տան մէջ իբրեւ երկու սիրեցեալ հիւրեր:

Անտարակոյս, պիտի չուզէիք ձեր հիւրերէն մէկը աւելի պատուել, քան միւրը, որովհետեւ ան՝ որ աւելի ուշադիր կ'ըլլայ մէկուն, կը կորսնցնէ աէրն ու վստահութիւնը երկուսիմ ալ:

Երբ նստած էք, բլուրներու միջեւ, բարտիներու գով շաւիմ, ըմբռնեցեալ խաղաղութիւնն ու անդորրութիւնը հեռաւոր դաշտերուն եւ արօտներուն, քաղ ձեր սիրտն ըսէ լուսեանք. «*Աստուած կը հանգչի բանակահանութեան մէջ*»:

Եւ երբ պայթի սուրբապը եւ սաստիկ փոքորիկ մը դղրդէ անտառը եւ որոտումն ու կայծակը հռչակեն երկինքի փառքը, այն ատեն քոզ ձեր սիրտն թո՛ւ երկիւզածութեամբ. «*Աստուած կը խլրտի կիրքին մէջ*»:

Եւ քանի որ շունչ մըն էք Աստուծոյ երկրագունդին վրայ եւ տերեւ մը Անոր անտառին մէջ, պէտք է որ դո՛ւք ալ համզիք բանակամութեամբ եւ շարժիք կիրքով:

#### ԺԵ.— ՎԻՇՏԻ ՄԱՍԻՆ

Եւ կին մը խօսեցաւ, ըսելով.

— Խօսէ՛ մեզի Վիշտի մասին:

Եւ ինք ըսաւ.

— Ձեր վիշտը խորտակումն է պատեանին, որ կը պարփակէ ձեր հասկացողութիւնը:

Ինչպէս որ պտուղի մը կտուրը պէտք է կտորի, բերելու համար իր միջուկը արեւին, այնպէս ալ՝ պէտք է նանչնաք վիշտը:

Եւ եթէ կարենայիք նոյնիսկ պահել ձեր սիրտը, ձեր կեանքի ամէնօրեայ հրաշքներուն գմայլանքին մէջ, ձեր վիշտը պիտի չքուէր նուազ սեռանչելի, քան ձեր ուրախութիւնը:

Եւ պիտի ընդունէիք ձեր սրտին եղանակները այնպէս՝ ինչպէս որ միշտ ալ ընդունած էք եղանակները, որ կ'անցնին ձեր դաշտերուն վրայէն:

Եւ անդորրութեամբ պիտի հսկէիք ձեր կսկիծներու ձմեռներուն:

Ձեր վիշտերուն մեծ մասը դուք ընտրած էք:

Ատիկա դռան դեղաբուրն է, որով բժիշկը ձեր մէջ կ'ամօժէ ձեր հիւանդ հոգը:

Ուրեմն, վստահեցէ՛ք բժիշկին եւ խմբեցէ՛ք անոր դեղը լուսեանք եւ հանդարտութեամբ:

Որովհետեւ իր ձեռքը, թէեւ ծանր ու կարծր, առաջնորդուած է Անտեսանելիին գորովագութեամբ ձեռքէն:

Եւ բաժակը, զոր կը մատուցանէ, թէեւ կ'այրէ ձեր շրթները, բայց շինուած է այն կաւէն, որ թրուտը քրքած է իր սրբազան արցունքներով:

ԺԳ.— ԻՆՔՆԱՃԱՆԱԶՄԱՆ ՄԱՍԻՆ

Եւ մարդ մը ըսաւ .

— Խօսէ՛ մեզի ինքնամանան մասին :

Եւ ինք պատասխանեց, ըսելով .

— Ձեր օրոքը լռելեայն գիտեմ գազոնիքները ցերեկներուն եւ գիշերներուն :

Սակայն ձեր ակամքները կը տեղան իմանալ ձեր սրտի գիտցածին արձագանքը :

Պիտի ուզէիք գիտնայ բառերով ինչ որ միշտ ալ համշցած էք մտածումով :

Պիտի ուզէիք ձեր մտտերով զպչիլ ձեր երազներուն մերկ մարմինին :

Եւ լաւ է, որ այդպէս ընէք :

Ձեր հոգիին բաժուն ալը պէտք է ծայրփի եւ կարկաչելով հասնի ծով . եւ ձեր անունը խորութիւններուն գանձը պէտք է յայտնուի ձեր աչքերուն :

Բայց բոզ երբեք կշիռք չգտնուի՝ կշռելու համար ձեր անծանօթ գանձը . եւ մի խուզարկէք ձեր գիտակցութեան խորքը ձողերով աւ դուրերով :

Որովհետեւ եսը ծով մըն է անասեման աւ անչափելի :

Մի ըսէք . «Գոտած եմ նշարտութիւնը», այլ միայն՝ «Գոտած եմ նըշարտութիւն մը» :

Մի ըսէք . «Գոտած եմ հոգիի ուզին», այլ միայն՝ «Հանդիպած եմ հոգիին, որ կը փայլէ իմ նաճրէս» :

Որովհետեւ հոգին կը փայլէ բոլոր ճամբաներուն վրայ :

Հոգին չի փայլեր գիծի մը վրայէն, ոչ ալ կ'անի եզէրի մը նման :

Հոգին լուսասի մը նման կը բացուի անհամար բերքերով :

ԺԵ.— ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Այն ատեն ռուսացիչ մը ըսաւ .

— Խօսէ՛ մեզի Ռուսացման մասին :

Եւ ինք պատասխանեց .

— Ոչ ոք կրնայ յայտնել ձեզի տաքերը բան, բացի անկէ, որ արդէն մտախնայ կը հանգչի ձեր գիտակցութեան արշալոյսին մէջ :

Ռուսացիչք, որ իր աշակերտներուն հետ կը մեմէ տաճարի տուներին, իր իմաստութեանէն չէ, որ կու տայ միայն, այլ մա՛նասանգ՝ իր հաւատէն աւ իր սէրէն :

Եթէ իսկապէս իմաստուն է ան, չի՛ հրաւիրեր ձեզ մտնելու իր իմաստ .

տուրքեան տուճը, այլ կ'առաջնորդէ ձեզ ձեր սեփական մտքի սեմինն:  
 Աստղագէտը կրնայ ձեզի խօսիլ միջոցի ըմբռնումիմ մասին, չի կրնար  
 սակայն ձեզի տալ իր ըմբռնումը:  
 Երածիշտը կրնայ ձեզի երգել այն կշռոյթով, որ կը թրթռայ ամբողջ  
 միջոցին մէջ, բայց չի կրնար ձեզի տալ կշռոյթն ըմբռնելու ակամօքը, ո՛չ ալ  
 ձայնը, որ կ'արձագանգէ անոր:  
 Եւ այն, որ խորացած է թիւերու գիտութեան մէջ, կրնայ խօսիլ չափ  
 ու կշիռի բնագաւառէն, բայց չի՛ կրնար ձեզ առաջնորդել հռն:  
 Որովհետեւ մարդու մը տեսլականը չի՛ տրամադրեր իր թիւերը ու-  
 բիշի մը:  
 Եւ ինչպէս որ ձեզմէ իւրաքանչիւրը առանձինն կը կանգնի Աստուծոյ  
 ճանաչողութեան մէջ, այնպէս ալ՝ ձեզմէ ամէն մէկը առանձինն պէտք է մը-  
 նայ Աստուած ճանչնալու եւ աշխարհն ըմբռնելու իր տեսակետին մէջ:

ԺԸ.— ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եւ պատանի մը քառու .  
 — Խօսէ՛ մեզի Բարեկամութեան մասին:  
 Եւ ի՞նչ պատասխանեց, բսխով .  
 — Ձեր բարեկամը պատասխանն է ձեր կարիքներուն:  
 Ձեր դաշտն է ան, ուր կը ցանէք գուրգուրանքով եւ կը հնձէք երախ-  
 տագիտութեամբ:  
 Եւ ձեր սեզանն ու թեախն է ան:  
 Որովհետեւ դուք անոր կու գաք ձեր անօթութեամբ եւ գայն կ'որսնէք  
 խաղաղութեան համար:

Երբ ձեր բարեկամը իր մտածումը յայտնէ, մի՛ վախճաք ձեր սեփա-  
 կան մտքի «ոչ»էն, ոչ ալ անոր մերժեցէ՛ք «այո»ն:  
 Եւ երբ ան յուս մնայ, թող ձեր սիրտը չդադրի անորն ունկնդրելէ:  
 Որովհետեւ առանց խօսքի՛ բարեկամութեան մէջ ամէն խորհուրդ, ա-  
 մէն փափօ՛ք եւ ամէն ակնկալութիւն ծնունդ կ'առնեն եւ կը բաշխուին համր  
 ուրախութեամբ:  
 Երբ կը քաժնուիք ձեր բարեկամէն, մի՛ տրտմիք .  
 Որովհետեւ ինչ որ ամէնէն աւելի կը սիրէք անոր մէջ, աւելի պիտի  
 յստականայ անոր բացակայութեան, ինչպէս լեռը՝ դիտուած դաշտէն, լեռ-  
 նագնացին համար:  
 Եւ թող ձեր բարեկամութեան մէջ ուրիշ նպատակ չըլլայ, բացի հե-  
 զեկան մտքնութենէն:  
 Որովհետեւ սէրը, երբ իր սեփական խորհուրդի ծագումէն տարբեր  
 քան մը կը փնտռէ, սէր չէ՛, այլ՝ նետուած ուղկան, որ կ'ընտան միայն ան-  
 պէտքը:



Եւ ձեր լաւագոյնը թող ըլլայ ձեր բարեկամին համար :  
 Եթէ պէտք է, որ ան համչնայ տեղատուութիւնը ձեր յուզումներուն,  
 թող ճանչնայ նաեւ անոնց մակընթացութիւնը :  
 Որովհետեւ ի՞նչ բանի համար է բարեկամը, եթէ գայն պիտի փնտռէ  
 լսկ ժամանցի համար :  
 Փնտռեցէ՛ք գայն միշտ կենսաւէտ ժամերու համար :  
 Որովհետեւ անոր կ'իյնայ ձեր կարիքները գտնացնել եւ ո՛չ թէ լեցնել  
 ձեր պարապը :  
 Եւ բարեկամութեան քաղցրութեան մէջ թող տեղ գտնեն ծիծաղն ու  
 եւհեղեղներու բաշխումը :  
 Որովհետեւ ամնչան բաներու ցօղին մէջ է, որ սիրտը կը գտնէ իր  
 արշալոյսն ու կը քարմանայ :

ԺԹ.— ԶՐՈՅՑԻ ՄԱՍԻՆ

Այն ատեն ուսեալ մարդ մը քսաւ .  
 — Խօսէ՛ մեզի Զրոյցի մասին :  
 Եւ ին՛ք պատասխանեց, ըսելով .  
 — Կը գրուցէ՛ք, երբ դադրի՛ք հաշտ ըլլալէ ձեր մտածումներուն հետ :  
 Եւ երբ այլեւս չէ՛ք կրնար մնալ ստանձնութեան մէջ, կ'ապրի՛ք ձեր  
 շրթներով եւ ձեր ձայնը խոստորում է ձեզի համար եւ ժամանց :  
 Եւ ձեր գրոյցներուն մեծ մասին մէջ, մտածումը խոշտանգուած է  
 կիսով :  
 Որովհետեւ մտածումը թռչուն մըն է միջոցին մէջ, որ բռտերու վան-  
 զակին մէջ կրնայ բռնալ իր թեւերը, բայց չի՛ կրնար թռչիլ :

Ձեր մէջ կան այնպիսիներ, որոնք կը փնտռեն շագակրատութիւնը,  
 վախճալով, որ առանձին կը մնան :  
 Առանձնութեան լուսիւնը կը յայտնաբերէ անոնց ուղեւորն իրենց  
 ետին մերկութիւնը, որմէ պիտի ուզէին խուսափիլ :  
 Եւ կան սմանք, որոնք կը խօսին՝ առանց գիտակցութեան եւ կ'անխա-  
 մտածումի, յայտնելով ճշմարտութիւն մը, գոր իրենք իսկ չեն հասկնար :  
 Կան ուրիշներ ալ, որոնք ճշմարտութիւնը ունին իրենց մէջ, բայց չեն  
 կրնար արտայայտել գայն բառերով :  
 Այսպիսիներու էութեան մէջ հոգին կը թրթռայ լուսութեան կշռոյթով :

Երբ բարեկամի մը հանդիպի՛ք նամբուն եզերքը կամ շուկայի երազա-  
 բակին վրայ, ձեր հոգին թող շարժման մէջ ղնէ ձեր շրթներն ու առաջնորդէ  
 ձեր լեզուն :  
 Եւ թող ձեր սրտին ձայնը խօսի անոր հոգիին ակամջին :  
 Որովհետեւ անոր հոգին պիտի պահէ ճշմարտութիւնը ձեր սրտին, ինչ-  
 պէս համը գիւնիին, որ կը յիշուի  
 Երբ մտքուած է անոր գոյնը, ու քաժակը՝ չճացած :

## Ի.— ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Եւ աստղագէտ մը ըսաւ .

— Տէ՛ր, ի՞նչ է կարծիքդ ժամանակի մասին :

Եւ ինձ պատասխանեց .

— Պիտի ուզէիք չափել ժամանակը՝ անհունն աւ անչափելիին :

Պիտի ուզէիք ձեր կենցաղը յարմարցնել եւ նոյնիսկ ուղղել ընթացքը ձեր մտածումին՝ համաձայն ժամերու եւ եղանակներու :

Պիտի ուզէիք ժամանակը ընել գետ մը, որուն եզերքին նստած դիտէիք աճար հոսանքը :

Այսուհանդերձ, անճեղը ձեր մէջ, գիտակցութիւնն ունի կեանքի անճարութեան,

Եւ գիտէ, թէ երէկը այսօրուան յուշն է միայն, եւ վաղորդայնը՝ երազն անօր :

Եւ թէ՛ ինչ որ կ'երգէ աւ կը խոհայ ձեր մէջ, կը բնակի տակաւին ձերին մէջ այն առաջին ռալէին, որ ցանցնեց աստղերը միջոցին մէջ :

Ձեզմէ ո՞վ չի գգար, թէ սիրելու իր կարողութիւնն անտեսման է :

Եւ սակայն ո՞վ չի գիտակցիր, թէ այդ սէրը, թէ՛ եւ անտեսման, պարփակուած է իր էութեան կեդրոնը, եւ չի յաճիր սիրոյ մէկ խորհուրդէն միւսը, ոչ ալ սիրոյ մէկ արարէն միւսը :

Եւ արդեօք ժամանակն ալ սիրոյ պէս չէ՞, անբաժանելի եւ անշարժ :

Բայց եթէ ձեր մտածումին մէջ պարտիք ժամանակը բաժնելի եղանակներու, բոզ իւրաքանչիւր եղանակ շրջապատէ բոլոր միւսները,

Եւ բոզ այսօրն ընդգրկէ անցեալը յիշատակով, եւ ապագան՝ ձրգտումով :

## ԻԱ.— ԲԱՐԻԻ ԵՒ ԶԱՐԻ ՄԱՍԻՆ

Եւ քաղաքի ծերերէն մէկը ըսաւ .

— Խօսէ՛ մեզի Բարիի եւ Զարի մասին :

Եւ ինձ պատասխանեց .

— Կրնամ խօսիլ ձեր մէջ եղած բարիին մասին, բայց ոչ՝ չարին :

Որովհետեւ ի՞նչ է շարը, եթէ ոչ բարին՝ չարչարուած իր իսկ քաղց աւ ծարաւով :

Իրականութեան մէջ երբ սոված է բարին, իր սնունդը կը փնտռէ նոյնիսկ խաւար նկուղներուն, եւ երբ ծարաւ՝ կը խմէ նոյնիսկ նեխած ջուրէն :

Բարի է՛ք, երբ դուք մի է՛ք ձեր ինքնութեան հետ :

Այսուհանդերձ, երբ մի չէ՛ք ձեր ինքնութեան հետ, անպայման չար չէ՛ք:

Որովհետև բաժանուած տուն մը գողերու որջ չէ՛. անիկա բաժնուած տուն մըն է լուկ:

Եւ զեկագարկ մաւ մը կրնայ աննպատակ թափառիլ կարստարքեր ժայտատներու միջև, սակայն չմեռնիլ:

Բարի է՛ք, երբ կը ջանա՛ք տալ դու՛ք ձեզմէ՛:

Այսուհանդերձ, չար չէ՛ք անպայման, երբ շահ կ'որոնէ՛ք ձեզի համար:

Որովհետև երբ կը ջանա՛ք շահիլ, նման է՛ք լուկ արմատի մը, որ կը փարի հողին ու կը սնանի անոր ծոցէն:

Անկատկած պտուղը չի՛ կրնար ըսել արմատին. «Եզի՛ր ինձի պէս, լեցուն եւ հատուն, որ ինքզինք միշտ կը մատուցուն արատութեամբ»:

Որովհետև պտուղին համար կարիք է մատուցուիլը, ինչպէս արմատին՝ ստամայր:

Բարի է՛ք, երբ լիովին զգաստ է՛ք ձեր խօսակցութեամ մէջ:

Այսուհանդերձ, անպայման չար չէ՛ք, երբ կը բնաճա՛ք, մինչ կ'երթաք ձեր լեզուն աննպատակ:

Եւ մոյճիկ վարանոտ գրոյցը կրնայ գործցնել ակար լեզու մը:

Բարի է՛ք, երբ ձեր նպատակին կը դիմէ՛ք վեճակաւ ու յանդուգն քայլերով:

Այսուհանդերձ, չար չէ՛ք, երբ անոր կը դիմէ՛ք կազալով:

Նայնիսկ անոնք, որ կը կազան, չեն ընկրկիր անպայման:

Բայց դու՛ք, որ գորատը է՛ք եւ արագաշարժ, զգուշացէ՛ք կազալէ հաշմերու դիմաց, ազնուութիւն մկատելով այդ:

Բարի է՛ք անհամար կերպերով. եւ չար չէ՛ք անպայման, երբ բարի չէ՛ք:

Այլ միայն դատարկացարտ է՛ք ու պանդոյր:

Աւա՛ղ, որ եզնիկները չեն կրնար արագաշարժութիւն ստրկեցնել կրիաներուն:

Դէպի ես-հոկայի ձգտումին մէջ է, որ կը կայանայ ձեր բարութիւնը. եւ այդ ձգտումը կայ ձեր բոլորին ալ մէջ:

Բայց ամանց մէջ այդ ձգտումը հեղեղ մըն է, որ մալուցքով կը դիմէ դէպի ծով, իրեն հետ տանելով լեռներու գաղտնիքն ու անտառներու երգը:

Եւ ուրիշներու մօտ՝ հեքասահ առուակ մը, որ կը թեփի այս ու այն կողմ, կը կորսուի դարձուածքներուն, ծովափ հասնելէ առաջ:

Բայց ան, որուն ձգտումները բունն են, թող բնաւ չըսէ գազը ցանկութեան տէր միւսին. «Ինչո՞ւ դաճողա՞ք ես եւ ծոչի»:

Որովհետև իրական բարին չի՛ հարցնէր մերկին. «Ո՞ր եմ հազուստներդ», ոչ ալ անտունին՝ «Ի՞նչ եզաւ տունդ»:

## Ի Բ . — Ա Ղ Օ Թ Ք Ի Մ Ա Ս Ի Ն

Ապա քրմուսի մը քառ .

— Կօտ' մեզի Աղօթքի մասին :

Եւ ինք պատասխանեց , ըսելով .

— Կ'աղօթէք , երբ անկուօթեան աւ կարիքի մէջ էք . երանի՛ թէ կարենայիք աղօթել նաեւ ձեր ուրախութեան , լիութեան եւ առատութեան օրերուն մէջ :

Որովհետեւ ի՞նչ է աղօթելը , եթէ ոչ փոքրուը ձեր էութեան՝ կենդանի եթերին մէջ :

Եւ եթէ ձեր սփոփանքին համար հարկ է ձեր խաւարը թափել միջոցին մէջ , ձեր հրճուածքին համար ալ պէտք է ճառագայթէ ձեր սրտին արշալոյսը :

Եւ եթէ ձեր հոգին ձեզ աղօթքի կը կանչէ , երբ դուք կրնաք լալ միայն , պէտք է որ ան խթանէ ձեզ կրկին աւ կրկին , մինչեւ որ լացին մէջէն կարեամբ խնդալ :

Երբ կ'աղօթէք , կը վերանաք՝ հանդիպելու համար օդին մէջ անո՛նց , որոնք կ'աղօթեն այդ ճոյն պահուն եւ որոնց պիտի չկարենայիք հանդիպել աղօթքէ դուրս :

Ուրեմն՝ այդ անտեսանելի տանարին ձեր այցը թող ըլլայ լսել վերացումի եւ քաղցր հաղորդումի համար :

Որովհետեւ եթէ տանար մտնէք միմիայն խնդրանքի համար , ոչինչ պիտի տեսնաք .

Եւ եթէ հոն մտնէք նուաստանալու՝ պիտի չբարձրանաք .

Կամ եթէ նոյնիսկ հոն մտնէք ուրիշներուն բարիք հայցելու՝ պիտի չլսուիք :

Բաւական է , որ մտնէք անտեսանելի տանարէն ներս :

Զեմ կրնար բառերով ձեզի աղօթել սարվեցնել :

Աստուած չ'ունկնդրեր ձեր խօսքերուն , բացի երբ Ան ինքն է , որ կը խօսի ձեր շրթներէն :

Եւ չեմ կրնար ձեզի ռուսցանել աղօթքը ծովերուն , անտուններուն եւ սարերուն :

Բայց դա՛ւք , որ ծնունդ առած էք սարերէն , անտուններէն աւ ծովերէն , կրնայ գտնել անոնց աղօթքը ձեր սրտերուն մէջ ,

Եւ եթէ միայն գիշերուայ անդորրին ականջ դնէք անոնց , պիտի լսէք զանոնք , որ կ'ըսեն լռութեան մէջ .

«Տէր Աստուած , Դուն , որ թեւաւոր ինքնութիւնն ես , Քու կամքն է , որ կը կամենայ մեր մէջ :

«Ըզձանեզ է , որ մեր մէջ կ'ըզձայ :

«Մղումդ է , որ մեր մէջ պիտի ուզեր փոխել գիշերները , որոնք բուկդ են , ցերեկներու , որոնք բուկդ են դարձաւ :

«Ոչինչ կրնանք խնդրել քեզմէ , որովհետեւ Դուն կը նանչնաս մեր կարիքները , նախ բան անոնց յայտնուիլը մեր մէջ .

«Ինչն էս մեր կարիքը . եւ քեզմէ մեզի աւելի տալով , կու տաս մեզի ամէն բան» :

Ի Գ . — Հ Ա Յ Ո Յ Գ Ի Մ Ա Ս Ի Ն

Ապա Յգնուար մը, որ տարին հեղ մը կ'այցեցէ քաղաք, առաջացաւ եւ ըսաւ .

— Խօսէ՛ մեզի Հանոյքի մասին :

Եւ ինք պատասխանեց, ըսելով .

— Հանոյքը ազատութեան երգ մըն է :

Բայց ազատութիւնը չէ :

Անհկա փրքումն է ձեր իղձերուն,

Բայց անոնց պտուղը չէ :

Խորութիւն է անհկա, որ կը ձգտի բարձրութեան,

Բայց ո՛չ անդունդ է, ոչ ալ գագաթ,

Թանտարկեալն է անհկա, որ իր խոյանքը կ'առնէ,

Բայց անպարփակ միջոցը չէ :

Այո՛, իրականութեան մէջ, հաճոյքը ազատութեան երգ մըն է :

Եւ սիրայօժար պիտի ուզէի, որ գոյն երգէիք ամբողջ սրտով, պիտի չուզէի սակայն, որ կորսնցնէիք ձեր սրտերը այդ երգին մէջ :

Ձեր երիտասարդներէն ոմանք կը փնտտեն հաճոյքը, իբրեւ ամէն ինչ, — այդպիսիները դատուած ու պատժուած են արդէն :

Եւ գտնումք ո՛չ պիտի դատէի, եւ ոչ ալ պատժէի: Պիտի ուզէի սա- կայն, որ անոնք փնտտէին հաճոյքը :

Որովհետեւ ամենք պիտի գտնեն գայն, քայց ո՛չ առանձինն .

Ծօք հաւա են ամօր քոյրերը, եւ անոնցմէ ամենայեւնիւնը աւելի գե- ղեցիկ է, քան հաճոյքը :

Լսած չէ՞ք այն մարդուն մասին, որ հազը կը փռէր՝ արմատներ հա- մելու համար եւ գանձ մը գտաւ :

Եւ ձեր երէցներէն ոմանք ափսոսանքով կը յիշեն հաճոյքները, իբրեւ գիւնձութեան մէջ գործուած սխալներ :

Բայց ափսոսանքը մթազնումն է մտքին եւ ոչ թէ անոր պատիժը :

Պէտք է ելախտագիտութեամբ յիշեն անոնք իրենց հաճոյքները, ինչ- պէս պիտի ընէին ամառնային հունձին համար :

Այսուհանդերձ, եթէ զոգահարութիւնը կը սրտապնդէ գիրենք, թոյլ տուէ՛ք, որ սրտապնդուին :

Եւ ձեր մէջ կամ այնպիսիներ, որոնք ո՛չ երիտասարդ են՝ հաճոյք փրճու- ուելու համար, ոչ ալ ծեր՝ գայն յիշելու :

Եւ որոնումի կամ վերյիշումի սարսափէն տարուած՝ անոնք կը խու- սափին հաճոյքներէ, վախճալով, թէ կ'անտեսեն հոգին կամ կը նախատեն գայն :

Բայց իրենց այդ հրաժարումին մէջն իսկ է իրենց հաճոյքը :

Եւ այսպէս, անոնք եւս հաւասարապէս կը գտնեն զանձ, երբ իրենց դողահար ձեռներով արմատներ կը փնտռեն:

Բայց բւէք ինծի, ո՞վ է, որ կրնայ ոգին ճախատել:

Արտոյտն արդեօք կը նոխատէ՞ գիշերուան անդորրութիւնը, կամ կայ-ծարիկը՝ աստղերը:

Եւ ձեր բացը կամ ծախը պիտի բեղմնաւորե՞ն հոգը:

Կը կարծէ՞ք, թէ ոգին աւագան մըն է համդարտ, որ զաւագանով մը կարենաք գայն յագնել:

Շատ յաճախ, դուք զձեզ հաճոյքէ զրկելով՝ կը կուտակէք անոր հանդէպ ունեցած ձեր ցանկութիւնը, ձեր էութեան ծալքերուն մէջ:

Ո՞վ գիտէ, թէ ինչ որ գանցառուած կը բուի այսօր, կրնայ սպասել վաղուան:

Ձեր մարմինն իսկ կը նանչնայ իր ժառանգութիւնը եւ իր արդար կարիքները, եւ պիտի չուզէ խաբուիլ:

Եւ ձեր մարմինը տաւիզն է ձեր հոգիին,

Եւ ձեզի կ'իյնայ գայն բրթոսցնելի քաղցր նուազով կամ խժալուր ճայներով:

Եւ հիմա կը հարցնէք ձեր օրտին խորէն. «Ինչպէ՞ս պիտի գատորոշենք հաճոյքիմ մէջ ինչ որ լաւ է, եւ ինչ որ գէշ»:

Գացէք ձեր դաշտերուն եւ պարտէզներուն մէջ եւ պիտի տրվիք, թէ մեղուին համար հաճոյք է ծաղիկներէն մեզր ճաղելը:

Ինչպէս որ ծաղիկին համար հաճոյք է իր մեղրը ստլ մեղուին:

Որովհետեւ մեղուին համար ծաղիկ մը կեանքի մը աղբիւրն է,


Եւ ծաղիկին՝ մեղուն սիրոյ բանքեր,

Եւ երկուսէն՝ մեղու եւ ծաղիկ, հաճոյք տալն ու աննելը կարիք է եւ զմայլանք:

Օրփալէզի ժողովուրդ, ձեր հաճոյքներուն մէջ եզէք ծաղիկներուն ու մեղուներուն պէս:

Քարոզ. ԵՐ. Յ. ԳԱՐԱՃՅԱՆ

(Շար. 4 եւ մնացեալը յարորդիւ)



ՎԱՍԻԼԻ ԱՔՍԻՆՈՎԻ ՊԱՐԱԳԱՆ

Ձեռ եւ կողմերը զազաբացիութենէ զրկու որչա՞նք նոյն պատերազմի այն միջոցեան է, զոր Խորհրդային Միութեան զազափարսիտական արգանքը կը վարէ Թուսաստանի ժառանգականութեան դէմ, ի ժառանգորթ զրոգաներու դէմ: Այս որչա՞նք նոյնքան անմիտ է, որքան անարդար: Գրողն կարելի չէ խելի երկայնիքը: Ես միշտ ուղ հաւատարիմ կը մնամ իմ Հայրենիքին եւ անոր մշակոյթին: Երեսուցանիմ իսկոյն, որ Թուսաստանի քաղաքացիական պատերազմը, նկատելի չափով այն անխուճ զնկազարնուքը, որոնք հայտնաբերու Նկլինայինն են: Իրականութեան մէջ երկը անոնք են, որ զուրս կը մնան բոլոր սեռերի զազաբացիութիւններէն:



ՎԱՍԻԼԻ ԱՔՍԻՆՈՎ

24 Յունուար 1981

Այս անունին, Վասիլի Աքսինով, առաջին անգամ մենք հանդիպում ենք Հայրենի քննադատ Մուրթն Աչարսարեանի ճշմանակալից արձակի խնդիրներէց: անոն յօդուածին մէջ, վնասելական գրականութիւնն ամառը 1987ի առաջին համարի էջերուն, ուր Հայաստանի երիտասարդական արձակի ժամին խոչ քայտած անն, աւտանկայուն կարգ մը նոր գիներու արդիւթեանը՝ ստեղծելի գերը կը արուէր իրեն, Աքսինովին, իրաւ պատասխանատու աւ համեմատութեան մէջ:

Ե՞րբ կարդում ես շատ երիտասարդներէ գրական փորձերը՝ պատմութեանը ու վիպակներ, թանի արդ արագներէ զքեի, իսկոյն եւեթ երեւում է, որ քրանց խնցուրթիւնները գալիս են ոչ թէ ուղղակի կեանից, այլ՝ գրական ազդեցութից: Վ. Աքսինովը եղաւ շատերի ստմուսն, բայց կրամ է պատկանում ժամանակի երիտասարդ կերտի մասին նոր խօսք անելու դաժնին, իսկ նրա արձագանգները, անգամ վազ արձագանգները, դատաւարտուած են իսկզմութեամ անխաղ անուանը:

Հայրենի երիտասարդական արձակին նա կապուած ըլլալու այդ հանգամանքին իսկ բերումով, մենք սկսանք փնտռել Վասիլի Աքսինովը, բայց, ցուար, ուսուական գրականութեան շարժումներուն հեռանկար մեր առաջին տարիքը հանդիսացող Հայաստանի ժամուրթին մէջ երբեք չանտեսը իր անունը, իսկ մեզի Ժամով երկրորդ տարիքին մէջ հարաւոր եղաւ հանդիպել իրեն երկու անգամ միայն, եւթ՝ 6 Յուլիս 1980ի ժմիկարս գրականք մէջ էլին, եւ երկրորդ՝ ԵՊիթերու արշարեան անունը կրող ՎԵ Մանտի յանկուածին մէջ, 14 Ապրիլ 1978ին:

Յիշուել երկու թերթերէն անելով՝ ստորեւ կը ներկայացնեն կննտագրական կարգ

ժը գիծեր էր մտախ, ա՛յն շահագրգռութեամբ, որ ստեղծուի զձերով ժը կը շինուի մեր զբա-  
կանութեան մէջ ու կը կրէ շնոր խօսք տակաւ զապիտք ժը:

Վաստիք Աբրահամով հետեւ է 1882ին, ասպարէզով՝ թիւի, ինչպէս էր Ձեռնով, ինչպէս  
էր Քուրդիւնով, որ զրէն սկսեցէ առաջ կ'աշխատէր շատակա լիճին շրջանը:

Իր առաջին շրջանը՝ «Պաշտօնակիցներ» (1900) և «Տոմս» տարգիրուն համարը  
(1901), իրեն ապահովեցին այնպիսի յաջողութիւն մը, որ, — հազուադէպ երեւոյթ —  
արդէն ունեցաւ իր տեղը 1902ին հասարակական կորստիչային Գրականութեան Համայնա-  
գիտարանին մէջ, ուր էր ներկայացուէր իրեն շարքի սերունդին գործերն մէկը,  
Մտածելի, Գաղափարի, Քրիստոսի, Եւտուշենիոյի և Վոլոնտէրի յարգին:

Աբրահամով առաջին հասարակական հետեւեցան ուրիշներ. Վարսի Պարիզները  
(1903), Լեոնի Քրտաիկի երիտասարդութեան բացուած պատմական վեպ մը՝ «Սիւնդուկա-  
նալիս» սերը, ապա՝ 1908ին «Պահեստի աւելորդ տակաւները», նորապէս լույս տեսած  
«Նուծար» հանդէսին մէջ, որուն երկու միջին տպագրական յաջողակեցեալ զանի մը  
որէն:

«Պահեստի աւելորդ տակաւներ»-ուն հրատարակութեան տարին, ի յարա երիտասարդ  
այլ գրողներու՝ Վասիլի Աբրահամով մտանկեցեալ Մոսկուայի Կարմիր Հրատարակիչ Վրայ  
պայթած ցոյցին և զատարարանց Ձեռնարկագրի հասարակ խորհրդային ունեցող ներ-  
խուժումը: Նոյն տարին ընդգնեցաւ զրոյշներու և զիտնականներու գաղտնաբերութեան զէժ  
և անոնց ազատ կոտորածան օգտին թուղթեր ստորագրել: Այս յանդերձութիւններուն լուս  
տուզ վճարելու սկիզբն Աբրահամով: Ի՞նչանութիւնները անմիջապէս հարանայն մը շրջա-  
պարիստի էր և «Նուծար» ամսագրի էր երկու ընկերներէն բանաստեղծ Խոֆէն Եւտուշեն-  
կոյի և Քասարապի Վիկտոր Քոզմի զէժ: Իր պարագային Հայաստանը տակի անողը ե-  
ղաւ, որովհետեւ էր ապաստանութեան և արի նկարագրին հետ ունէր նաեւ ուրիշ մեղք մը,  
զաւանի էր նշանաւոր կին զմեքերէն Եւգենիա Գրիգորեանի, հեղինակը կորստիչային Միտ-  
թեան մէջ մեքուած, այլ արտասուժանի մէջ հրատարակուած «Գլխապոյտ» վեպին, ուր  
ան, Եւգենիա կրկնաբար, համայնագրութեան հանդէպ էր ունեցած հաւասար անոր պա-  
հալով անդերձ, մանրամասնօրէն էր պատմէ ճամբարային իր ասանկութեան ինչպէս, բն-  
ւորային Սիւնդուկայի մէջ, ուր աշտարած էր զինք Սասնին:

Փրակայի գարնան և կամայականութեան կ'ընթացէր զորոյնորուն ի նպաստ  
զիրգարուելէ հոգ, Աբրահամովի աստղը սկսաւ մարիլ և 1911ին ետք հետեւողականօրէն  
մեքուցանի էր թուր մեղադրները:

Աւելի ուշ, Վասիլի Աբրահամով մտանկաւ արտասուժան մը կորստիչային Միտթե-  
նէն անցաւ Միտթեան նահանգներ և Հարաւային Գալիֆոնիոյ համայնարանին մէջ ստանա-  
նոց զատարար պաշտան մը, ապա՝ հրատարակեցաւ այլ երկերներ, ինչ անցեալ տարի՝ Պրտու-  
սա, ուր ասկիս տարեր զախտ մը վիճակեցաւ իրեն: Այս տարուան Յունուարի կէսերուն  
«Կորստիչային վարձագիծը» վարիարեկելու մեղադրանքի մը հիմամբ և Լեոնի Բրեժնեւի  
ստորագրութեամբ հրատարակեցաւ զինք խորհրդային զազապարտութենէ զրկելու որո-  
շումը, որուն ի լուր ազրան անհատական կակիճին հետ յայտնեց նաեւ ընդհանրական ճշ-  
մարտութիւն մը, թէ՛ «Գրողէն կարելի չէ խիլ հայրենիք»:

Այս մասին պիտեալ զնա մեր նախորդ թիւով ուշագրութեան յանձնուած Ձու-  
լենկոյի պարագան, Ձուլենկոյի Գաղափարը ըսած ժողովովի հետեւութիւնը և ժողովովի  
հետեւութիւնը ի չիբ գործուցած զուլենկոյական փառքին վերադարձումը: Վաղ անպայ-  
ման նոյնը պիտի պատահէ նոյն տեղանդուարութեան ուսուցան զո՛ր Վասիլի Աբրահա-  
մովի, որ, ի զէպ, ըստ «Միկար» գրականի ախտաստեղծներէն Վերա Փոսթի, լուս կը յի-  
շեցնէ էր նախորդը, բազմապարզաւ Ձուլենկոյն:

«Միկար» իր կերպները երբէք լուրջի չ'առնէր: Իր ոճը կը յիշեցնէ մեծ երգիծա-  
բան Ձուլենկոյի ոճը, որ սեպ ծիծաղի մը կ'ընթացիլ իր կերպները՝ անոնց հայեւն առա-  
ւել ևս զուարթանայաւ համարը:

Ըստ ինչեան հետաքրքրական այս ծանօթութիւնները, ի հարկէ, լույս չեն տեսեր  
Սուրբն Աղարարանի բացած լուս կորեւոր փակագիծին վրայ, ու ցաւալի է, որ Աբրա-  
համովը զազապարտութենէ զրկող հրամանակիրը միտողամայն կ'արգիլէ անոր գործին ու զե-  
րին զրուակեօրէն մտնալու և ընթերցողին բազապարտական եղակացութիւններ հազարչե-  
լու ամէն փորձ:

Աւելի լայն զազապար մը ասալու համար Աբրահամովի գրական ըմբռումներուն ու  
փորձաստութիւններուն մասին, նպատակաւորաւ զատեցիք է. Յովհաննիսեանի յօդուածին  
տարիներ թարգմանարար ներկայացնել նաեւ «Ը Մանսէ մէջ ստորագրած էր մէկ տե-  
սութիւնը»՝ «Թէ ինչպէս մարդիկ արտածուած ապրանք» կը դառնան կորստիչային Միտ-  
թեան մէջ»:



Վ. Ա Ք Ս Ի Ո Ն Ո Վ

**ԹԷ ԻՆՉՊԷՍ ՄԱՐԴԻԿ «ԱՐՏԱԾՄԱՆ ԱՊՐԱՆՔ» ԿԸ ԴԱՌՆԱՆ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ**

Տասնութ տարիներ առաջ երիտասարդութեան նուիրուած վէպերով քիսած իմ գրական ասպարէզիս առաջին շրջանները մեծ ազմուշ հանեցին: «Տոմս՝ աստղերուն համար» վէպիս մասին այսինչ կամ այնինչ թերթը ու՛մէն օր յօդուածներ կը հրատարակէր ազատ բեմի սիւնակներուն մէջ: Այդ յօդուածները պարզապէս վիճարանութիւններ էին եւ կրթութեան քանսօյլէճեր՝ ի մասին հեղինակին եւ անոր հերոսներուն: Ես բնաւ չէի սպասեր նման արձագանգի մը: Անկասկած եւ կը Համբնկնէի հակա-մշակութի մը սկիզբին, երկուսի մը, որ այսօր եւս գոյութիւն ունի:

Երիտասարդութեան այս թեման կապ ունէր ընկերաբանութեան հետ: Խնդիրը կը վերաբերէր հոգեբանական նոր տիպարի մը սահմանումին, երիտասարդ տղայ տիպարին, որ մեծցած էր առանց Ստալինի, 20րդ համաշխարհային պատերազմի անսահմանօրէն նուազ կազուած էր ճշումներուն: «Ժամանակն է, բարեկամս» անուն գործս, որ Ֆրանսերէնի թարգմանուած չէ, ճշգրտւած մը կ'ընէր տեղափոխուող այդ շրջանին մասին, ուր արձակագիրները, բանաստեղծներն ու երգիչները (որոնք այդ օրերուն կիթառ ի մեռին կը յայտնուէին առաջին անգամ ըլլալով), ինչպէս նաեւ մեր գործերուն ընթերցողներն ու ունկնդիրները, բռնուած էին հաւաքական անսահման գրգռութենէ մը, ամէն ինչ ընելու եւ հնարաւոր արագութեամբ ընելու փոփոխէ մը մրցում: Այնքան տարիներ շրջները փակ պահելէ ետք, արտայայտուելու այդ անդամադրելի մղումը բացատրութեան չի կարօտիր:

Այս փուլին ետք, ինծի Համար Հրամայական էր կեդրոնանալ նոր հեռանկարի մը վրայ: Ես դատայ այդ հեռանկարը պատմութի մեռին մէջ: Համարումս էի, որ յաջողելու համար անհրաժեշտ էր տիրապետել այդ սեռին: Թուական գրականութիւնը շատ բարձր տեղ մը կը դասէ այդ մեռ եւ մենք ունինք այդ մարդին մէջ վարպետութեան հասած հոյլ մը գրողներ, որոնք լուսագոյնը թերեւ Շուրի Գազարոսն է:

Ես միտք շունչի ինքզինքս ամբողջութեամբ պատշաճեցնելու ուռուական արձակի պատմական աւանդութեան: Աւելի շուտ՝ կը միտէի մօտենալ անոր աւանկարտին, առանց ասկայն ինքզինքս խղելու իրապաշտութենէն: Տարագած վերապահութիւնս հաւանաբար անհրաժեշտ չէր: Թուստտանի մէջ աւանկարար երբեք խզուած չէ իրականութենէն: Կը ջանայի ուրեմն գրութեան մը աւանդութիւնը հաշտեցնել վերբնապաշտ վերաբանութեան մը հետ: Ինծի Համար գրութիւն մը կը յենու առօրեային վրայ, տեւականին: Այստեղեւոր մէջ երեւնալին ետքն էր միայն, որ իրումները, ասկնութեան թիւերն ու իրականութիւնը անհեթեթ զարմնելու փորձերը ինծի համար սկսած ներկայացնել արուեստի միջամտութիւնը իրականութեան մէջ:

Այնուհետև գարձայ գէպի թատրոնը, Իոնեսքոյի և Պեզէթի ազդեցութեան տակ: Այս յափշտակութիւնը կը զուգարկուէր ա՛յն յայտնութիւններուն, որոնց դեւտը կ'ընէինք մեր սեփական հարօտութեան մէջ: Մտքըւած ևւ տարիներու ընթացքին կիսովին փճացած ձեռագիրներու կոյտէն մենք հանեցինք հիանալի գահձեր, մասնաւորաբար անհէթէթի այդ թատրոնը, որուն մասին Եւրոպայի մէջ սկսած խօսիլ յիսունական թուականներէն ետք, երբ անիկա Խուսիոյ մէջ զոյութիւն ունէր քսանական թուականներուն օպերիտը: Կոչուած արուեստի խորակցութեան ծոցը: Կաթայի Սարօթի ևւ Իոպ Կրիէի նոր վէպին տարրերը մենք վերադասեց Անտրէ Պիլիի ևւ Օսկա Մանդելստամի արձակին մէջ: Կա՛րճ, որոչ ուշացումով մը թէև, այնուամենայնիւ, անկասկած մենք կ'ըմբռնէինք, որ սուսական աւանկարտը երբեւիցէ խօսմ չէր արձանագրած, անիկա պարզապէս ընդհատած էր իր ընթացքը ստալինեան ճշումներուն ստեն, բայց անոր զոյութիւնը կ'երաշխաւորէր, որ մենք իսկապէս մաս կը կազմէինք եւրոպական մշակոյթին:

Ինծի համար կատարելապէս գատարկ կը թուին այն վիճարանութիւնները, երբ մեր մօտ այսօր որոշ մարդիկ կ'ըսեն, թէ պէտք է մօտենալ Արեւմտաւորին, ևւ ուրիշներ, թէ՛ ընդհակառակն, պէտք է ապացուցանել մեր ինքնատուութիւնը, մեր անկախութիւնը: Պաշտօնական քննադատութիւնը կը հաստատէ երբեմն, որ զոյութիւն ունի իրապաշտ նկարագրութեամբ սահմանուած ժողովրդային ու ինքնատիպ աւանդութիւն մը, զոր կը հակադրեն նորոյթէ ներշնչուած ուրիշ հոսանքի մը, անցողիկ՝ ինչպէս ինքը՝ նորոյթը, ևւ որ կը բացատրուի Արեւմտաւոր հանդէպ ցուցարներուած շտեմ յափշտակութեամբ: Ըստ ինծի, ասիկա ամբողջովին սխալ է: Ինչ որ մեր պաշտօնական գուշակները կը կոչեն սուսական հիմնական աւանդութիւն, անսահմանօրէն աւելի երիտասարդ է ևւ նուազ բեղուն, քան նկարագրական իրապաշտութեան հակադրուած միւս աւանդութիւնը, որ ծնունդ առու քսանական թուականներուն ծաւալած աւանկարտին շնորհիւ: Այս վերջինը արձանները կը մխրճէ իր սկզբնական մաքրութիւնը պահած Փալէրթի մը ընդերքը: Ես ինքս զբաղած եմ Արդ գարու սուս ժողովրդային ու անանուն բանաստեղծութեամբ, անոր սիրելի երեսներով, երգիծանքով, իրերպաղով, արտակարգօրէն զարգացած փոխարեութիւններով: Ճշմարիտ աւանկարտը այլուր չի փնտրեր ինքիցէ:

**ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՍԿԱՒԵ**

Վերադառնալու համար թատրոնին, ես գրեցի երգիծական, կճօղ, հիւբերպուլիկ ու խայթածաղը նկարագրելով չորս թատերախաղեր, հաստատօրէն խարսխուած ա՛յն հարցերուն վրայ, որոնք կը յուզէին մեր ընկերութիւնը: «Մովրըմանիք»ի մէջ ներկայացուեցաւ անոնցմէ մէկը միայն, որ լուազոյնը չէր:

Երբ քմբռնեցի ներկայացուելու համար թափած ճիգերուս ունայնութիւնը, 1965ին փորձեցի հիբերպուլիկ նոյն երակով գրել երգիծալէպ մը՝ «Պոպպատէ քուլուր», որ ենթարկուեցաւ թատերադրութիւններուս վիճակուած ճակատադրին: Խորհրդային Միութեան մէջ միշտ անտիպ մնացած «Նրկաքէ քուլուր» ի մօտոյ լոյս կը տեսնէ Միացեալ Նահանգներուն մէջ, ուսեարէնով: Քնարական լուհչով ևւ փիլիսոփայական խորքով գրուած ուրիշ երգիծալէպ մը՝ «Պահեստի անլորդ տակաւնները», զոր գիպուածով մը տար կը նկատեմ հրաշքի պէս բան մը (1968ին հրատարակուեցաւ՝ անանց գրա-

ընտանեկան որեւէ յարաբերութիւն, ըննադատութեան մօտ առաջացուց բուռն դրդու-  
թուութիւն մը: Անիկոյ թարգմանուեցաւ բազմաթիւ լեզուներու, որոնց կարգին  
նաեւ Փրանսերէնի: 1976ին Փարիզ դոնուելով, «Եվրի» թատրոնին մէջ ներ-  
կայ եղայ բնագործութեան մը, որ իրազործուած էր իմ յիշեալ գործիս հե-  
տեւորութեամբ:

1968էն ետք, ինծի համար կը բացուի լուսութեան ակնկերու շրջան մը,  
որուն համար կը դարձանան ընթերցողներս: Իրականութեան մէջ այդ սա-  
րինները ինծի համար եղան բուռն աշխատանքի տարիներ: Իբրեւ գրող՝ ես  
բաւական փորձառութիւն ունիմ, կարենալ հաստատօրէն ըսելու, որ զրեցի  
ուժեղ գործեր, որոնք անտարակոյս պիտի հետաքրքրեն ընթերցողը: Արդ-  
հետեւ ես քաղ կը ճանչնամ իմ ընթերցողը, կրնամ փողոցին մէջ մատնանշել  
դաս, ջոկել տմբոյի մէջէն. ես կը ճանչնամ անոր դէմքին արտայայտու-  
թիւնը, քոյրուածքը, ճաշակները, իր մտածելակերպը: Միայն թէ՛ մեր մի-  
ջեւ ինկած ճամբան հարթելու համար գործադրած փորձերս, հրատարակ-  
ութեան գրասենեակներու ընդմէջէն, անպատու եղան: Բազմաթիւ վէպեր մէկ-  
գի նետուեցան կամ բախեցան լուսութեան օդատին: Անոնցմէ երկուքը այսօր  
լոյս կը տեսնեն Պրանսայի մէջ: Կ'արժէ պատմել անոնց պատճառները:

Այդ գործերը ամէնուրեք մերժուեցան: «Աւարտանք» հրատարակ-  
չութենէն ստացայ նոյնիսկ դեհաւանական մը, խժրագրուած հետեւեալ ձե-  
ւով.

«Այս վէպը կը բովանդակէ մամուլակալից արդիականութեան հանրա-  
գիտարան մը եւ միշտ այդ պատճառով չի կրնար հրատարակուիլ: Կարելի չէ  
այսպէս գրել, որովհետեւ այդ գրելածերը անկարելի է: Այս գործը չի կըր-  
նար սուժուիլ ուսուսկամ արձակի տաւաղութեան մէջ եւ կը շեղի անկէ՛, որ  
տիրապետող է այսօր: Այս պատճառներով՝ խօսք չի կրնար ըլլալ անոր հրա-  
տարակութեան մասին»:

Այնուամենայնիս, հեղինակներու խորհրդային գործակալութիւնը ո-  
րոշեց արտասահմանի մէջ վաճառել այդ երկու գործերը, մէկը՝ «Գայլիմա-  
ր»ին, միւսը՝ «Աթաք»ին:

«ՁՈՐՐՈՐԻ ՍԵՐՈՒՆՆԵՐ»

Անշուշտ կը հրճուիմ, որ Փրանսացիները թարգմանաբար կը կարգան  
դիս, բայց ինչ ալ ըլլան թարգմանութեան մը արժանիքները, ձեռագիր մը  
առաւել կամ նուազ չափով բան մը կը կորսնցնէ ինքնիւրմէ, երբ կը փոխա-  
գրուի ուրիշ լեզուի մը: Եւ ինչպէ՞ս չզգայ խորունկ տխրութիւն մը այն իր-  
զութեան համար, որ մարդիկ այդ զիրքերուն հետ վարուած են արտածման  
գունահիկ ապրանքի մը պէս: Գրականութիւնը քնաւ խաւարի չի նմանիր եւ ես  
ինքս խաւար արտագրող ձուկ մը չեմ: Այդ գործերը գրուած են նախ իմ  
երկրիս ընթերցողներուն համար: Ինչ որ կը համարձակիմ յուսալ ա՛յն է, որ  
Պրանսայի մէջ անոնց հրատարակութիւնը պիտի գրգռէ խորհրդային հրա-  
տարակիչներուն ժրջակցութեան տիրութակները: Այսպէս, ես կը տեսնեմ, որ  
ստեղծուած է անհեթեթ հացութիւն մը, որ հաւանաբար իր նախընթացը չու-  
նի գրականութեան պատմութեան մէջ, ա՛յն՝ որ գործի մը քննադիրը կը հրա-  
տարակուի իր թարգմանութենէն ետք:

Այսօր, ես իմ հայրենիքիս գրականութեան մէջ գոյութիւն ունիմ մի-  
այն կէտով, միւս կէտը ո՛չ տպարանին մարմարը ճանչցաւ, ո՛չ թատրոնին  
բեմը եւ ոչ ալ շարժապատկերին պատասուը: Եթէ շարունակեմ գրել, հետզ-

Հեռէ պիտի պզտիկնամ մէկ քառարգով եւ ապա պիտի վերածուիմ մէկ եր-  
րորդ Ակիբնոյի: Իրականութեան մէջ, բաւականին Հետաքրքրական կացու-  
թիւն մը:

Իմ անձիս կազուած այս մանրամասնութեանց մէջ կը մտնեմ ո՛չ թէ  
մեծամտութեան մղումով, այլ որովհետեւ մեր գրականութեան ճակատա-  
դէրը կը մտահոգէ զիս: Ես միևեկա չեմ, որ կը ճանչնամ այդ կացութիւնը,  
իմ պաշտօնակիցներէն մեծ թիւ մը մասնակից է նոյն բախտին: Չեմ գիտեր,  
թէ քննողատաները ինչպէս կը դասաւորեն սերունդները, սակայն մենք գը-  
րողներս, մեզ կը ճանչնայինք իբրև 1956ի սերունդ:

Մեր հասած է Հիմա այդ շարժող սերունդը: Կարուած է ո՛ւր: Ար-  
դէն քանի՞ զէմքեր արտաբուած են անոնցմէ: Եւ ինչո՞ւ: Գաղափարական  
ըլլալէ աւելի՝ գեղագիտական եւ պատմաւեցող, որոնք որչիչ զեք մը կը  
խաղան: Կ'երեւակայեմ գրականութեան պաշտօնատարը, որ չի գնահատեր  
ինծի տարեկից Հեղինակներուն գրականութիւնը եւ ոչ ալ իմ գրածս: Ան  
մարդ մըն է, որ կը փորձէ ազատ եւ ուժեղ անհատականութիւններով օժտը-  
ւած գրողներուն պարտադրել իր ճաշակը, որ միջակ ճաշակ մըն է, սո՛՛՛քոյն,  
գորշ: Եւ այդ պատճառով էր, որ մեր գրականութիւնը ենթարկուեցաւ մեծ  
փնտի մը:

Անը կրնայ զիչ կարեւորութիւն ներկայացնող մանրամասնութիւն մը  
թուիլ գաղափարական մեր փիճաբանութեանց միջոցաւորին մէջ, ուր իզմերը  
կը տեղան բոլոր կողմերէն: Ինծի համար սակայն անիկա ունի բարոյական  
մասն եզր մը եւ խորապէս համոզուած եմ որեւէ զիջում չընել անոր առիթով:

Այնքան ցուալի են այս բոլորը, ու ցուալի ա՛յն հանգամանքը, որ  
խորհրդային գրականութիւնը իր մէջ կը հաշուէ խումբ մը տաղանդաւոր  
մարդեր, որոնք կ'աշխատին իրենց կարելիութիւններուն բոլորովին խոտոր  
կշռոյթով մը: Անշուշտ, Գրողներու Միութիւնը կը հաշուէ ութ կամ ինն հա-  
զար անգամներ: Կը հասնի՞ն սակայն անոնք մասնագիտական բարձր մակար-  
դակի մը: Փոխարէնը, կրնայի յիշել միջազգային չափանիշով մեծ թիւ մը  
զրոյներ, որոնք ըսելիք բան մը ունին, կարողութիւնը ունին բա՛ն մը ընելու  
եւ մխրճուած են որոնման անզուշ աշխատանքի մը մէջ: Եթէ այս հրաշալի  
կարողականութիւնը ազատագրուէր, ստացուած արդիւնքը պիտի ըլլար ան-  
համեմատօրէն աւելի մեծ:

Մարդիկ, ոչ առանց միամտութեան, կ'երեւակայեն, թէ տուեալ վայր-  
կեանք իր ամէն ինչ ստուած է Խորհրդային Միութեան մէջ եւ որ գոյութիւն  
ունէր միայն սառցակտոր մը, որուն ներսը արգելափակուած էին, օրինակ,  
Մալեփիչի գերակայական (suprematistes) կուսները, եւ ապա, թէ ճիւղալը  
եկաւ, թէ՛ սառը հալեցաւ եւ գերակայականը վերսկսաւ իր առաջընթացը:  
Նման կացութիւն մը երբեք գոյութիւն չէ ունեցած: Իսկապէս գոյութիւն ու-  
նեցած է սասի զանգուած մը, բայց անոր ներսը շարունակուած է կեանքը:  
Այժմու արուեստագէտները, որոնք կը ճանչնան եւ կը գնահատեն քսանական  
թուականներու ռուս առաջապահներուն նուաճումները, անոնց յաջորդները  
չեն: Անոնք շարունակեցին իրենց սեփական ուղին. այս երկրին մէջ կանգ չէ  
առած ո՛չ ստեղծագործական կեանքը եւ ոչ ալ, կարճ ասած՝ կեանքը:

ՎԱՍԻԼԻ ԱՔՍԻՈՆՈՎ

Է. Յ Ո Վ Հ Ա Ն Ն Ի Ս Ե Ա Ն

Վ Ա Ս Ի Լ Ի Ա Վ Ս Ի Ռ Ն Ո Վ Ը

1980 թուականի Ապրիլի 8ին, ականաւոր խորհրդային գրող Վասիլի Ակսիոնովը գրիմեց Խորհրդային Միութեան Իւխանութիւններին՝ Ծրանսիւս մէկնելու արտօնագիր ստանալու խնդրանքով: Ծրանսիւս նրան հրաւիրել էր «Փայլմար» հրատարակչութիւնը: Ակսիոնովը արտասահմանում յաճախ էր եղել, եւ այդ խնդրանքը մեծ զարմանք չպէտք է պատճառէր, սակայն այս անգամ բաւարարեալի ազդեցութիւնը հաղորդում էին, որ եթէ Ակսիոնովին տրուի այդ թոյլատրութիւնը, ապա Ռուսաստանը կը կորցնի իր գրական սերունդի լուսաշունչ գրողին, որովհետեւ Ակսիոնովը այլեւ չի կարողանայ վերադառնալ Հայրենիք: Ինչու: Պատասխանը կարելի է դտնել Ակսիոնովի կենսագրութեան մէջ:

60ական թուականներէ տեւեալանալու խորհրդային արձակագիր Վասիլի Ակսիոնովը ծնուել է 1932 թուականի Օդեսոսի 20ին, Կազանում: Նրա մայրը Եւդէնիա Գինդրուրը 1937ին բանտարկուեց եւ զուրա եկաւ բանտից միայն 1955 թուականին, որից յետոյ զարձաւ առաջինեան ճամբարների մասին գրուած ինքնահրատարակչական աշխատութիւններից առաջինի հեղինակը: Ակսիոնովի հայրը, որ բարձր կուսակցական պաշտօն էր զբաղւում, եւ մեծ եղբայրը նոյնպէս բանտարկուեցին 1937 թուականին ու այլեւ չվերադարձան: Ե տարեկան հասակից Ակսիոնովը դաստիարակուել է ազգականների ձօն:

1956ին Ակսիոնովը աւարտում է Լենինգրադի բժշկական ինստիտուտը: Նրա առաջին պատմուածքները հրատարակ-

ուեցին 1959 թուականին: Խորհրդային Միութիւնում Ակսիոնովը հրատարակել է «Բնկերակիցներ» վիպակը, որը բեմադրուել է կինոնկարահանուել է: Հրատարակել է «Աստղային տամակը» եւ «Ժամանակն է, ընկերս, ժամանակը» վէպերը, ինչպէս նաեւ «Ատրոնոյի Գալիլէոները» վիպակը: Նա հրատարակել է մի շարք ժողովածուներ, բեմադրութիւններ ու երգիծական վիպակներ:

1975 թուականին Ակսիոնովին հրաւիրեցին Միացեալ Նահանգներ, որտեղ նա կալիֆորնիայի համալսարանում վարում էր ռուսական գրականութեան սեմինարը: Նրա ամերիկեան պատմուածքները հրատարակուեցին Մոսկուայի «Նովի Միր» հանդէսում:

Պաշտօնական յարձակումները Ակսիոնովի դէմ սկսուեցին 1961 թուականին, երբ «Նովոստ» հանդէսում հրատարակուեց նրա «Աստղային տամակը» վէպը: Նրան մեղադրեցին մոլորեցնելով մէջ, նշեցին, որ քննադատաբար չի ձօնուում Արեւմուտքի մշակոյթին, որ նրա ստեղծագործութիւնները չեն համապատասխանում սոցիալիզմի ոգուն, եւայլն: Նրա քննադատների թուին էին պատկանում այն ժամանակուայ կոմերիտիութեան կենտկոմի առաջին քարտուղար Պաւլովը, կոմկուսի զապագաբանական յանձնաժողովի նախագահ Իլիչեւը, խորհրդային զրոգների միութեան վարչութեան այսօրուայ քարտուղար Մարկովը եւ ուրիշ պաշտօնական անձինք:

Հաջեւ էր սկսել մեղմանալ այս առաջին արշաւը, երբ 1962 թուականի վերջին եւ 63 թուականի սկզբին Խորհ-

չովը սկսեց իր պայքարը այսպէս կոչուած ֆորմալիզմի եւ գաղափարական համահարմարութեան դէմ: Այդ ժամանակ Ակսիոնովը եւ առաւելեակցի, Վոզնեսենսկու եւ էրենբուրգի Հեռ դարձաւ գաղափարական նոր արշափ մը գրեց: Այս անգամ արդէն Մարկովից եւ Իլիչեւից բացի՝ Ակսիոնովը վրայ յարձակուեցին արուեստի ու գրականութեան այնպիսի խոշոր մասնագէտներ, ինչպիսիք էին փակահարքործ բանուոր Տիտովը, աշխարհի առաջին տիեզերագնաց Գագարինը եւ ի հարկէ իր ընկերները:

Այս անհաւասար կռուից, որտեղ մի քանի անձներ դէմ դուրս էր եկել Խորհրդային Միութեան Հոգի պետական մեքենան, Ակսիոնովը դուրս եկաւ պարտուած: 1963ի Ապրիլի 3ին, «Պրաւդա» թերթում Ակսիոնովը հանդէս եկաւ «Պատասխանատուութիւն» վերնագրով կրող յօդուածով, որտեղ հրատարակուած էր իր գաղափարներից եւ փաստորէն ներողութիւն էր խնդրում իր այլախոհութեան համար, ներողութիւն էր խնդրում, որ համարձակուել է ուրիշ տեսակ մտածել, քան իրեն վերագրուած էր:

1964ին, Խրուշչովի պաշտօնազրկումից յետոյ, Ֆորմալիզմի դէմ պայքարը մեղմացաւ եւ գործը կուսակցական ու պետական գործիչներից անցաւ գրողներին, կամ աւելի ճիշդ՝ գրական քննադատների մեռքը: Ակսիոնովը փոքր ինչ ազատ շունչ քաշեց:

1967 թուականին, Խորհրդային գրողները միութեան 80 անդամներ դիմեցին խորհրդային գրողների համամիութենական համագումարին, պահանջելով ջնջարկել Ալեքսանդր Մուսիլոսկիի բաց նամակը: Այդ պահանջի տակ ստորագրել նաեւ Ակսիոնովը: Մէկ տարի անց Ակսիոնովը մի նամակ ստորագրեց, որը աշուպանութեան տակ էր առնում հակախորհրդային քարոզչութեան մեղադրանքով դատապարտուած Գալանսկովին, Գիմզերբախին, Լաչկովային եւ Դորբովսկուին: Այդ նամակից յետոյ «Գրական բերք»-ը, ինչպէս նաեւ «Գրական Ռուսաստան»-ը հրատարակեցին յօդ-

ւածներ, որտեղ ստուած էր, որ նման նամակ ստորագրողները չեն կարող լինել Գրողների Միութեան անդամներ: Ակսիոնովը եւ իր մի քանի ընկերները գրեում են Գրողների Միութեան քարտուղարութիւն եւ 100 գրողների անունից յայտարարում, որ եթէ նամակը ստորագրողներից ոեւէ մէկը վտարուի Գրողների Միութիւնից, ապա իրենք էլ գուրուկը գան Միութիւնից: Գրողների Միութիւնից ոչ ռժու չվտարեցին, բայց Ակսիոնովը խիստ նկատողութիւն ստացաւ եւ այդ նկատողութիւնը գրանցուեց նրա անձնական գործի մէջ:

Այնուամենայնիւ, դժուար է ենթադրել, որ քաղաքանտարկեալներին պաշտպանելու համար էր, որ Ակսիոնովը ընկաւ սեւ ցուցակի մէջ: Նրա ստեղծագործութիւնները այլեւս չհրատարակուեցին Խորհրդային Միութիւնում: Եթէ իսկ լինէր պատճառը, ապա նրան 1971 թուականին չէին ընտրի խորհրդային գրողների Ծրդ համագումարի վերստուգիչ յանձնաժողովի անդամ: Ըստ երեւոյթին, խորհրդային ղեկավարութիւնը Ակսիոնովին հարիւրներում հալածելու համար ունէր նաեւ ուրիշ պատճառներ:

1978 թուականի Ապրիլ ամսին, Փարիզում եղած ժամանակ, Ակսիոնովը հարցազրոյց ունեցաւ Ֆրանսուէի լրագրող Նիկոլ Չանդի հետ: Այդ հարցազրոյցում գրողը զանգատում էր այն բանի վրայ, որ խորհրդային գրականութեան պաշտօնեաները իր վէպերը եւ թատերգութիւնները դարձրել են ճարտասածան ապրանքներ: Նա պատմեց, որ իր վէպերի մեծ մասը եւ 3 թատերգութիւն մերժուեցին բոլոր խմբագրութիւնների ու թատրոնների կողմից, այն պատճառաբանութեամբ, թէ այդ ստեղծագործութիւնները «ժամանակակից մոդերնիզմի հանրապիտարաններ են», որոնք հակասում են ուսու գրականութեան արժանաւորներին: Մինչդեռ ինքը՝ Ակսիոնովը համարում է, որ արեւմուտքի վրէժն էր ուսու գրականութեան համար գեոեւս 17րդ դարում, իսկ ուսու գրականութեան համար դեռեւս 17րդ

զարուժ, իսկ ուրազը Անդրէյ Բե-  
լին եւ Օսիպ Մանուկը Արեւմուտ-  
քի մոզլուն վկայի նախորդներն էին:

Ու չնայած նրան, որ Ակսիոնովի ըս-  
տեղծագործութիւնները մերժուեցին հր-  
րատարակչութիւնների ու թատրոնների  
կողմից, Խորհրդային Միութեան հեղի-  
նակների իրաւունքների վարչութիւնը  
Փրանսիական հրատարակչութիւններին  
վաճառեց Ակսիոնովի մերժուած վէպե-  
րից երկուսը: «Գրականութիւնը խաւիար  
չէ եւ եւ էլ խաւիար արտադրող ձուկ  
չեմ», — բողոքում էր Ակսիոնովը: —  
«Իմ՝ երկրի գրականութեան մէջ ես գո-  
յուքիւմ ունեմ միայն կէս չափով»:

Այս ժամանակաշրջանից սկսեալ Ակ-  
սիոնովի Հայրենիքում չհրատարակուած  
ստեղծագործութիւնները սկսեցին լոյս  
տեսնել արտասահմանում: Ծրանսխայում  
հրատարակուեց նրա «Մեր սպիտակ  
քն» վէպը: Միացեալ Նահանգներում՝  
«Պոպպալտէ քոչուրը եւ ուրիշ պատմու-  
թիւններ» գիրքը: Իտալիայում՝ ինքնու-  
կենսագրական «Այրուածք» վէպը:

1979 թուականի Յունուարի 23ին,  
արտասահմանեան քաղաքները հազար-  
դեցին Մոսկուայից, որ խորհրդային 24  
գրողներ եւ նկարիչներ ստեղծեց են  
«Մետրոպոլիտան օտարերէրք»: Նրանց հետ  
էր նաեւ Ակսիոնովը, որը ասերգրի  
! ո յանձնել էր հին թատերգութիւններից  
մէկը՝ «Չորս ալիւնները» եւ մէկ թարգ-  
մանութիւն Ջոն Ապպոյի «Յեղաշրջում»  
վէպից:

Տարեգրքի լոյս տեսնելու նախօրեա-  
կին մասնակիցներից ամենաերիտասարդ  
զրույնը Վեկտոր Երոֆիւբին եւ Եւզենի  
Պոպովին վտարեցին Գրողների Միու-  
թիւնից: Իրանից յետոյ Ակսիոնովը, Իս-  
կանդերը, Բիտովը, Ախմադովինան,  
Լիպկինը եւ Լիանիանսկայան յայտարա-  
րեցին, որ իրենք էլ չուրս կը գան Գրող-  
ների Միութիւնից, եթէ իրենց երիտա-  
սարդ ընկերներին չվերականգնեն Գրող-  
ների Միութեան մէջ: Նրանց չվերա-  
կանգնեցին ու 1979ի Դեկտեմբերի 20ին  
Վասիլի Ակսիոնովը դուրս եկաւ Խոր-  
հրդային Միութեան Գրողների Միու-  
թիւնից:

Երբ 1980 թուականի Յունուար ամ-  
սին սկսեցին Սախարովը աջօրուեց  
Գորկի քաղաք, Ակսիոնովը ստորագրեց  
Սախարովի պաշտպանութեան նամակը:  
Իրանից յետոյ նա վտարուեց կինոյա-  
ստղների Միութիւնից եւ «Լիտֆոնդից»,  
որը զբաղում է խորհրդային գրողների  
կենցաղով: Աւարտուեց Ակսիոնովի շրժ-  
ուար կեանքը Խորհրդային Միութեանում:  
1981 թուականին նա սկսեց իր աւելի  
զժուար կեանքը արտասահմանում, ս-  
րովհետեւ Հայրենիքից կտրուած գրողի  
Համար շատ քանք պիտի լինի տարա-  
գրութիւնը: Ի՞նչ արած, ինքը չէր որ  
սրտից այդ համբան: Խորհրդային իշ-  
խանաւորները զրկեցին նրան խորհրդա-  
յին քաղաքացիութիւնից:

է. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Ա. Տ Է Ր Մ Ի Ն Ա Ս Ե Ա Ն

Հ Ա Յ Յ Ե Ղ Ա Փ ՈՒ Խ Ա Կ Ա Ն Ծ Ա Ր Ժ ՈՒ Մ Ը  
1890 Է Ն 1903

Կ Ա Ն Ե Ա Հ Ա Ս ՈՒ Թ Ի Ի Ն Ը

Հայրենասիրական-քարենորոգչական շարժում մը, ստեղծուած Հայ բարձր կրթականութեան եւ քաղքենիութեան կողմէ, կը փորձէ նախ, մինչեւ 80ական թուականները, ձեռք բերել Արեւմտեան Հայաստանի ազատագրումը՝ ուսումի, քարոզութեան եւ դիւանադիտութեան(48) միջոցով. այս շարժումին ուղին պատրաստուած էր երկարատեւ սկզբնական փուլով մը, սկսած՝ Ծրանսական Յեղափոխութեան հետ, եւ յատկանշուող մշակութային մերանունըով մը (Պալքաններու Հռոմոյթը յիշեցնող)։ Հայկական Հարցի միջազգայնացումին յաջողող յուսախարութենէն (1878) պիտի ծագին ըմբոստութեան առաջին նշանները։

Բայց յեղափոխական քարոզութիւնը ապարդիւն պիտի մնար, Արեւմտեան Հայաստանի մէջ, եթէ այս մերթնըր ինքնին տուած չըլլար իր զարթումին նշանները։ 1862ին՝ Զէյթունի(49) ապստամբութիւնն է։ 1863ին՝ Վանի եւ Էրզրումի ըմբոստացումները։ Այս շարժումները, թէեւ կողմացած, ինքնածին, տնկադժակերով՝ հսկայ արձագանգ կը դնեն Հայկական աշխարհին մէջ(50)։

Տասը տարի ետք, կը յայտնուին զազտի բնկերութիւններ, սկիզբը՝ կարճատեւ ու կղզիացած։

- 1872ին՝ «Փրկութիւն ի Միութիւն», Վան։
- 1878ին՝ Աւստի կազմակերպութիւնը, Կրկին Վան։
- 1881ին՝ «Պաշտպան Հայրենացոյց», Էրզրում։

Նպատակակէտերը Համեաւ են. վերջ տալ ազադակող անարդարութեան, վարչական-հարկային քարենորոգումներ ձեռք բերել։ Այս կազմակերպութիւններու թուականներն ու միայրերը բաւական բազայախօսէն ցոյց կու տան անոնց յարակցութիւնները՝ դէպի Փոքր Ասիա առասկան յառաջխաղացին(51)։

(48) Այս սերունդի մեծագոյն յարգութիւնը Էլաւ 1860ի Հայկական (Ազգային) Սահմանադրութիւնը, Սուլթանի կողմէ վաւերացուած՝ 1868ին, որ Կ. Պոլսոյ մէջ կը ստեղծէ Հայկական Ազգային Ժողով եւ տնկէ բխող մարմիններ։ Նոյն սերունդի տէճեմ անփառունակ ձախդարութիւնը՝ Պերիթի դաշնագրի Յիշ յօդուածը, որ Էրբեք շկիրարկուեցաւ։

(49) Զէյթունը, մեծամասնաբար հայ գիւղերու հոյսով մը շրջապատուած հայկական քաղաք, քառած ճարտիկ լանջերով։

(50) Զէյթունցիները օգնութիւն փնտռեցին, կազմուեցան Կ. Պոլսոյ եւ Անյոնի փոքրապարկի (ինչպէս Մ. Նալպանտեանը, գրող, ճշմարտար Իրապարակագիր եւ զինուորացի յեղափոխական) մտաւորականներու հետ, ամենց մէջ արթնցնելով խեղճապառ հայրենասիրութեան հոսանք մը։ Նոյնիսկ պատգամաւորութիւն մը դրկեցին, համընդհանրաբար հանդերձ, Փարիզ՝ Նախընթաց Գ. ին։

(51) Տե՛ս Լ. Նալպանտեան, անդ, էջ 80-89։



1885ին կը հիմնուի, Վանի մէջ, առաջին հայ յեղափոխական կուսակցութիւնը — Արժեւական կուսակցութիւնը(52), ստեղծուած՝ Վանի ուսուցչանոցէն ելած խումբ մը երիտասարդ ուսուցիչներու կողմէ: Այս կուսակցութիւնը, նախ սահմանափակուած Վասպուրականով, ունի փոքր թիւով շարքայիներ. բայց շուտով սիրտի տարածուի մինչեւ Պարսկաստան, Անդրկովկաս ու նոյնիսկ Միացեալ Նահանգներ: Իր շարքերը կազմուած են բացառապէս «Թրքահայերէն կազմակերպութիւն չի ստեղծեր Անդրկովկասի մէջ, հակառակ ժայելած համակրանքին: Աղղային աղատութեան» միտող դեմոկրատներու կուսակցութիւն մըն է, որ սակայն կ'ընտրէ բիրտ ուժի գործածութիւնը եւ հայ գիւղացիութեան ինքնապաշտպանութիւնը:

Կովկասահայ մտաւորականութիւնն է, սակայն, որ առաւ հայութեան քաղաքական երկու մեծ կազմակերպութիւններ, խառն անդամակցութեամբ: 1887ին, վեց ուսուցչայ մարքսիստ ուսանողներ կը ստեղծեն, Ժընեւի մէջ, Ս. Գ. Հնչակեան կուսակցութիւնը(53): 1890ին, Թիֆլիսի մէջ, Փեթրոկըժաւէն, Մոսկուայէն եւ Թիֆլիսէն հաւաքուած ուսանողներու եւ յեղափոխական մտաւորականներու միամուլուէն կը ծնի «Հայ Յեղափոխականների Դահնակցութիւն»ը, համախմբող՝ քաղաքականօրէն աչաքսեակ տարբեր, շտիպուորականէն մինչեւ քնկերոյարականները(54):

Միամուլուի կարծառեւ փորձէ մը ետք (1890-91), երկու այս կուսակցութիւնները, երկուքն ալ ուսական յեղափոխական շարժման տղեցութիւնը կրող, երկուքն ալ միտող՝ «Թրքահայ» գիւղացիութեան պաշտպանութեան ու ազատագրումին, սիրտի առաջ տանին զուգահեռ ու մրցակից գործունէութիւն մը:

Միւս կողմէ, անդրկովկասեան ճարտարարուեստական կեդրոններուն մէջ, ուսական ու վրացական բանուորական շարժումներու կառուցումով, սլոնի դարգահայ հայ բանուորական շարժում մը(55):

Հնչակեաններու ազդեցութիւնը նոյնքան զգալի է, սակայն, քան վերացի առաջին մարքսիստներունը՝ «Հայ Բանուոր Յեղափոխականների Ասոցիացիայ»ի վրայ, հիմնուած 1892ին, Թիֆլիսի մէջ: Որովհետեւ, նպատակադրելով հանդերձ բանուոր դասակարգի քաղաքա-տնտեսական շահերու պաշտպանումը քաղքենիութեան ղէմ, ան մասնաւոր ուշադրութիւն կ'ընծայէ ազգային հարցին եւ արեւմտահայութեան ճակատագրին(56):

«Հայ Բանուորների մարքսիստական խմբակ»ը 1898ին հիմնուած՝ Թիֆլիսի մէջ, «վճռական» փուլ մը կը թեւակոխէ կապելով հայ մոգոմոլորդի ու բանուորութեան ազատագրումը՝ Անդրկովկասի եւ Ռուսաստանի պրոլետար-

(52) Նայն տեղը, էջ 90-103:  
 (53) «Հնչակ» (—գանգակ) քարգմանութիւնն է Հերզնի Եփրեյիսի: Թերթին հիմնադիրները՝ բարձր Բազմիճի ծագումով վեց երիտասարդներ: Աւետիս Նազարեան, օրիորդ Մարո Վարդապետեան (նախորդի կինը), Գարբէլ Կաֆեան (Շմաւոն), Գեորգ Ղարաբեան, Ռուբէն Խամազուտեան (Խամազոտ), Մ. Մամուկեան:  
 (54) Հայ Յեղափոխականների Գաղափարաբան հիմնադր է երկարատեւ բանակցութիւններէ (1898ի աշու. ԱՅՏի տնտղ) ետէ, «Երիտասարդ Հայաստան» զազումի նպատակադրութեան անդամներու, Մոսկուայի ուսանողական խումբի եւ այլ տարրերու միջեւ: Կը խորքը վաւերական հարրահիւսներ, Վոյի սոցալմակամներ, Եժափակամներ (սե'ս տեղեկագրի նոթ 33), մարգարտեան եղակեաններ: Տե'ս Մ. Վարսեղեան, «Հայ Յեղափոխական Դահնակցութեան պատմութիւն», Փարիզ, 1982, I, էջ 59:  
 (55) Այս քիտադրութիւնը կը վերաբերի շարժումի փուլերուն եւ բանուորական շարժումի մը տարրաբան հարցը չի զննը, Բանի որ այդ տարրաբանը համեմատ է:  
 (56) Տե'ս Կ. Պարսաւեան, Կնգ, III, էջ 348Կ սկսեալ:

խառն ազատություն: Առաջին անգամ ըլլալով, ազդեցին Հարցի, արեւմտահայ Հարցի լքումը կը տեսնենք, անոր անտեսումը՝ իբր պատասխանատու Հայ բանուորի մեկուսացման(57):


1899ին 1901, այս միջադրամական Հիմին դրոյ է, որ Անդրկովկասի մէջ պիտի զոյանան մարտիս փոքր խմբաւորումներ: Հայերը անոնց մէջ փոքրաթիւ են, բայց շատ զործօն: 1890ին, Ստեփան Շահումեան կը ստեղծէ Զաւալ-Օղլիի (Ներկայիս Ստեփանական) մէջ, Հայ մարտիս խումբ մը: Հայեր կան Բաբուէ եւ Քիֆլիսի ՌԲՄԳԻ (Ռուս Բանուորական Սոցիալ Դեմոկրատ Կուսակցութեան) կոմիտէներուն մէջ (1901): Մարտիս խմբակներ կը կազմուին, 1901էն 1903, Երեւանի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Ալազիք-դիւի, Հաղարտի մէջ: Այս շարքումը կը պատկուի ստեղծումովը Քիֆլիսի մէջ, 1902ի Հոկտեմբեր ամսուն, «Հայ Սոցիալ-Դեմոկրատների Միութեան»: Կըմբաւորուին ռուս Հայերէնով խմբադրուող իր ընդլայնակեայ օրգանը՝ «Պրոլետարիատ», ինքզինք կը նկատէ ՌԲՄԳԻ (Ռուս Բանուորական Սոցիալ-Դեմոկրատ Կուսակցութիւնը պիտի նշուի այս սկզբնաստորով՝ յաջորդ էջերուն դրոյ) մէկ ճիւղը, եւ մանիֆեստով մը կ'ընդգծէ Հայ եւ ռուս պրոլետարիատներու պայքարներուն նոյնութիւնը: Կ'անհետանայ 1903 Մարտին, երբ ՌԲՄԳԻ կազմակերպութիւններու առաջին Համագործող, Քիֆլիսի մէջ՝ կը մտնէ միաժուլել ըստը կոմիտէները, կազմելու Համար ՌԲՄԳԻ կ'սկսան Միութեան Կոմիտէն(58):

Այսպէս, տասնամեակի մը ընթացքին, Հայութիւնը կ'անցնի ազգային յեղափոխութեան պրոլետարական միջադրամականութեան դաջող բուրբ փուլերը: Իր մահճատական դրոյցներէն շատ աւելի մեծ արագութեամբ, Ի. դարու սկիզբին ան ռուս քաղաքական կազմակերպութիւններ, որոնք ազգային հարցին կ'առաջարկէն Հիմնովին տարբեր լուծումներ: Արդարեւ, Հայ յեղափոխականներու կենսազրկանները կու տան մեզի սպարտաքիւնը՝ ընդ որում ուղիքի մը յամառ փնտրութիւն: Մալուժ առան ընկերային նոյն խաւերէն՝ մուսուրական խաւէն, միջին դասու Համեռու խաւերէն, գիւղացիական դասէն, անոնք կ'անցնին մէկ կուսակցութեանէն միւսը, բերելով յեղափոխական Հարուստ փորձառութիւն մը՝ յամառ դրացի ժողովուրդներու սպասին նաեւ(59):

(57) Նոյն տեղը:

(58) Նոյն տեղը: Տե՛ս նաեւ Կ. Մամիկոնեան, անդ. էջ 29-37: Իրականութեան մէջ Հայ Սոցիալ-Դեմոկրատներու Միութիւնը միայն տեսակներէն անձեզա գոյութիւն, Հոկտեմբեր 1902ի եւ Մարտ 1903ի միջև: Իր գործունէութիւնը կը սահմանափակուի Պրոլետարիատի յօդուածներով: Ան իմբաժ է, միւս կողմէ, Յոյն ազգային կազմակերպութեան մէջ, ենտացային հայկապար իայ բոլշեւիկներ. — Ստեփան Շահումեան (1878-1918), Ա. Զուրաբեան, Ս. Խանոյեան, Բ. Գալստայեան, Ա. Երզնկեան, Ա. Կարոյեան, Մ. Մելիքեան, Յակոբ Յակոբեան, Բ. Գեղամեան, եւայլն: Անոնցմէ շատեր պիտի անհետանան ռուսիան մտքագործումներուն: 1903ի Մարտին ետ, հայկական պրոլետարիատը եւ վրացական Պրոլետարիատի միացումն, կրտարակալելու համար իբր Պրոլետարիատի կոնքը: Եւ յերեմ, վրացներն եւ ռուսներն:

(59) Կուսակցական նայելներու զետեղ վրայ, մուտք գործողներու ընկերային ծագումը չի բուրդը ճշորոշիլ դեր կատարել: Նոյնիսկ 1905ին ետ, աւելի մեծաթիւ են բանուոր իայ շարքերէնը Գաղակցութեան մէջ, քան սոցիալ-դեմոկրատիայի: 1890էն ետ, Գաղակցութիւնը դարձած է ժամուցիչ կուսակցութիւն, աւելի կ'իյնն իայ յեղափոխականները: Աւելի անհաւան հայրավորը, կրտած ազդեցութիւնները կը բուրդը ճշորոշիլ կ'զտը ըլլալ սկզբութիւններու ընտրութեան պահուն: Անուշտ ատարիսը իայ բոլշեւիկներու մէջ սե՛ր բիւր անոնց, որոնք անձանք՝ մայրենի լեզուին, ենթակայ կ'ըլլային անտարուսեան մեղադրանքին, բայց մշակութապէս անսպաս զաղակցականներն ալ որոշ քիւ կը կազ-



Ջ Ի Ն Ա Կ Ա Ն Ա Յ Ո Ի Մ (60)

Հայ ժողովրդական աւանդութիւնը յաճախ յեղափոխական շարժում ընելով կը հասկնայ միայն Ֆետայական շարժումը(61)։ Արդարեւ, երեք կուսակցութիւնները՝ Արմենական, Հնչակեան եւ Դաշնակցական՝ էական տեղ տրամադրած են յեղափոխական գիտելալ պայքարին։ Քսան տարիէ աւելի, 1885էն 1908, Հայ յեղափոխականները Օսմանեան կայսրութեան մէջ կերպիւ լայի եւ ահարեկութեան լծուեր են. իրենց գիտակից բնորդները Հանդիսացած են կորուստիական, հայդուկային (Պուլկար) եւ իրլանտական շարժումները։

Իրողաբար, Ֆետայական շարժումէն առաջ, հայկական հողի վրայ (Մշոյ Դաշտ, Վասպուրական) ակտիւտեա կ'ըլլանք գիւղացիական աւազակային երեւոյթի մը։ Փոքրաթիւ հայ գիւղացիներ, նախնական, բայց քաջարի տիպարներ, աւազակախումբեր կը կազմեն, իրենց պաշտպանութիւնը տարածելով հայ գիւղերու վրայ, խելով գանոնք քրտական «հովանաւորութենէն»։ Սկիզբը, անոնք գուրկ են աղաչին-քաղաքական գիտակցութենէ. սակայն շուտով, փոխակերպուելով իրենց պայքարին եւ ժողովրդական շարժման բովին մէջ, անոնք կու գան յարելու յեղափոխական կուսակցութիւններուն՝ Ֆետայական առաջին սերունդը պայքանելով(62)։

Արմենականներ, Հնչակեաններ եւ դաշնակցականներ՝ էական աշխատանք նկատեցին հայ գիւղացիութեան ինքնապաշտպանութեան կազմակերպումը։ Ասոր արուած կարեւորութիւնը կը բխէր ա'յն իրողութենէն, որ հայ գիւղացիութիւնը, դարաւոր ստրկութեան եւ իր աւայտի անգէն միճակի բերումով, կրտարական համակերպումի մը հասած էր։ Գիւղացիին ըմբռնել տալ քրտական «թալանչիճութեան», թուրք պաշտօնէութեան բրտութեան եւ վաշխատունեքու ազատութեան դէմ պայքարելու անհրաժեշտութիւնը՝ կ'ենթադրէր ինքնապաշտպանութեան գործիքներ ունենալ։ Հետեւաբար, գէնքերու գնումը եւ փոխադրութիւնը, անոնց բաշխումը կամ վանաւոր՝ գիւղացիին, ինչպէս նաեւ գիւղացիութեան աշխատանքը՝ կ'լանեցին կուսակցութիւններու կենդանի ուժերը։

Ֆետայական խումբերը, 10-15 մարդուած եւ գիտելալ մարտիկներէ բաղկացած, ճշգրիտ դեր մը ունէին. շրջուն, առհասարակ ոչ նախաշարժակ, անոնք օգնութեան պիտի հասնէին դժուար կացութեան մէջ գտնուող գիւղերու եւ շրջաններու եւ, մանաւանդ՝ գերենք շրջապատող գիւղացիութիւնը

մէին։ Կենսագրականներու ընթերցումը ցոյց կու տայ, որ յեղափոխական տեղով մը (գործի, եւ գործի՝ անհրաժեշտ) յափշտակուած էր արեւիկայայն երիտասարդութիւնը, զայն գեր-արամադիր դարձնելով բոլոր կանչերուն։

(60) Հոս պիտի տամք միայն ինչ որ կը թուի ըլլալ բնորոշ նկարագիրը այս շարժումին, որ «փետայիցիներ փայտեցան աւանձնակի տնիւ տարբերով. անոնց յիշատակը վառ կը մնայ Սփիւռքի եւ ճայթիկ հորինոյթային Հայաստանի տարածքին։ Հայերէն մտանդագիտութիւնը այս մասին՝ իսկապէս նկատելի ծաւալ ունի — յուշեր, պատճառներ, մեր, կենսագրութիւններ, յօդուածներ, վեպեր, երգեր, քերթուածներ, եւ այլն։ Սակայն համադրական գործերը եզրուաբար են։ Լաւագոյնը, ներկայիս, քեւ յուշագրութեան անպիտան՝ Ռուբին գործի է։ «Հայ յեղափոխականի մը յուշերը», Լոս Անճելոս, 1962, եօթը հատոր։

(61) «Փետայի» պարսկերէնով կը նշանակէ «անձուէր»։ Փետայիները քաղաքականութիւն յաճախ յանձնեցան մասնաւոր գիմագիծ, եւ կուսեցան, երբեմն յարգաբար, արմենական, հնչակեան եւ դաշնակցական շարժերու մէջ։

(62) Այսպէս, սրեակ, եռակար Աբարա եւ Միսն։ Տե՛ս Բուրքէն, Գ. հատոր, էջ 85-82։

դաստիարակէին, քաղաքական դիտակցութիւն եւ դիմադրական ոգի ներշնչէին անոր :

Բերանացի եւ դրաւոր քարոզութեամբ (Թուօցիկներ, գրքոյկներ, յեղափոխական թերթեր), պատկերներով, ժողովրդական-յեղափոխական բազմաթիւ երգերով, պոեմներով, հնչակեաններն ու դաշնակցականները տարածեցին հերոսին, զնոր մարդուն խորհուրդը, միքսսը, էր խիզախումներով՝ յարգուած մինչեւ իսկ թշնամիէն : Մնած՝ ժողովուրդէն (արեւելահայ կամ արեւմտահայ մտաւորական, գիւղացի, հողեւորական), ան կը զոհուէր ժողովուրդին եւ կուսակցութեան, ցուցաբերելով բացարձակ հաւատարմութիւն, բարոյական մաքրութիւն եւ քաջութիւն(63), իր զոհողութեամբ իսկ արթնցնելով ժողովուրդը թմբիւնէն :

Այսպէս, յեղափոխական կռիւր նախ եւ առջ բարոյա-հոգեբանական յեղափոխութեան է, որ կը ծառայէր : Անիկա առաջին անհրաժեշտ փուլն էր նշաւաբար մը, որուն յաջորդ փուլը պիտի ըլլար ընդհանուր ապստամբութիւնը :

Հնչակեանները, իրենց շարժումին առաջին թափին մէջ, 1890էն 1896, ընդհանուր ապստամբութիւնը կը նկատէին կարելի : Իսկականները առաջիններու ձախողութենէն խրատուած, թշնամի բիրտ փոխադարձութենէն զսպուած՝ զայն յետաձգեցին անորոշ ժամանակով, ինքնապաշտպանութեան յատկացնելով իրենց ճիւղը : Այսպէս, գինու մի ճիւղը պիտի դառնայ մը-տասնեւնուամ. ֆեոտալիստներու զինամարտմը, էւ Գոյկասի, էւ Թուրքիոյ մէջ, խարխիւններու եւ գինարան-զինադրձարաններու ստեղծումը, մարտավարական հարցերու լուծումը, դրամական միջոցներու գոյացում՝ ի հարկին բռնի հանգանակութիւններով :

Կուսակցութեան (որ կարող մը շարքայիններու աչքին իսկական բանակ(64) կը նկատուի) դադափարարանութիւնը կ'անցնի երկրորդ գծի : Գործնական հարցերը, գործունէութիւնը կը ժողովեն տեսութիւնը, որ նշանախօսքերու շարքի մը կը վերածուի, հասկնալի՝ գիւղացիութեան, օհամեսա խաւերուն :

1898էն սկսեալ, հայ սոցիալ-դեմոկրատները բուն կերպով կը քննադատեն տեսարանութեան այս անտեսումը, եւ կոյկասահայ երիտասարդութեան զահարելութեան ոգիին օգտագործումը գինուորական հետաւոր, աճուլ եւ արիւննալի զարկածախնդրութիւններուն համար, Թուրքիոյ մէջ(65) : Ամենանշանաւոր դրուագներէն մէկը ամբողջ Անդրկովկասի մէջ ծա-

(63) Այս յեղափոխական մարտիկ բարոյականութիւնը գործնաւորի մը այսօր կը վերագրենք աշխարհի ժամանակակից շարժումներու մէջ : Գեղարկական կեանքի եւ ըմտանքի արժեքներու ուժեղացումը, Փափք Ասիոյ մէջ, եսկազգեցարար, կը տեսնուի շատ խիստ սեռային բարոյական մը, կիսօ յարգանքէ, եւայլն : Ապտեմոլութեան հարցերը, իրենց կարգին, կը պարտագրէին երկաթեայ կարգապահութիւն մը, կուսակցական արուստներու ամօղայման հնազանդութիւն, եւայլն :

(64) Ռեյպա՝ Նիկոլ Գումանի (1867-1914) տեսակէտը. անդրկովկասցի այս նուիրիկն ուսուցիչը պիտի գտնուի գաղափարական փետայական շարժման ամենափայլուն ղեկավար-ներէն մէկը : Տե՛ս վարամեղան, անդ, I, էջ 486-488 :

(65) Կ. Մամիկանեան (անդ, էջ 138) այսօր Գաղափարական դէմ կը գործածէ նայն փաստարկումները : Թէ՛ անոց արկածախնդրական գործունէութիւնը Թուրքիոյ մէջ, անոց ամիւտասփիւրթի սեքուարար օժանդակութիւնը հայաբնակ ազատագրումը կ'արգիլէին, տեղի տալով եւնոյնի մեծ պետութիւններու եւ Թուրքիոյ միլիտարիստն ու, հետեւաբար, շարքերու վտանգին : Թէ՛ իրենց շարժման ազգային կողմնորոշումը կ'արգիլէր հայ եւ քուրդ ժողովուրդներու գաղափարները, ինչ որ միակ միշտ ազգապարտութիւնն էր :

աւրոյ դաշնակցական-մարտիտ այս բանալէճին՝ Հանդիսացած է հրապարակային ճակատումը, 1901ին, ոտցիալ-դեմոկրատ Բուզդան Գնունեանցի(66) եւ Հ. Յ. Դ. Արեւմտեան Բիրոյրի ներկայացուցիչ՝ Քրիստափորի(67): Գընունեանց, որ դաշնակցականները կ'ամբաստանէր արեւելաւայուցիական ուժերը զէպի թուրքիա բուհուելու եւ պրոլետարիատի շահագործումը անտեսելու յանցանքով, Քրիստափորէն կը ստանար այսպիսի պատասխան(68) մը. «Ի՞նչ կ'ըմբոստանաք դրամատերներու իրացուցած աշխատանքական շահուելիքը արժէքին դէմ, բայց մի՛ մտնաք, որ անդին ամէնէն ճնշուած ու պրոլետար ժողովուրդը կայ, որ ո՛չ միայն գրկուած է իր արդար վաստակի յաւելիքով արժէքին, այլև ամէն օր իր շահուելիքով արինքը կու տայ քրիստական հարուածներուն տակ...»:

ԱՆԱՀԻՏ ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ

(Շար. 2)

(66) Բուզդան Գնունեանց (1878-1911): Մէկը տաքին հայ մարտիտներէն: Ծնած՝ Եւզի (Վարաթա): Տեղւոյն ռեալական դպրոցին մէջ ուսումնական փայլուն շքանք մը ետէ, կ'անցնի Թիֆլիս: Ազգայնական է դեռ: Եւրոպայ կը գտնայ փոքրակրօտի մէջ, որ կ'աւտանի Արեւազգեստեան Հիմնարկին մէջ, 1896էն սկսեալ: Ետեով աշագրաւ դէմ կը դառնայ Մարաշազգեստի ուսանողական շքանակներուն մէջ, կը մտնէ Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութեան մէջ եւ կարեւոր գործունէութիւն կ'ունենայ տեղւոյն բանուարական շքանակներուն մէջ: 1901ի ուսանողական ցայցերու ընթացքին ձերբակալուելով՝ կ'աւտարուի Բաբու, ուր, Քրասնիի, Քարեքիի եւ Ֆեյխովիիի հետ, կը կազմակերպէ Բաբուի Կամիտէն: 1902էն 1903, իբր միջազգային դեմակրատիայի խօսակի՝ Բաբուի մէջ, քափով կը նետուի հայ հանրային կեանքին մէջ՝ վճռած գարբնցեցի երիտասարդութիւնը Հայկական Հարցի քննարկէն: Այսպէս է, որ կը դիմակալէ Քրիստափորը, հանրային վիճարկումի մէջ անոր դէմ պարփով իր շարժումը: 1903ին, կը մասնակցի Լոնտոնի համաժողովին: 1904ին Ռուսիայի Կոնգրեսական Կամիտէի անդամ է: 1905ին՝ անդամ փոքրակրօտի Սովետի Գործադիր Կամիտէին (հարաւարդեալ փոքրով անունն ապ): Մինչեւ մահը, 1911ին՝ բանտի մէջ, անդադար ձերբակալման, աւտարի կամ փախուտի վիճակին մէջ է: Տե՛ս Գ. Անանու, «Հայ Մտաւարականութեան Պատմութիւնը-Բողոքան Գնունեանց», «Գործ», 4, 1917, էջ 60-77:

(67) Քրիստափոր Միխայելեան (1858-1905): Դաշնակցութեան գլխաւոր հիմնադիրներէն: Ծնած՝ Կովկաս, գիւղական միջավայրէ: Կամուխէն՝ արք, կ'ունենայ քառուս մառկութիւն մը: Կ'աւտանի գիւղի հայկական դպրոցին մէջ, ապա իբր քառուսուոր սան՝ 1874էն սկսեալ՝ Թիֆլիսի մանկավարժական առումնարանին մէջ, կ'անդամագրուի «Եւրոպական Վարձայնի»: Ռուսացի՝ գիւղ կը դառնայ 1881ին: 1884ին կրկին Թիֆլիս է, ուր Մուշեղ եկած հայ բանուարներ գրառանջ կը դարձնէ, միանգամայն անցնի գիւղականութեան գրառուելով կիրակիները: Հայկական դպրոցներու փակումէն ետէ, 1885ին, կ'անցնի Մոսկուա, ուսանելու հոգաւորութեանը կը հետաքրքրուի գիտական եւ տնտեսական հիշքերով:

Նիւթական պատեաններով, 1887ին կը ստիպուի ընդհատել ուսումը եւ վերադառնալ Թիֆլիս, ու՛ր ինչքան տրամադրելով ազգային-յղափոխական նպատակներու իրագործման: Հիմնադիրներէն մէկն է, 1888ին, «Երիտասարդ Հայաստան» գաղտնի կազմակերպութեան, եւ 1891ին՝ անդամ է. Յ. Դաշնակցութեան առաջին կեդրոնին: 1892էն սկսեալ անդամ՝ Արեւելեան Բիրոյրին: Կուսակցութեան ներքոյն Հոգեւ. Ժողովին (1896) ետէ, անգամ կ'ըմտարուի Արեւմտեան Բիրոյրի եւ կը մեկնի Փրնու, ուր կը ստանանէ «Գործակ» զնկավարութիւնը (տե՛ս տեղեկագրի հոք 22): Կը ստեղծէ «Փրո Արեւելեան» (տե՛ս տեղեկագրի հոք 88), Փարիզ: 1901ին կը վերադառնայ Կովկաս, ուր կը կազմակերպէ, «Փոթորիկ» միջոցով, բուն հանգանակութիւնները (տե՛ս տեղեկագրի հոք 100): Կը սպաննուի Պուլկարի մէջ, 1905ին, պայթուցիկներու փորձարկումի ընթացքին: Տե՛ս Գ. Լազեան, «Յեղափոխական Ղեկավար», Գանիլ, 1945, էջ 12-31:

(68) Տե՛ս վարանգեան, անդ, I, էջ 324 եւ Գ. Անանու, Աշուս յոգուածը:

### ՎՈՂՈՊՈՒՏԻ ՓՈՐՁԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ...

Ստորև ընթերցողին ուշադրութեան կը յանձնենք կրկու գրութիւններ, ուսումնասիրութեան մը եւ նմանի մը, որոնք զարգացար էլ կու տան մեր մէջ թիւ ծանօթ, ըստ չափաբարձարի եւ, յոսկայէն, ամերիկեան արեւտանի պատմութեան մէջ առաջնորդ տեղ մը զբաղող Արշիլ Կորթի Ատոյեանի մասին:

Ուսումնասիրութիւնը առնուած է Քրայնի շարաթաթերթի 11 Մայիս 1931ի համարին, իսկ նամակի պատճենը մեր երիտասարդ աշխատակիցներէն Մովսէս Ա. Լերիկեանին արամազրած է նամակագրէր ինք՝ Արշիլ Կորթի գիտորդին, Կարլէն Մուրատեանի:

Ինչպէս պարզ կ'ընթերցի Քրայնի շարաթաթէն, Արշիլ Կորթիի տաղանդը որ աւելի աւելի կը բացայայտուի ու կը հաւաքայթէ աւելի՛, հանդամանք մը, որ ըստ երկուք թին անհանգստացուցած է որոշ հասակներ, որոնք ազնուցիցի մարտիկները սկսած են Քաղաքացիական պատերազմի զարթոյնը որ արեւտանով զարթոյնը ներկայացնել հրեայ կամ հայ հրեայ:

Կարլէն Մուրատեանի նամակը արգար ընդգիւժումով մը կը ըստիւնի որ ցերեկով կատարուող կողոպուտի այդ բացայայտ փորձը:

Տեղին է յիշել, որ Կարլէն Մուրատեանի նամակը պարզապէս շահագրգռութիւններու արդիւնք չէ: Մուրատեանի համար մեայուն հետազոտութեան եւ ուսումնասիրութեան արկար եղած է Արշիլ Կորթի, որուն կենսագրի ու գործերուն նուիրուած իր երկու տասար հատարներուն առթիւնք՝ մեն արեւտանագէտին անմիջական ծանօթներուն հետ ունեցած է բազմաթիւ զրոյցներ, բնականօրէն խմբագրութեամբ լոյս ընծայած է մօրը՝ Վարդուշիկի ուղղուած Կորթիի նամակները եւ խմբագրած է տարաբախ նկարիչին նուիրուած ԷԼԲարտոս եւամասնի 1911ի արեւի թիւը, որ ընդարձակ ծանօթութիւններ հազարող շահեկան արգիւր մը հանդիսացաւ:

Արշիլ Կորթիի մասին անփոխարինելի վկայութիւններ կը հանդիսանան հետեւեալ պայմաններուն մէջ դրսևորուած տպաւորութիւնները: 1913ին, երբ լայն հասարակութեան դիտելու թիւ ծանօթ Արշիլ Կորթի ծփուլէն Լեւոնի մէջ իր գործերը կը ներկայացնէր, ակումայ տարրի մէջ գանուող գերիբապալտ Անտրէ Պրքթոնի եւ անոր ընկերացող Մաքս Էրնսթ աշխիւցին ցուցահանգէր եւ զայնք պարսնք կուցին ներկայացուած պատաստները: Եւ յիշած կարեւոր է Կարլէն Մուրատեանի հետ ունեցած զրոյցին մէջ համաբաւար գեղանկարիչ Ռեիլիմ տը Քուսիկէի հատատումը, ըստ որում՝ գերիբապալտները կը զարմանային, որ այս տարրիակ վանկին կանխած էր զիրենք գերիբապալտ ընդաւառին մէջ, յայտնելով միամտանակ, թէ ինչպէս նշանուոր չէր զարմած ան Ամերիկայի մէջ:

Քաղաքացիական պատերազմի թիւին մէջ պետի ներկայացնելը Արշիլ Կորթիի տաղանդին պարթիւնին, կենսագրի ու արեւտանի մասին պատրաստուած աւելի ընդարձակ գրութեան մը, Մովսէս Ա. Լերիկեանի տարագրութեամբ:

Ինչըրտ Մարտի Հրատ-  
200 Մատիւրն պոդասայ,  
Նիւ Եորք, Ն. Ե. 10016

18 Յունիս, 1980

#### Յարգելի Պարոններ,

Արշիլ Կորթի հայ մըն է, ո՛չ թէ հրեայ մը: Եւ իբրև իր զարմիկը, հարկ կը պլամ բողոքել այն սխալին համար, թէ՛ ինք ճշայ հրեայ մըն է, ինչպէն անդ զատած է մեր տպագրած հատորին մէջ, որուն պատահաւ ընտանիքս ողոյսահցաւ հեռամայնորու եւ նամակներու հեղեղով մը: Մայրս՝ Վարդուշը, անոր քոյրը կ'ըլլայ:

Կ'ակնարկեմ ժնչպէս ապրեցա՞մ — վաւերագրական պատմութիւնը Ամերիկայի հրեայ գաղթականներուն. 1880էն 1930» հատորին, հեղինակութեան՝ Այրվինկ Հոյի եւ Քեննէթ Լիպոյի, հրատարակուած մեր կողմէ (Գր-

չըրտ Մարէջ Հրատ. — 200 Մատիւրն պողոտայ — Նիւ Եորք, Ն. Ե. 10016) 1979ին: Էջ 47ի վրայ, Արշիլ Կորժիի մէկ նկարին վերաբարձրութեան ներքեւ, տեղ գտած են հետեւեալ բառերը. «Արուեստագէտն ու իր մայրը, գրծւած՝ Արշիլ Կորժիի կողմէ (1904-1948): Կորժին հայ երեսնամեայ մըն էր, որ Ամերիկա գաղտնեց 1920ին»: Այդ մեծ պատասաը՝ «Արուեստագէտն ու իր մայրը» կը պատկերացնէ Քեռիի մանկութիւնը իր մօրը հետ, Հայաստանի մէջ: Փաստօրէն, այսպէս կոչուած, «հայ Հրեայ» գոյութիւն չունի:

Արշիլ Կորժի, իսկական անունով Ոստանիկ Ատոյեան, զուտ հայ էր՝ իր բնածնութիւն երկու պարագաներով — Ատոյեանները՝ իր հօր կողմէ, եւ Մարտիրոսեանները՝ մօր կողմէ: Երաւամբ, ան կը սերէր հայ առաքելական եկեղեցւոյ քահանայներու հին գիծէ մը: Պատճառներէն մէկը, որ Առաջին Աշխարհամարտի ընթացքին կատարուած թրջական ջարդերուն իր մայրը, բնածնութիւն մեծամասնութիւնը եւ երեք-քառորդը հայ ժողովուրդին (Առաջին ցեղասպանութիւնը 20րդ դարու, որ համբայ հարթեց երկրորդի մը), անոնց քրիտանէութեան պաշտպանումն էր:

Կա՛մ ձեր հեղինակները թափթիած ուսումնասիրողներ են կամ ալ դուք կը փորձէք ընտանիքիս զանալ մեր հայկական գիտակցութիւնը, իսկ հայ փոքրամասնութեան, անոր ամէնէն հռչակաւոր ներդրումը ամերիկեան արուեստին: Թէեւ ես չեմ կրնար խօսիլ Ամերիկա ապրող կէս միլիոն եւ այլուր բնակող վեց միլիոն հայերու անունով, կրնամ սակայն վստահեցնել ձեզ, որ հայերը, մարդկութեան պատմութեան մէջ ոեւէ այլ ժողովուրդէ աւելի տառապած ըլլալով, շատ զգայուն են իրենց մշակութային ժառանգութեան նկատմամբ ցուցաբերուած որեւէ զլացումի առթիւ: Իսկ Արշիլ Կորժի շատ կեդրոնական բաժին ունի այդ ժառանգութեան մէջ: Իմ տպաւորութիւնս այն է, որ Նիւ Եորք ապրող բաւական թիւով Հրեաներ կան, որոնք կրնան առնուիլ ձեր հատորին մէջ: Այնպէս որ՝ պէտք չունիք միջնուկուտ հայկական զանձարանին մէջ եւ անտեղի կերպով նպաստելու ցեղային դիւրազանութեան:

Իրբեւ հրատարակիչներ, եւ Հօուն ու Լիպոն իբրեւ ձեր կրողները, ինչպէ՞ս կրցաք մտածել այն սխալը, թէ Կորժիի Հրեայ էր: Կորժիի մասին դրուած են բազմաթիւ գիրքեր, որոնցմէ երկուքը՝ Հրեաներու կողմէ: Անձնապէս դրեցի «Արշիլ Կորժի Ատոյեան»ը 1978ին, իսկ երկրորդ հատորս՝ «Բազմաթիւ աշխարհները Արշիլ Կորժի» լոյս պիտի տեսնէ այս աշնան, 1980ին: Այնպէս որ՝ բաւարար նիւթ կայ Կորժիի մասին: Դուք ուրկէ՞ Հաւաստեցիք ձեր թիւր տեղեկութիւնները:

Կը պահանջեմ, որ ճշդում մը հրատարակէք ձեր հատորին մէջ եւ ուշադիր ըլլաք, որ նման սխալ տեղեկութիւններ դատրին լոյս տեսնելէ: Ինչպէս Հրեաները, նոյնպէս եւ հայերը հպարտ են իրենց մշակոյթով: Ես անհունապէս հպարտ եմ իմ հայ ճեռիովս՝ Արշիլ Կորժիով: Մեր ընտանիքը զուտ հայ է իր բոլոր կողմերով եւ զուտ հայ առաքելական քրիստոնեայ: Դուք ընտանիքիս պարտական էք, ճշգիւտ ձեր հատորին մէջ լոյս տեսած սխալ յայտարարութիւնը, եւ ես պիտի գնահատեմ նման արտայայտութիւն մը ձեր կողմէ:

Անկեղծօրէն՝

ԿԱՐԼԷՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ, PhD,  
Փրոֆեսօր լրագրութեան եւ  
հանրային հարողակցութեան



TIME, 11 Մայիս, 1981

### ԴԱՌՆ ԱՔԻԼԼԵՍԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ



ԱՐՈՒՆԵՍԱԿԻՆ ՈՒ ԽՐ ՄԱՅՐԸ

1948ի դարձան՝ պեղանկարիչ Արշիլ Կորջիի մտաւ Շերման, Քաննեքթիկէթ դանուոյ իր աշխատանոցի մարանը, պարանէ խեղդակապ մը պատրաստեց եւ, կոտորուած անդերէնով՝ նկարչական սնտուկի մը վրայ կաւիճով պրեց. «Մնաք բարով, սիրելիներ»։ Ան 44 տարեկան էր եւ հարուածուած էր այն բոլոր կարելի աղէտներէն, որոնք կրնային մարդ էակին վրայ ազդել. այսինքն՝ քաղցկեղէ, նեղացնող աղքատութենէ եւ ընտանեկան քայքայումէ։ Հայաստան անցուցած մանկութենէն սկսեալ իր կեանքը անապահովութիւններու շարք մը եղած էր. հոնկէ մազապուրծ փրկուած էր 1915ի թրքական ջարդերէն։ Ան դադարական մըն էր, թափառական մը եւ իր հպարտութեան ու դժուարահաճութեան պատճառաւ անձկութեան դատապարտուած բնական ազնուական մը։ Նաեւ, ամէն կասկածէ վեր, Նիւ Եորք ապրած (ուր հաստատուած էր 1920ին) ամէնէն տաղանդաւոր արուեստագէտներէն մէկը։

Կորջիի արուեստը անդնահասակի նշանակութիւն ունէր ամերիկեան արդի արուեստին համար։ Այդ վաստակը Հասանքի կամուրջ մը կազմեց եւրոպական արդիապաշտութեան (մասնաւորաբար՝ գերբրապաշտութեան) եւ վերա-

ցական արտայայտապաշտութեան միջին։ Նիւ Եորքի Դպրոցին արուեստագէտներուն գրեթէ բոլորը, սկսելով Ռեյլեյմ աը Քոննիկէն եւ Ճէջըն Փոլլոքէն, որոշ շափով մը ազատագրուած եւ ներշնչուած էին իր օրինակէն։ Իր գործին տարողութիւնը այժմ կարելի է տեսնել Նիւ Եորք քաղաքի «Կիւկէնհէիմ» թանգարանին մէջ արուած իր գործերուն ցուցահանդէսին միջոցաւ։ Արուեստի պատմադէս Տայան Ուալտմանի կողմէ կազմակերպուած՝ «Արշիլ Կորջի, 1904էն 1948 — յետադարձ ակնարկ մը» ցուցահանդէսը կը պարփակէ 250 նկարներ ու զձագրութիւններ եւ, վստահաբար, յաւաքիկայ տարիներուն համար հիմնական պատկերացումը պիտի բերէ այս տրնշութեամբ։

Կորջիի իսկական անունը Ոստանիկ Ասույեան էր։ Հայրը՝ կահազործ Հայաստանի մէջ, մայրը՝ զաւակը մանր ազնուականներէ ու քահանաներէ սերած ընտանիքի մը։ Ան՝ տիեզերական մարտահրաւէր կարդացող ժեսթով մը վերանուանեց ինքզինք։ «Արշիլ» — ինչպէս ինք կը բացատրէ — ուսներէն ձեւն է Աքիլլէսի եւ զրոյ Մաքսիմ Կորջին, այդ օրերուն, ձախի ծանօթ հերոսներէն մէկն էր (Կորջի՝ Մաքսիմի զրշանունն էր Նաեւ, որ կը նշանակէր «դառն»)։ Ար-

լի է Կորզիի բարեկամներին ո՛չ ոք անշուշտ կը հաւատար, թէ ան ուս է. սակայն անունը զիչ ժը համբաւ կրնար ապահովել իրեն: Այս մէկը կապ ունէր իր շատ մը անփաստ սուտերուն հետ. օրինակ, թէ ուսանած էր Քանտինսկիի ծօա: Բայց կ'աւելցնէր վիպապաշտ օտարական մը բլլալու իրմէ եկած տպաւորութիւնը: Արդ, Գառն Աքիլլէսը պիտի տեսնուէր Նիւ Եորքի մէջ (կամ ինք միամիտ կերպով աշիպէս կը յուսար), իբրեւ հայ Զայլտ Նարոյլտ մը եւ վերամբարձ արարած մը՝ ենթադրական ծնունդով. առանց պայտասակի՝ բացի իր եւրոպականութեան հեղինակութենէն. առանց անցադրի՝ բացի արդիականութենէն:

Քոստանական թուականներուն՝ իբրեւ ուսանող եւ ապա ուսուցիչ, Կորզի իբևտ էր ինքն իրեն հանդէպ: Իր կարգապահութեան կորիզը կը կաղմէր այն հաստաքը, թէ արուեստի պատմութիւնը շարունակական է եւ հիմնական ո՛չ մէկ ընդմիջում կատարուած էր եւրոպական դասականութեան բարձր աննպաստութիւններուն (դրսեւորուած Փասլոյ Ուշէլլոյի կողմէ՝ 15րդ դարուն, եւ Ինկրէսի՝ 19րդ դարուն, որոնց նկատմամբ պաշտամունք ունէր) եւ արդիականութեան զլխաւոր հայրերուն աշխատանքին միջեւ. այսինքն՝ Սեզանի, Կոկէնի, Մաթիսի եւ Փեքսսոյի գործերուն: Հասկնալու համար անոնցմէ մէկը, պէտք է որ աշխատէիր միևսին ընդմէջէն: Կորզի պատրանքներ չունէր նման աշխատանքի մը խելիք ժամանակին նկատմամբ: Փաստօրէն, ժօտաւարապէս 20 տարի առաւ, մինչեւ որ պատկերային ինքնուրոյն շարահիւսութիւն մը գտնէ: Հոն հասնելու համար, ան պարզապէս անտեսեց ամերիկեան արուեստին մէջ տիրող ուղղափառ օրէնքները: Այսինքն՝ տեղայնականութիւնն ու զընկերային յանձնառութիւնը: Կրանդ Վուտի նման արուեստագէտներու հայրենասիրութիւնը — Արքատիւս մը՝ կոճղերով եւ ահօսուած բյուրեղներով — շատ զիչ բան կ'ըսէր այս ներահայեաց, թրքական խաւարէն փրկկրած դոյատուողին համար: Հռչակա-

ւոր արտայայտութեամբ մը, Կորզի ամբողջովին անտեսեց 30ական թուականներու նկարչութեան ընկերայինի ու քաղաքականի միջեւ ծաւալող տարողութիւնը, որ կը բացատրուէր իբրեւ զազրատ արուեստը՝ աղքատներուն համարս: Իբրեւ ժանուկ՝ ան բաւարար չափով քաղաքական սարսափ ճաշակած էր, որով՝ չէր կրնար հաւատալ, թէ պատատ մը կրնայ պատմութեան եւ անոր զոհերուն միջեւ կենալ:

Կորզիի երեսասարդութեան աստուածը Սեզանն էր: Հետաքրքրական է տեսնել, թէ ինչպէս իր սեղանեան հոմաձմեռներուն առանձնայատկութիւնները կը վերայայտնուին իբրեւ կազմական մտքիփնէք, Կորզիի հասուն շրջանի ներկարչութեան մէջ. փոխուած՝ սակայն ճանաչելի: Իր համարումը՝ պրկուած ձեւերու զնեւարձութիւններուն», ծառերու եւ հեղեղաներու Հանդոյցներուն, որոնք կ'երեւին սեղանեան ձեւով ճակատէն ներկայացուած գաշտանկաներու մէջ, տեսանելի կը մնան ճլնարըլ աէլարիմ կատարմ էջի (1944) նման գործերու աղիքային զուգահեցումներուն եւ ժակաշարութիւններուն (imbrications) մէջ: Հանդոյց, ապա տարածութիւն, որ բացուող ու գոցուող բոունցքի մը կըշտոյթը ունի:

1930ին սկսեալ, սպանացի երկու արուեստագէտներ՝ Փիքասոն ու զաթալանցի դերիբապաշտ Խուան Միրոն կ'իշխէին իր գործերուն վրայ: Քիւպիսք կարճ շրջանէ մը ետք, որ կ'իշխայ 20ական թուականներու վերջաւորութեան, բառին իսկական առումով Կորզի յանախուած էր արուեստի բովանդակութեան պերիպպաշտ խոստումով: Գերբապաշտ կերպարանափոխումը — անհատականութեան սահանքը, փորձառութեան տարբեր խաւերու միամուլումը՝ Փիքասոյի 30ական թուականներու սկզբնաւորութեան յայտնուած սպանական կամ յափըշտակող սեռականութեան մէջ, կամ Միրոյի ներկուած կրամները Պոչեան հրէշներուն — իտէալ ձեւն էր Կորզիի համար՝ աշխարհին փոխանցելու իրեն

համար թափանցելի իմաստը, որ ողորկած էր մանկութեան շրջանի յիշողութիւններով եւ խառնուած ու հարուածած՝ երեւակայութեամբ: «Ծրագները պաւստասագէտի վրձինին քիտտերը կը կազմեն, — կը գրէր 1924ին, իր գրուելը՝ Վարդուշին, — փորձելով քափանցել սովորականէն ու ծանօթէն անդին... կը քափանցեմ սահմանադիմ սահմանափակումներէն անդին եւ կը ստեղծեմ անսահմանը: Լեարդ: Ոսկրներ: Ալքրոզ ժայռեր, ալքրոզ բոյսեր եւ կենդանիներ... Ասոր համար սարսակամ եմ հայկազամ արուեստին: Ան ծնունդն է բազմաթիւ հալածաբիւններու, որոնք ըստ սեղծուած են ժողովրդային երեսակայութեան:

